1085

# ԴԱՍԱԳԻՐՔ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
ՍՏԵՓԱՆ Գ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ
ՅԱՋՈՐԴԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

1865

Gabriel Noradounian

26

la petitesse de Senékérim Patrique

c'est très-remarquable

[illegible]

très [illegible]

La grandesse de

Noradounian

Gabriel

# ԴԱՍԱԳԻՐՔ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

BELEDIYE
1085

# ԴԱՍԱԳԻՐՔ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
ՍՏԵՓԱՆ ՊԵՐՃ ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ
ՅԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ
1865

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ԱՌԱՋՆՈՅ

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. Տ. ՊՕՂՈՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

# Ա. Զ. Դ.

Հայերէն լեզուի Քերականութեան Դասագիրքս այս անգամ Չորրորդ տպագրութեամբ ի լոյս կ՚ընծայուի ։

Հետզհետէ չորս անգամ տպագրութիւնները · իրարմէ կարճ միջոցով, բաւական ապացոյց են Քերականութեանս գտած ընդունելութեանը ։ Արդէն Կ. Պոլսոյ և գաւառներու ազգային վարժարանաց մէջ Քերականութեան Դասագրքիս գործածութիւնն ընդունուած ըլլալով, գոհ ենք որ մեր մայրենի լեզուին ուսման ծառայեցինք, և Հայ մանկըտւոյն՝ նոյնին մէջ դիւրաւ զարգացմանը բառ մերում կարի ձեռնտու գտնուելու բաղդն ունեցած ենք, որ մեր նպատակն և ուրախութիւնն է ։

Ներկայ չորրորդ տպագրութիւնս քանի մը կարեւոր փոփոխութիւններ ունի, մանաւանդ Ազգային Ուսումնական Խորհրդոյ դիտողութեանց համաձայն ։ Յիշեալ Ազգային Խորհուրդը Քերականութեանս դիւրուսոյց պարզ և ամփոփ ընթացք մ՚ունենալը, և յարմար դասագիրք մ՚ըլլալը վաւերացուց ։

Կը յուսանք որ այս ալ իր առջիններուն բաղդին հանդիպելով, պատիւ կ՚ունենանք

*Աստուծոյ շնորհիւ ուրիշ նոր տպագրութիւններուն ալ հետզհետէ ձեռնարկել, և ազգային վարժարանաց մէջ մեր մայրենի լեզուին յառաջադիմութիւնը տեսնելով բերկրիլ և մխիթարուիլ։*

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

**1 *Հոկտ.* 1865**
**ԱՄԵՆԱՓՐԿՉԻ ՎԱՐԺԱՐԱՆ**
**Ի ՂԱԼԱԹԻԱ**



ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՒՈՅ

# ՍՈՒՐԷՆ ԱՆԴՐԷԱՍ Ց. ՓԱՓԱԶԵԱՆ

ԲԱԶՄԱՐԴՒՒՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԶՄՒՌՆԻՈՅ

1857

# ԴԱՍԱԳԻՐՔ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

1. Քերականութիւնը շիտակ խօսիլ և ուղիղ գրել կը սորվեցնէ։

2. Քերականութիւնը երկու մասի կը բաժնուի. ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ և ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ։

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

3. Խօսք մը բառերէ կը շինուի։

Հայերէն լեզուին բառերն ութ տեսակ են. Անուն, Դերանուն, Նախդիր, Բայ, Դերբայ, Մակբայ, Շաղկապ, Ձայնարկութիւն. որոնք Մասունք բանի կ'ըսուին։

## ԳԼՈՒԽ Ա.

## ԱՆՈՒՆ

4. Անունը բառ մ'է, որ կը ցուցնէ թէ բան մը ի՛նչ է կամ ի՛նչպէս է կամ ո՛րչափ է։

5. Բանի մը ինչ ըլլալը ցուցնող բառին Գոյական կ'ըսուի. և ինչպէս կամ որչափ ըլլալը ցուցնողին Ածական. ինչպէս՝ թէ որ ըսեմ Քաղաք, այս բառը կը ցուցնէ թէ շատ տներ մէկտեղ են. և թէ որ ըսեմ Մեծ քաղաք, հոս Մեծ բառը կը ցուցնէ թէ քաղաքը ինչպէս է։

6. Երկու կերպ գոյական անուն կայ. Յատուկ և Հասարակ։

7. Յատուկ կ'ըսուի այն գոյականը, որ միայն մէկի կը պատշաճի. ինչպէս են տեղի ու մարդու անունները. Կոստանդնուպօլիս, Երուսաղէմ, Էջմիածին, Հայկ (մեր Ազգին Նախահայրը իմանալով), Պարոյր (մեր առաջին Հայկազուն Թագաւորը), և այլն։ Ասոնք հասարակօրէն յոգնակի չունին։

8. Հասարակ կ'ըսուի այն գոյականը, որ մէկի ալ կ'ըսուի, շատի ալ. ինչպէս՝ Աստղ, Ծաղիկ, Մարդ հասարակ գոյական են. վասն զի ամէն աստղի՝ աստղ. ամէն ծաղկի՝ ծաղիկ, ամէն մարդու՝ մարդ կրնանք ըսել։

9. Որքանութիւն ցուցնող ածականներուն Թուական կ'ըսուի, որոնք երկու տեսակ են, Որոշեալ Թուական, ինչպէս են Մի, Երկու, Երեք, և այլն. և Անորոշ Թուական, ինչպէս են Ոմն, Ինչ, Այլ, և այլն։

10. Անուններն ունին Թիւ, Հոլով և Հոլովումն։

11. Թիւն երկու է, Եզակի և Յոգնակի։

Եզակին ձայնով մէկի կ'ըսուի. իսկ Յոգնակին՝ մէկէն շատին. ինչպէս՝ Եկեղեցի, մէկ

եկեղեցի նշանակելուն համար Եզակի է. Եկե-ղեցիք, եկեղեցիներ՝ մէկէն շատ եկեղեցի նշանակելուն համար Յոգնակի է: Բայց կայ անուն որ եզակի չունի, ինչպէս՝ աչք, աղօթք, որ եզակի աչ. աղօթ չըլլար, եւ կ՚ըսուի Անեզա-կան: Կայ հասարակ անուն ալ որ յոգնակի չու-նի, ինչպէս՝ խաւար, հարաւ որ յոգնակի խա-ւարք, հարաւք չըլլար:

12. Հոլով կ՚ըսուի անունին պէսպէս փոխուիլը, իր վերջը կամ սկիզբը գիր աւել-նալով:

13. Հայերէն լեզուի մէջ հոլովը վեց է. Ուղղական, Սեռական, Գործիական, Հայցական, Տրական, Բացառական:

14. Ամէն անուն մէկ կերպ չեն հոլովեր. այլ զանազան կերպով, եւ կ՚ըսուի Հոլովմունք. որ գլխաւոր եօթն են, որոնց օրինակները կարգաւ կը դնենք:

## 15. Ա. ՀՈԼՈՎՈՒՄՆ

### Եզակի

| | ԳՐԱԲԱՌ | ԱՇԽԱՐՀԱԲԱՌ | ՏԱՃԿԵՐԷՆ |
|---|---|---|---|
| Ուղղական. | բան. | խօսք. | սէօզ. |
| Սեռական. | բանի. | խօսքի. | սէօզիւն. |
| Գործիական. | բանիւ. | խօսքով. | սէօզ իլէ. |
| Հայցական. | զբան. | խօսքը. | սէօզիւ. |

| | | | |
|---|---|---|---|
| Տրական. | Բանի[1], | խօսքի. | սէօզէ. |
| | ի բան. | | |
| Բացառական. | ի Բանէ. | խօսքէ. | սէօզտէն. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղական. | Բանք. | խօսքեր. | սէօզլէր. |
| Սեռական. | Բանից. | խօսքերու. | սէօզլէրին. |
| Գործիական. | Բանիւք. | խօսքերով. | սէօզլէր իլէ. |
| Հայցական. | զԲանս. | խօսքերը. | սէօզլէրի. |
| Տրական. | Բանից, | խօսքերու. | սէօզլէրէ. |
| | ի բանս. | | |
| Բացառական. | ի Բանից. | խօսքերէ. | սէօզլէրտէն։ |

16. Այսպէս կը հոլովին շատ հասարակ անուններ. քանի մ'ալ յատուկ և անեղական բառեր, որոնցմէ քանի մը հատ դնենք կրթութեան համար։

| | | | |
|---|---|---|---|
| Արքայ, | արքայի. | Թագաւոր, | փատիշահ։ |
| Վարդ, | վարդի. | Վարդ, | կիւլ։ |
| Նետ, | նետի. | Նետ, | օգ։ |
| Տօն, | տօնի. | Տօն, | ղիննէր։ |
| Բանտ, | բանտի. | Բանտ, | զընտան։ |

Յատուկ անուանք

| | | |
|---|---|---|
| Եգիպտոս, | Եգիպտոսի. | Մըսըր։ |
| Մովսէս, | Մովսէսի. | Մովսէս մարգարէ։ |

Անեղական

| | | | |
|---|---|---|---|
| Աղօթք, | աղօթից. | աղօթք, | տուա։ |
| Հրաշք, | հրաշից. | հրաշք, | մուճիզէլէր։ |

[1] Տրականն երկու է, ներգործական և նախդրիւ. Բանին վերջահօդով տրականը բանի է. սակայն գրեթէ միշտ սեռական հոլովին նման կ'ըլլայ թէ՛ եզակի և թէ՛ յոգնակի ընդհանուր հոլովմանց մէջ. իսկ նախդրիւ տրականն՝ է ի բան։ Այս ի ին տեղ յ կը գրուի, երբ բառը ձայնաւոր գրով սկսի, ինչպէս՝ Արքայ ին նախդրիւ տրականը կ'ըլլայ յԱրքայ. Աղօթքին կ'ըլլայ յԱղօթս, ևայլն։

# 17. Բ. ՀՈԼՈՎՈՒՄՆ

## Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Քաղաք. | քաղաք. | շէհիր. |
| Սեռ. | Քաղաքի. | քաղաքի. | շէհիրին. |
| Գործ. | Քաղաքաւ. | քաղաքով. | շէհիր իլէ. |
| Հայց. | զՔաղաք. | քաղաքը. | շէհիրի. |
| Տրա. | Քաղաքի, | քաղաքի. | շէհիրէ. |
| | ի քաղաք. | | |
| Բաց. | ի Քաղաքէ. | քաղաքէ. | շէհիրտէն. |

## Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Քաղաքք. | քաղաքներ. | շէհիրլէր. |
| Սեռ. | Քաղաքաց. | քաղաքներու. | շէհիրլէրին. |
| Գործ. | Քաղաքօք. | քաղաքներով. | շէհիրլէր իլէ. |
| Հայց. | զՔաղաքս. | քաղաքները. | շէհիրլէրի. |
| Տրա. | Քաղաքաց, | քաղաքներու. | շէհիրլէրէ. |
| | ի քաղաքս. | | |
| Բաց. | ի Քաղաքաց. | քաղաքներէ. | շէհիրլէրտէն: |

18. Այս հոլովման տակ կ'երթան ընդհանրապէս ակ, ան, ճան, րան, ուր, որդ, ոց, ու, ող ևայլն մասնիկներ ունեցող բառերը, և ուրիշ բառեր ալ, որոնցմէ քանի մը հատ դնենք կրթութեան համար:

| | | | |
|---|---|---|---|
| Ժամանակ, | ժամանակի. | ատէն, | վաքըթ: |
| Զօրական, | զօրականի. | զինուոր, | ասքէր: |
| Աւազան, | աւազանի. | աւազան, | հաւուզ: |
| Թագաւոր, | թագաւորի. | թագաւոր, | փատիշահ: |
| Կշռորդ, | կշռորդի. | կշեռք, | թէրազի: |

## Յատուկ անուանք

| | | | |
|---|---|---|---|
| Հայաստան, | Հայաստանի. | Հայաստան աշխարհ. | Էրմէնիսթան: |
| Երուսաղէմ, | Երուսաղէմի. | Երուսաղէմ քաղաք. | Գուտիւս շէրիֆ: |

## Անեզականք

| | | | |
|---|---|---|---|
| Կամք, | կամաց. | կամք, | կէօյն: |
| Աչք, | աչաց. | աչք, | կէօզ: |
| Փառք, | փառաց. | փառք, շան, | շէօհրէթ: |

## 19. Գ. ՀՈԼՈՎՈՒՄՆ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | գետ. | գետ. | չայ. |
| Սեռ. | գետոյ. | գետի. | չայըն. |
| Գործ. | գետով. | գետով. | չայըլա. |
| Հայց. | զգետ. | գետը. | չայը. |
| Տր. | գետոյ, | գետի. | չայա. |
| | ի գետ. | | |
| Բաց. | ի գետոյ. | գետէ. | չայտան. |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | գետք. | գետեր. | չայլար. |
| Սեռ. | գետոց. | գետերու. | չայլարըն. |
| Գործ. | գետովք. | գետերով. | չայլարըլա. |
| Հայց. | զգետս. | գետերը. | չայլարը. |
| Տր. | գետոց, | գետերու. | չայլարա. |
| | ի գետս. | | |
| Բաց. | ի գետոց. | գետերէ. | չայլարտան։ |

20. Այս հոլովման տակ կ'երթան ընդհանրապէս է վերջաւորած միավանկ բառերը և սովորաբար ե՛ն, ու՛ն, է՛ալ մասնիկ ունեցողները, ուրիշ շատ բառեր ալ. որոնցմէ քանի մը հատ դնենք կրթութեան համար։

| | | | |
|---|---|---|---|
| Ձի, | ձիոյ. | ձի. | աթ։ |
| Խոտ, | խոտոյ. | խոտ, | օթ։ |
| Գործ, | գործոյ. | գործ. | իշ։ |
| Ծեր, | ծերոյ. | ծեր, | իհթիեար։ |
| Տղայ, | տղայոյ. | տղայ. | չօճուգ։ |

### Յատուկ անուն

| | | | |
|---|---|---|---|
| Կարին, | կարնոյ, | Կարին քաղաք, | Էրզրում։ |

### Անեզական

| | | | |
|---|---|---|---|
| Պահք, | պահոց. | պահք. | փէրհիզ։ |
| Դժոխք, | դժոխոց. | դժոխք, | ճէհէննէմ։ |

## 21. Դ. ՀՈԼՈՎՈՒՄՆ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Բարի. | աղէկ. | էյի. |
| Սեռ. | Բարւոյ. | աղէկի. | էյինին. |
| Գործ. | Բարեաւ. | աղէկով. | էյի իլէ. |
| Հայց. | զԲարի. | աղէկը. | էյիի. |
| Տր. | Բարւոյ, | աղէկի. | էյիէ. |
| | ի բարի. | | |
| Բաց. | ի Բարւոյ. | աղէկէ. | էյիտէն. |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Բարիք. | աղէկներ. | էյիլէր. |
| Սեռ. | Բարեաց. | աղէկներու. | էյիլէրին. |
| Գործ. | Բարեօք. | աղէկներով. | էյիլէր իլէ. |
| Հայց. | զԲարիս. | աղէկները. | էյիլէրի. |
| Տր. | Բարեաց. | աղէկներու. | էյիլէրէ. |
| | ի բարիս. | | |
| Բաց. | ի Բարեաց. | աղէկներէ. | էյիլէրտէն: |

22. Այս հոլովման տակ կ'երթան ընդհանրապէս՝ մէկ վանկէն աւելի ի վերջաւորած բառերը. որոնցմէ քանի մը հատ դնենք կրթութեան համար:

| | | | |
|---|---|---|---|
| Եկեղեցի, | եկեղեցւոյ. | եկեղեցի, | քիլիսէ: |
| Այգի, | այգւոյ. | էգի, | պաղ. |
| Գինի, | գինւոյ. | գինի, | շարապ: |
| Տեղի, | տեղւոյ. | տեղ. | եէր: |
| Սիրելի, | սիրելւոյ. | սիրելի, | սէվիմլու: |

### Անեզականք

| | | | |
|---|---|---|---|
| Երախտիք, | երախտեաց. | երախտիք, | էյլիք, նիյմէթ: |
| Ընթրիք, | ընթրեաց. | ընթրիք, | աքշամ թաամը: |
| Կարծիք, | կարծեաց. | կարծիք, | րաէյին: |

## 23. Ե. ՀՈԼՈՎՈՒՄՆ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Ջարդ. | ջարդ. | թէւղէն. |

| | | | |
|---|---|---|---|
| Սեռ. | Զարդու. | զարդի. | փիւչէնին. |
| Գործ. | Զարդով. | զարդով. | փիւչէն իլէ. |
| Հայց. | զԶարդ. | զարդը. | փիւչէնի. |
| Տրա. | Զարդու, | զարդի. | փիւչէնէ. |
| | ի զարդ. | | |
| Բաց. | ի Զարդէ. | զարդէ. | փիւչէնտէն. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Զարդք. | զարդեր. | փիւչէնլէր. |
| Սեռ. | Զարդուց. | զարդերու. | փիւչէնլէրին. |
| Գործ. | Զարդուք. | զարդերով. | փիւչէնլէր իլէ. |
| Հայց. | զԶարդս. | զարդերը, | փիւչէնլէրի. |
| Տրա. | Զարդուց, | զարդերու. | փիւչէնլէրէ. |
| | ի զարդս. | | |
| Բաց. | ի Զարդուց. | զարդերէ. | փիւչէնլէրտէն։ |

24. Այս հոլովման տակ կ'երթան շատ բառեր. որոնցմէ քանի մը հատ դնենք կրթութեան համար։

| | | | |
|---|---|---|---|
| Զգեստ, | զգեստու. | հագուստ, | ճապպա։ |
| Առաւօտ, | առաւօտու. | առտու, | սապահ։ |
| Ժամ, | ժամու. | ժամ, | սահաթ։ |
| Ծով, | ծովու. | ծով, | տէնիզ։ |
| Գանձ, | գանձու. | գանձ, | խազնէ։ |

Յատուկ անուանք

| | | |
|---|---|---|
| Ղուկաս, | ղուկասու. | Ղուկաս աւետարանիչ։ |
| Աբրահամ, | աբրահամու. | Հայր Աբրահամ նահապետ։ |

Անեզականք

| | | | |
|---|---|---|---|
| Բարք, | բարուց. | բարք, | [illegible]։ |
| Պարտք, | պարտուց. | պարտք, | պօրճ։ |

25. ՓՈՔՐ. պզտիկ, քիւչիւք։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Փոքր. | Փոքրունք. |
| Ս. | Փոքրու. | Փոքրունց. |

| | | |
|---|---|---|
| Գ. | փորով. | փորովք. |
| Հ. | զփոր. | զփորս. |
| Տ. | փորու, ի փոր. | փորուց, ի փորս. |
| Ի. | ի փորուէ. | ի փորուց։ |

Ասանկ կը հոլովին քանի մը ըր վերջով բառեր.

Թանձր, ձու, Թանձուանք, ձուոց. Բանջր, գալըռ, գառալ։
Մայր, մանու, մանուանք, մանուանց. Տանր, ուփագ։
Ծամր, ծամու, ծամուանք, ծամուանց. Ծանր, աղբր։
Քաղցր, քաղցու, քաղցուանք, ցանց. անուղ, Բանբեր։

## 26. Զ. ՀՈԼՈՎՈՒՄՆ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Սերմն. | հոանոս. | Բօհոամ. |
| Սեռ. | Սերման. | հոանոսէ. | Բօհոամոան։ |
| Գործ. | Սերմամբ. | հոանոսով. | Բօհոամ իշէ. |
| Հայց. | զՍերմն. | հոանոսը. | Բօհոամը. |
| Տրա. | Սերման, ի սերմն. | հոանոսէ. | Բօհոամա. |
| Բաց. | ի Սերմանէ. | հոանոսէ. | Բօհոամեան. |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Սերմունք. | հոանոսեր. | Բօհոամեար. |
| Սեռ. | Սերմանց. | հոանոսերու. | Բօհոամեարըն. |
| Գործ. | Սերմամբք. | հոանոսերով. | Բօհոամեարըլա. |
| Հայց. | զՍերմունս. | հոանոսերը. | Բօհոամեարը. |
| Տրա. | Սերմանց, ի սերմունս. | հոանոսերու. | Բօհոամեարա. |
| Բաց. | ի Սերմանց. | հոանոսերէ. | Բօհոամեարեան։ |

27. Ասանկ կը հոլովին ըն վերջաւորած բառերը, որոնց մէ քանի մը հոս դնենք կրթութեան համար։

Արեգակն, արեգական. արև, ժէնէշ։
Հիմն, հիման. ձիմ, ըշմէշ։
Աղեղն, աղեղան. աղեղ, էայ։

| | | | |
|---|---|---|---|
| Որդն , | որդան · | որդ , | գուրթ : |
| Ամառն , | ամարան[1] · | ամառ · | եազ : |
| Ձմեռն , | ձմերան · | ձմեռ , | գըշ : |

Յատուկ անուանք

| | | |
|---|---|---|
| Գողթն , | գողթան · | Գողթըն գաւառը : |
| Ծաղկոտն , | ծաղկոտան · | Ծաղկոտըն ջօր : |

Անեզականք

| | | | |
|---|---|---|---|
| Արտեւանունք , | արտեւանանց · | ալեօ թարթիչներ , | քիրփիք : |
| Իրաւունք , | իրաւանց · | իրաւունք , | հագ : |

28 · ՆԵՂՈՒԹԻՒՆ · նեղութիւն · սըգլէթ , սըգընթը :

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո · | նեղութիւն · | նեղութիւնք · |
| Ս · | նեղութեան · | նեղութեանց · |
| Գ · | նեղութեամբ · | նեղութեամբք · |
| Հ · | զնեղութիւն · | զնեղութիւնս · |
| Տ · | նեղութեան , | նեղութեանց , |
| | ի նեղութիւն · | ի նեղութիւնս · |
| Բ · | ի նեղութենէ · | ի նեղութեանց : |

29 · Այսանկ կը հոլովին իւն վերջաւորած բառերը · որոնց մէ քանի մը հոս դնենք կրթութեան համար :

| | | | |
|---|---|---|---|
| Զօրութիւն , | զօրութեան · | ուժ , | գուվվէթ : |
| Մեծութիւն , | մեծութեան · | մեծութիւն , | պէօյիւքլիւք : |
| Արիւն , | արեան · | արիւն , | գան : |
| Գոհութիւն , | գոհութեան · | շնորհակալութիւն , | շիւքիւր : |
| Գողութիւն , | գողութեան · | գողութիւն , | խըրսըզլըգ : |

30 · ԵԶՆ · եզ · էօքիւզ :

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո-ղ · | Եզն · | Եզինք · |
| Սե- · | Եզին · | Եզանց · |

[1] Հայ լեզուի մէջ ընիկ ն գրէն առաջ ր գրով ըլլալու բառերը միշտ ռ ով կը գրուին · ուստի առանկներէն ոմանց ռ գիրն ալ ն էն հեռացած ատենը ր ի կը փոխուի :

| | | |
|---|---|---|
| Գործ. | եղամբ. | եղամբք. |
| Հայց. | զեղն. | զեղինս. |
| Տրա. | եղին, յեղն. | եղանց, յեղինս. |
| Բաց. | յեղանէ. | յեղանց: |

31. Ասոր նման՝ Սերք են քիչ տարբերութեամբ կը հոլովին ըն վերջաւորած մէկ քանի բառեր, ինչպէս՝

| | | | |
|---|---|---|---|
| Գառն, | գառին. | Գառ, | գուզու: |
| Բեռն, | բեռին. | Բեռ, | եիւք: |
| Խաշն, | խաշին. | Գօյուն վէ քէչի սիւրիւսիւ: | |

## 32. Է. ՀՈԼՈՎՈՒՄՆ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Համր. | Մունջ. | դիլսիզ. |
| Սեռ. | Համեր. | Մունջի, | դիլսիզին. |
| Գործ. | Համերբ. | Մունջով. | դիլսիզ իլէ. |
| Հայց. | զ Համր. | Մունջը. | դիլսիզի. |
| Տրա. | Համեր, ի համր. | Մունջի. | դիլսիզէ. |
| Բաց. | ի Համերէ. | Մունջէ. | դիլսիզդէն. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Համերք. | Մունջեր. | դիլսիզլէր. |
| Սեռ. | Համերց. | Մունջերու. | դիլսիզլէրին. |
| Գործ. | Համերբք. | Մունջերով. | դիլսիզլէր իլէ. |
| Հայց. | զ Համերս. | Մունջերը. | դիլսիզլէրի. |
| Տրա. | Համերց, ի համերս. | Մունջերու. | դիլսիզլէրէ. |
| Բաց. | ի Համերց. | Մունջերէ. | դիլսիզլէրդէն: |

33. Ասանկ կը հոլովին ըր, ըղ վերջաւորած[1] բառերը, որոնցմէ քանի մը հատ դնենք կրթութեան համար:

| | | | |
|---|---|---|---|
| Ոսկր, | ոսկեր. | ոսկոր, | քէմիք: |
| Ուստր, | ուստեր. | Մանչ զաւակ, | օղլան: |

[1] Շատ քիչ ալ ի-ով վերջաւորածներ կը հոլովին, որոնք տես երես 19:

| | | | |
|---|---|---|---|
| Վարդ, | վարդեր . | Չաքէր , | թաճըլան : |
| Աստղ, | աստեղք . | աստղ , | եըլտըզ : |
| Անգղ, | անգեղք . | անգղ թռչուն . | ագպապա : |

---

## 34. ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

| | Ա. | Բ. |
|---|---|---|
| | Եզակի անյոգնական | Եզակի անյոգնական |
| Ուղ. | Հայկ . | Հռիփսիմէ . |
| Սեռ. | Հայկայ . | Հռիփսիմեայ . |
| Գործ. | Հայկաւ . | Հռիփսիմեաւ . |
| Հայց. | զՀայկ . | զՀռիփսիմէ . |
| Տրա. | Հայկայ , | Հռիփսիմեայ , |
| | ի Հայկ . | ի Հռիփսիմէ . |
| Բաց. | ի Հայկայ : | ի Հռիփսիմեայ : |

35. Վերը եօթը հոլովմանց կարգին մէջ տեսանք այնպիսի յատուկ անուններ, որոնք անոնցմէ ամէն մէկին վրայ սեփական կը հոլովէին. բայց ընդհանրապէս յատուկ անունները այս երկու հոլովմանց վրայ կ՚երթան. և եթէ յոգնակի ալ չունել պէտք ըլլայ, երկրորդ հոլովման պէս կը ձևանան: Կրթութեան համար քանի մը յատուկ անուններ դնենք:

| | | |
|---|---|---|
| Արամ, | արամայ . | Արամ նահապետը : |
| Այրարատ | այրարատայ . | Այրարատ նահանգը : |
| Մեսրոպ, | մեսրոպայ . | Ս. Մեսրոպ վարդապետը : |
| Սահակ , | սահակայ . | Ս. Սահակ հայրապետը : |
| Գայիանէ , | գայիանեայ . | Ս. Գայիանէ կոյսը : |
| Հեղինէ , | հեղինեայ . | Ս. Հեղինէ թագուհին : |
| Օգոստոս , | օգոստեայ . | Օգոստոս կայսրը : |
| Սոկրատէս , | սոկրատեայ . | Սոկրատէս փիլիսոփայն : |

---

## 36. ԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Քանի մը բառեր կան, որոնց հոլովմունքը եօթը հոլովմունքներէն դուրս է, թէպէտ տեղ տեղ մէկուն կամ մէկալին նմանութիւնք կը գտնուին, և ասոնք են :

37. ԱՅՐ. [illegible]

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Այր. | [illegible] | [illegible] |
| Ս. | Առն. | [illegible] | [illegible] |
| Գ. | Արամբ. | [illegible] | [illegible] |
| Հ. | զԱյր. | [illegible] | [illegible] |
| Տ. | Առն, յայր. | [illegible] | [illegible] |
| Բ. | յԱռնէ. | [illegible] | [illegible] |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Արք. | [illegible] | [illegible] |
| Ս. | Արանց. | [illegible] | [illegible] |
| Գ. | Արամբք. | [illegible] | [illegible] |
| Հ. | զԱրս. | [illegible] | [illegible] |
| Տ. | Արանց, յարս. | [illegible] | [illegible] |
| Բ. | յԱրանց. | [illegible] | [illegible] |

38. ՏէՐ. [illegible]

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Տէր. | [illegible] | [illegible] |
| Ս. | Տեառն. | [illegible] | [illegible] |
| Գ. | Տերամբ. | [illegible] | [illegible] |
| Հ. | զՏէր. | [illegible] | [illegible] |
| Տ. | Տեառն, ի տէր. | [illegible] | [illegible] |
| Բ. | ի Տեառնէ. | [illegible] | [illegible] |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Տեարք. | [illegible] | [illegible] |
| Ս. | Տերանց. | [illegible] | [illegible] |
| Գ. | Տերամբք. | [illegible] | [illegible] |

| | | | |
|---|---|---|---|
| Հ. | զՏեարս. | տէրերը. | ասհապլարը. |
| Տ. | Տերանց, ի տեարս. | տէրերու. | ասհապլարա. |
| Բ. | ի Տերանց. | տէրերէ. | ասհապլարտան: |

39. ՀԱՅՐ. հայր, փէտէր:

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Հայր. | հայր. | փէտէր. |
| Ս. | Հօր. | հօր. | փէտէրին. |
| Գ. | Հարբ. | հօրմով. | փէտէր իլէ. |
| Հ. | զՀայր. | հայրը. | փէտէրի. |
| Տ. | Հօր, ի հայր. | հօր. | փէտէրէ. |
| Բ. | ի Հօրէ. | հօրմէ. | փէտէրտէն. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Հարք. | հայրեր. | փէտէրլէր. |
| Ս. | Հարց. | հայրերու. | փէտէրլէրին. |
| Գ. | Հարբք. | հայրերով. | փէտէրլէր իլէ. |
| Հ. | զՀարս. | հայրերը. | փէտէրլէրի. |
| Տ. | Հարց, ի հարս. | հայրերու. | փէտէրլէրէ. |
| Բ. | ի Հարց. | հայրերէ. | փէտէրլէրտէն: |

40. Միշտ ասոր նման կը հոլովին ՄԱՅՐ, անա, ԵՂԲԱՅՐ, գարտաշ:

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Մայր. | Մարք. | Եղբայր. | Եղբարք. |
| Ս. | Մօր. | Մարց. | Եղբօր. | Եղբարց. |
| Գ. | Մարբ. | Մարբք. | Եղբարբ. | Եղբարբք. |
| Հ. | զՄայր. | զՄարս. | զԵղբայր. | զԵղբարս. |
| Տ. | Մօր, ի մայր. | Մարց, ի մարս. | Եղբօր, յեղբայր. | Եղբարց, յեղբարս. |
| Բ. | ի Մօրէ. | ի Մարց: | յԵղբօրէ. | յԵղբարց: |

41. ԿԻՆ. կնիկ, գարը:

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | կին. | կնիկ. | գարը. |
| Ս. | կնոջ. | կնկան. | գարընըն. |
| Գ. | կնաւ. | կնիկով. | գարըյըլա. |
| Հ. | զ կին. | կնիկը. | գարըյը. |
| Տ. | կնոջ, | կնկան. | գարըյա. |
| | ի կին. | | |
| Բ. | ի կնոջէ. | կնիկէ. | գարըտան. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | կանայք. | կնիկներ. | գարըլար. |
| Ս. | կանանց. | կնիկներու. | գարըլարըն. |
| Գ. | կանամբք. | կնիկներով. | գարըլարըլա. |
| Հ. | զ կանայս. | կնիկները. | գարըլարը. |
| Տ. | կանանց, | կնիկներու. | գարըլարա. |
| | ի կանայս. | | |
| Բ. | ի կանանց. | կնիկներէ. | գարըլարտան: |

42. Նոյն նման կը հոլովի ՏԻԿԻՆ. Մեծ կին, խաթուն, հանըմ:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տիկին. | Տիկնայք. |
| Ս. | Տիկնոջ. | Տիկնանց. |
| Գ. | Տիկնաւ. | Տիկնամբք. |
| Հ. | զՏիկին. | զՏիկնայս. |
| Տ. | Տիկնոջ, ի տիկին. | Տիկնանց, ի տիկնայս. |
| Բ. | իՏիկնոջէ. | իՏիկնանց: |

43. ՔՈՅՐ. քոյր, գըզգարտաշ:

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Քոյր. | քոյր. | գըզգարտաշ. |

| | | | |
|---|---|---|---|
| Ս. | քեռ. | քրոջ. | գըզգարտաշըն. |
| Գ. | քերբ. | քրոջմով. | գըզգարտաշըլա. |
| Հ. | զքոյր. | քոյրը. | գըզգարտաշը. |
| Տ. | քեռ, ի քոյր. | քրոջ. | գըզգարտաշա. |
| Բ. | ի քեռէ, | քրոջմէ. | գըզգարտաշտան. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Քորք. | քուրէր. | գըզգարտաշլար. |
| Ս. | քերց. | քուրէրու. | գըզգարտաշլարըն. |
| Գ. | քերբք. | քուրէրով. | գըզգարտաշլարըլա. |
| Հ. | զքորս. | քուրէրը. | գըզգարտաշլարը. |
| Տ. | քերց, ի քորս. | քուրէրու. | գըզգարտաշլարա. |
| Բ. | ի քերց. | քուրէրէ. | գըզգարտաշլարտան: |

44. ՕՐ. օր, կիւն:

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Օր. | օր. | կիւն. |
| Ս. | Աւուր. | օրի. | կիւնիւն. |
| Գ. | Աւուրբ. | օրով. | կիւն իլէ. |
| Հ. | զՕր. | օրը. | կիւնի. |
| Տ. | Աւուր, յօր. | օրի. | կիւնէ. |
| Բ. | յՕրէ. | օրէ. | կիւնտէն. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Աւուրք. | օրեր. | կիւնլէր. |
| Ս. | Աւուրց. | օրերու. | կիւնլէրին. |
| Գ. | Աւուրբք. | օրերով. | կիւնլէր իլէ. |
| Հ. | զԱւուրս. | օրերը. | կիւնլէրի. |
| Տ. | Աւուրց, յաւուրս. | օրերու. | կիւնլէրէ. |
| Բ. | յԱւուրց. | օրերէ. | կիւնլէրտէն: |

45. ԳԻՒՂ. Գիւղ, քէօյ. միայն եզակին մէջ արտասովոր է։

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Գիւղ. | Գիւղք. |
| Ս. Գեղջ. | Գիւղից. |
| Գ. Գիւղիւ. | Գիւղիւք. |
| Հ. զԳիւղ. | զԳիւղս. |
| Տ. Գեղջ, ի գիւղ. | Գիւղից, ի գիւղս. |
| Բ. ի Գեղջէ. | ի Գիւղից։ |

46. ՏԻՒ. ցորեկ, կիւնտիւզ. աս ալ միայն եզակի ունի։

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Տիւ. | Տիւք. |
| Ս. Տուընջեան. | — |
| Գ. Տուընջեամբ. | — |
| Հ. զՏիւ. | զՏիւս. |
| Տ. Տուընջեան, ի տիւ. | — |
| Բ. ի Տուընջենէ. | — |

---

## 47. ԳԻՏԵԼԻՔ ՀՈԼՈՎՄԱՆՑ ՎՐԱՅ

Ա. Կան անանկ բառեր որ հոլովելու ատեն՝ իրենց ետքի բաղաձայնէն առաջ եղած ձայնաւոր գիրն ուրիշ ձայնաւորի հետ կը փոխեն.

Է կը փոխուի Ի, Ե. Սէր. սիրոյ. Եղէգն, եղեգան։
Ի, ՈՒ կը փոխուին Ը չգրուած. Գիր, գրոյ. Ջուր, ջրոյ։ Ասիկա երկու բաղաձայնի մէջ եղած ատեննին կ՚ըլլայ. իսկ միավանկներու սկզբնատառ ըլլանէ ոմանց կը փոխուի և ոմանց ոչ. Ինչպէս, Ինձ, ընձու. Իղձ, ըղձի։ Իժ, իժի. Իլ, իլոյ։ Ուղտ, ըղտու. Ունդ, ընդոյ։ Ուլ, ուլու. Ուշ, ուշոյ։ գլոյ. Բու, բուոյ. Նու, նուոյ։

ԻՒ կը փոխուի ՈՒ. Հովիւ, հովուի։

ԵԱ կը փոխուի Ե, Է. Ատեան, ատենի. Հրեայ, հրէի.
ՈՅ կը փոխուի ՈՒ. Լոյս, լուսոյ։

Իսկ ա, է, ո, օ, իւ, բաղաձայն գրով մը վերջաւորածները սովորաբար չեն փոխուիր, ինչպէս վերը հոլովմանց օրինակներուն մէջ տեսնուեցաւ։ Հիմա իւրաքանչիւր օրինակներուն վրայ փոփոխութեան ենթակայ եղողներէն քանի մը բառ դնենք կրթութեան համար։

Բանին վրայ.

| | | | |
|---|---|---|---|
| Սիրտ, | սրտի. | սիրտ, | եուրէք։ |
| Հանդէս, | հանդիսի. | հանդէս, | դիւղիւն։ |
| Ողջոյն, | ողջունի. | բարև, | սէլամ։ |
| Հրէայ, | հրէի. | հրէայ, | եահուտի։ |

Բաղանիքին վրայ.

| | | | |
|---|---|---|---|
| Դահիճ, | դահճի. | դահիճ, | ճէլլատ։ |
| Աղմուկ, | աղմկի. | աղմուկ, | ղէլղէլէ։ |
| Պարտէզ, | պարտիզի. | պարտէզ, | պահճէ։ |
| Հովիւ, | հովուի. | հովիւ, | չօպան։ |
| Մակոյկ, | մակուկի. | նաւակ, | սանտալ։ |
| Որդեակ, | որդեկի. | զաւակ, | օղուլ։ |

Գետին վրայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մարմին, | մարմնոյ. | մարմին, | թէն։ |
| Խորհուրդ, | խորհրդոյ. | խորհուրդ, | մուշավէրէ։ |
| Զուարթուն, | զուարթնոյ. | արթուն, | այըգ։ |
| Սէր, | սիրոյ. | սէր, | մուհապպէթ։ |
| Պատիւ, | պատուոյ. | պատիւ, | իզզէթ։ |
| Յոյս, | յուսոյ. | յոյս, | ումուտ։ |
| Առաքեալ, | առաքելոյ. | խրկուած, | ռէսուլ։ |

Բարքին վրայ չկայ.

Ձայնին վրայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ինձ, | ընձու. | ինձ, | գաբլան։ |
| Ցուլ, | ցլու. | ցուլ, | պուղայ։ |
| Ձէն, | ձէնու. | ձէն, | սէս։ |

Սերմին վրայ.

| | | | |
|---|---|---|---|
| Սկիզբն, | սկզբան. | սկիզբ, | էվվէլ։ |
| Թիկն, | թիկան. | թեւ, կռնակ, | օմուզ պաշը։ |

| | | | |
|---|---|---|---|
| Եղունգն, | եղնգան · | եղնգէ · | եղունգը : |
| Գառն, | գառան · | գառնէ, | գառնու : |
| Պաշտօն, | պաշտաման · | պաշտօնէ, | պաշտօնէն : |

## Հայրին վրայ ·

| | | | |
|---|---|---|---|
| Հայր, | հօր · | հօրէ : | |
| Դուստր, | դստեր · | աղջիկ զաւակ · | դուստրը : |
| Աներ, | աներ · | աներոջ · | առն : |
| Ամուսին, | ամուսն · | ամուսնոջ, | կնոջ : |

Բ. Գիտնալ պէտք է նաև թէ քանի մը հոլովմանց հոլովներուն մէջ վերը դրուած օրինակներէն խոտորմունք ունեցող բառեր կան. ինչպէս,

Գէտին վրայ հոլոված բառերուն ոմանց եզակի սեռականը ուն կ'ըլլայ, մանաւանդ ին, եալ վերջաւորածներունը. ինչպէս. Վերին կ'ըլլայ վերջահոլով սեռական վերնոյ՝ նաև վերնուն. Անցեալ՝ անցելոյ կամ անցելուն. Հին՝ հնոյ կամ հնուն. Սուրբ՝ սրբոյ կամ սրբուն:

Բարդին վրայ հոլոված բառերուն մէջ կան ի վերջաւորած բազմավանկ բառեր, որ աւելի գէտին պէս կ'ըլլան. ինչպէս,
Որդի, որդւոյ, որդւով. Որդիք, որդւոց, որդւովք:
Հոգի, հոգւոյ, հոգւով. Հոգիք, հոգւոց, հոգւովք:

Ասանկ կ'ըլլան ամէն ցի վերջաւորած անունները.
Աթենացի, աթենացւոյ, ցւով. ցիք, ցւոց, ցւովք:
Հռոմայեցի, ցւոյ, ցւով. ցիք, ցւոց, ցւովք:
Իսրայելացի, ցւոյ, ցւով. ցիք, ցւոց, ցւովք:

Դարձեալ այս հոլովման բառերուն ոմանց եզակի վերջահոլով սեռականը ոջ կը վերջանայ. և անկէց ոմանց բացառականն ալ ոջէ. ինչպէս, Գինի, գինւոջ: Այգի, այգւոջ: Տեղի, տեղւոջ, ի տեղւոջէ: Տարի, տարւոջ, ի տարւոջէ:

Զարդին վրայ հոլոված բառերուն ոմանց բացառականը ուէ ալ կը վերջանայ. ինչպէս, Զարդ, ի զարդէ կամ ի զարդուէ: Գանձ, ի գանձէ կամ ի գանձուէ: Դաս, ի դասէ կամ ի դասուէ. և այլն:

Փոքրին վրայ հոլոված բառերուն մէջէն Բարձրին յոգնակին կ'ըլլայ բարձունք, բարձանց, բարձամբք. Սերմին յոգնակին նման, փոխանակ բարձոնց, բարձոմբք ըլլալու:

Ցորեն և Երէց բառերը թէպէտ ըր չեն վերջաւորիր, բայց Փոքրին պէս կը հոլովին, Ցորենը միայն յոգնակի առանց եզակի

ունենալու, և Երէցը եզակի փոքրին նման, և յոգնակի Սերմին նման. ինչպէս,

| | Յոգն. շատ: | Երէց. պատուով մեծ: |
|---|---|---|
| Ո. | Յոգն, Յոգունք. | Երէց. Երիցունք. |
| Ս. | Յոգունց. | Երիցու. Երիցանց. |
| Գ. | Յոգումբք. | Երիցու. Երիցամբք. |
| Հ. | զՅոգունս. | զԵրէց. զԵրիցունս. |
| Տ. | Յոգունց, ի յոգունս. | Երիցու, յերէց. Երիցանց, յերիցունս. |
| Բ. | ի Յոգունց: | յԵրիցուէ. յԵրիցանց: |

Սերմին վրայ հոլոված բառերուն ոմանց յոգնակի ուղղականը և հայցականը անք, անս կը վերջանան. ինչպէս,
Սերմն, սերմանք, զսերմանս: Կողմն, կողմանք, զկողմանս. ևն:

Կան քանի մը բառեր, որ թէպէտ ըն չեն վերջանար, բայց Սերմին նման կը հոլովին. ինչպէս,

Եզ. Մահ, մահուան, մահուամբ, զմահ, մահուան, ի մահ, ի մահուանէ.

Յոգ. Մահունք կամ մահուանք, մահուանց, մահուամբք, զմահունս կամ զմահուանս, մահուանց, ի մահունս կամ ի մահուանս, ի մահուանց:

Եզ. Գալուստ, գալստեան, գալստեամբ, զգալուստ, գալստեան, ի գալուստ, ի գալստենէ.

Յոգ. Գալուստք, գալստեանց, գալստեամբք, զգալուստս, գալստեանց, ի գալուստս, ի գալստեանց:

Եզ. Պաշտօն, պաշտաման, պաշտամամբ, զպաշտօն, պաշտաման, ի պաշտօն, ի պաշտամանէ.

Յոգ. Պաշտամունք, պաշտամանց, պաշտամամբք, զպաշտամունս, պաշտամանց, ի պաշտամունս, ի պաշտամանց:

Նոյնպէս Տուն և Անուն և Շուն բառերը թէպէտ ըն չեն վերջանար, բայց Սերմին նման կը հոլովին. ինչպէս,

Եզ. Տուն, տան, տամբ, զտուն, տան, ի տուն, ի տանէ.

Յոգ. Տունք, տանց, տամբք, զտունս, տանց, ի տունս, ի տանց:

Եզ. Անուն, անուան, անուամբ, զանուն, անուան, յանուն, յանուանէ.

Յոգ. Անուանք, անուանց, անուամբք, զանուանս, անուանց, յանուանս, յանուանց:

Նեղաբերանին վրայ հոլոված բառերէն ոմանց եզակի բացա-

ռականը նոյնն ալ կ'ըլլայ․ ինչպէս, Սիւն, ի սեանէ։ Ձիւն, ի ձեանէ։

Եղնի վրայ հոլոված բառերէն ոմանք, ինչպէս Հայրն, Մայրն, բացառականին մէջ ի հօրմէ, ի մօրմէ կ'ըլլան, փոխանակ ի հայրմէ, ի մայրմէ ըլլալու։

Դարձեալ ոմանց յոգնակի ուղղականը և հայցականը ունք, ունս կը վերջաւորին, ինչպէս, Հարսն, հարսունք, զհարսունս։ Մատն, մատունք, զմատունս։ Մասն, մասունք, զմասունս․ փոխանակ հարսներք, հարսներս, Մատներք, մատներս ըլլալու։

Լեառն, Շէտ, փող, կը հոլովին Եղնի վրայ․ ինչպէս,

Եզ․ Լեառն, լերին, լերամբ, զլեառն, լերին, ի լեառն, ի լեռնէ․

Յոգ․ Լերինք, լերանց, լերամբք, զլերինս, լերանց, ի լերինս, ի լերանց։

Համրին վրայ հոլոված բառերուն յոգնակին ընդհանրապէս Քաղաքին յոգնակիին նման ալ կ'ըլլայ․ ինչպէս, Համերք, համերաց, համերօք։ Կայսերք, կայսերաց, կայսերօք։ Տիեզերք, տիեզերաց, տիեզերօք։

Արտաքին հոլովմունք ունեցող Տէր բառին յոգնակի սեռականը տեարց, գործիականը տեարբք, բացառականը ի տեարց ալ կ'ըլլայ։ Նոյնպէս Հայր բառին յոգնակի սեռականը հարանց, գործիականը հարամբք, տրականը հարանց, բացառականը ի հարանց կ'ըլլայ, բայց իր վրայ հոլոված Մայր և Եղբայր բառերը սանկ չեն կրնար ըլլալ։

Գ․ Կան բառեր, որոնց եզակին մէկ կերպ, յոգնակին ուրիշ կերպ կ'ըլլայ սովորաբար․ ինչպէս,

Եզ․ Շնորհ, շնորհի, շնորհիւ․ Բանին պէս․

Յոգ․ Շնորհք, շնորհաց, շնորհօք․ Քաղաքին պէս։

Եզ․ Երկին, երկնի, երկնաւ․ Քաղաքին պէս․

Յոգ․ Երկինք, երկնից, երկնիւք․ Բանին պէս։

Եզ․ Քար, քարի, քարիւ կամ քարամբ․ Բանին պէս։

Յոգ․ Քարինք, քարանց, քարամբք․ Եղնին պէս։

Եզ․ Ժողովուրդ, ժողովրդեան, ժողովրդեամբ․ Սերմին պէս։

Յոգ․ Ժողովուրդք, ժողովրդոց, ժողովրդովք․ Գետին պէս։

Եզ․ Ձեռն, ձեռին, ձեռամբ․ Եղնին պէս։

Յոգ․ Ձեռք, ձեռաց, ձեռօք․ Քաղաքին պէս։

Եզ․ Ոտն, ոտին, ոտամբ․ Եղնին պէս։

Յոգ․ Ոտք, ոտից, ոտիւք․ Բանին պէս։

Դ. Կան բառեր ալ, որոնք տարբեր կերպով հոլովելով՝ ուրիշ նշանակութիւն կ'ունենան. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Այր · այրի · այրիւ . | այր · | մաղարա : |
| Այր · առն · արամբ . | էրէկ մարդ, | էրքէկ : |
| Մայր · մայրի · մայրիւ . | մայր ծառ, | չամ աղաճը : |
| Մայր · մօր · մարբ . | մայր · | անա : |
| Որթ · որթոյ · որթով . | որթ · | ասմա : |
| Որթ · որթու · որթու . | հորթ , | տանա : |
| Փող · փողոյ · փողով . | ֆող · | պօրու : |
| Փող · փողի · փողիւ . | ֆող · | պօղազ : |
| Օղ · օղի · օղիւ . | ունէց աման , | ֆալաքած : |
| Օդ · օդոյ · օդով . | օդ · | հավա : |

Ե. Քանի մը մասնիկներ կան, որ եզակի անուան վրայ դրուելով յոգնակի կը շինեն. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| էար · էր · | Իշ · իշէար . | էշէր : |
| ջան . | Ջօր · ջօրական . | ղէնտոսորնէր : |
| ոտայ . | Կալ · կալոտայ . | ծաղմաննէր : |
| էան , | Խող · խողէան . | խոզէր : |
| անի , | Նամակ · նամականի . | նամաքնէր : |
| ան . | Ձի , ձիան . | ձիէր : (ասխորնէր : |
| տի · ոտի · | Մանուկ · մանկտի . | տղաքնէր : Ոսկր · ոսկրոտի . |

Երբեմն ասոնց ալ երկին յոգնակի կ'ըլլան + ով · ով · ամփոփ բառեր ուղղական և հայցական . ինչպէս , Արտօրայք , զԱրտօրայս . Մանկտիք , զՄանկտիս :

Շատ անգամ անուն մը կրկնուելով , յոգնակիի դէմ կ'ունենայ . ինչպէս . Ազգ ազգ , ազգէր : Այր այր , առն առն , ամէն մէկ մարդ . ամէն մէկ մարդու : Քաղաքի քաղաքի , ամէն քաղաք : Աւուր աւուր , ամէն օրուան : զԲարբի բարին , աղէկները : զՑաւի յաւին , գէշերը :

---

## 48. ՈՐՈՇԵԱԼ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔԸ

| | ՄԻ . | ԵՐԿՈՒ . | ԵՐԵՔ . | ՉՈՐՔ . |
|---|---|---|---|---|
| | Եզ. անդէմ . | Յոգ. անէղ. | Յոգ. անէղ. | Յոգ. անէղ. |
| Ո. | Մի . | Երկու . | Երեք . | Չորք . |
| Ս. | Միոյ , միոջ . | Երկուց . | Երից . | Չորից . |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գ. | Միով. | Երկուք. | Երիւք. | Չորիւք. |
| Հ. | զՄի. | զԵրկուս. | զԵրիս. | զՉորս. |
| Տ. | Միում, | Երկուց, | Երից, | Չորից. |
| | միոյ, ի մի. | յերկուս. | յերիս. | ի չորս. |
| Բ. | ի Միոջէ։ | յԵրկուց։ | յԵրից։ | ի Չորից։ |

| | ՀԻՆԳ | | ՎԵՑ | |
|---|---|---|---|---|
| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
| Ո. | Հինգ. | Հինգք. | Վեց. | Վեցք. |
| Ս. | Հնգի. | Հնգից. | Վեցի. | Վեցից. |
| Գ. | Հնգիւ. | Հնգիւք. | Վեցիւ. | Վեցիւք. |
| Հ. | զՀինգ. | զՀինգս. | զՎեց. | զՎեցս. |
| Տ. | Հնգի, | Հնգից, | Վեցի, | Վեցից, |
| | ի հինգ. | ի հինգս. | ի վեց. | ի վեցս. |
| Բ. | ի Հնգէ. | ի Հնգից։ | ի Վեցէ. | ի Վեցից։ |

Հինգ յոգնակին մէջ կ'ըլլայ նաև հնգաց, հնգօք։

| | ԵՕԹՆ | | ՈՒԹ | |
|---|---|---|---|---|
| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
| Ո. | Եօթն. | Եօթանք. | Ութ. | Ութք. |
| Ս. | Եօթան. | Եօթանց. | Ութի. | Ութից. |
| Գ. | Եօթամբ. | Եօթամբք. | Ութիւ. | Ութիւք. |
| Հ. | զԵօթն. | զԵօթանս. | զՈւթ. | զՈւթս. |
| Տ. | Եօթան, | Եօթանց, | Ութի, | Ութից, |
| | յեօթն. | յեօթանս. | յութ. | յութս. |
| Բ. | յԵօթանէ. | յԵօթանց։ | յՈւթէ. | յՈւթից։ |

| | ԻՆՆ | | ՏԱՍՆ | |
|---|---|---|---|---|
| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
| Ո. | Ինն. | Իննունք. | Տասն. | Տասունք. |

Ս. Իննի. Իննից. Տասին. Տասանց.
Գ. Իննիւ. Իննիւք. Տասամբ. Տասամբք.
Հ. զԻնն. զԻնունս. զՏասն. զՏասունս.
Տ. Իննի, Իննից, Տասին, Տասանց,
յԻնն. յԻնունս. ի տասն. ի տասունս.
Բ. յԻննէ. յԻննից: ի Տասնէ. ի Տասանց:

Ինն յոգ. սեռ.՝ ինանց ալ կ՚ըլլայ: Տասն յոգնակիին մէջ տասնից, տասնիւք ալ կ՚ըլլայ:

| | | |
|---|---|---|
| Մետասան. | | տասնըմէկ: |
| Երկոտասան. | | տասներկու: |
| Երեքտասան. | նի, նիւ, նէ. | տասներեք: |
| Չորեքտասան. | նս, նից, նիւք. | տասնըչորս: |
| Հնգետասան. | | տասնըհինգ: |
| Վեշտասան. | | տասնըվեց: |

| | |
|---|---|
| Եօթնևտասան. | սին, սամբ, սնէ, սունս, սանց, սամբք: |
| Ութևտասան. | |
| Իննևտասան. | |

Քսան, նի, նիւ, նս, նից, նիւք.

| | |
|---|---|
| Երեսուն. | |
| Քառասուն. | |
| Յիսուն. | |
| Վաթսուն. | սնի, սնիւ, սնէ, սունս, սնից, սնիւք: |
| Եօթանասուն. | |
| Ութսուն. | |
| Իննսուն. | |

Հարիւր ·
Երկերիւր ·
Երեք հարիւր ·
Չորեք հարիւր ·
Հինգ հարիւր ·
Վեց հարիւր ·
Եօթն հարիւր ·
Ութ հարիւր ·
Ինն հարիւր ·

— րոյ , րով · րս , րոյ , րովք :

Հազար , րէ , րաւ , րէ , րս , րայ , րօք :
Բիւր , րու , րու , րէ , րս , րուց , րուք :

---

Առաջին , ջնոյ , ջնով , ջնոյ , ջնովք :

Առաջներորդ ·
Երկրորդ ·
Երրորդ ·
Չորրորդ ·
Հինգերորդ ·
Եւայլն ·

— ի , աւ , այ , օք :

Միակ ·
Երկեակ ·
Երրեակ ·
Քառեակ ·
Եւայլն ·

— ի , աւ , այ , օք :

Կրկին ·
Երեքկին ·
Չորեքկին ·

— կնոյ , կնով , կնոյ , կնովք :

Հնգապատիկ , ի , աւ , այ , օք :
Եւայլն ·

Երկոքեան, Երկոքին, երկուքն ալ, իքիսի տէ։

| | | |
|---|---|---|
| Ո. | Երկոքեան. | Երկոքին. |
| Ս. | Երկոցուն. | Երկոցունց. |
| Գ. | Երկոքումբ. | Երկոքումբք. |
| Հ. | զԵրկոսեան. | զԵրկոսին. |
| Տ. | Երկոցուն, | Երկոցունց, |
| | յԵրկոսեան. | յԵրկոսին. |
| Բ. | յԵրկոցուն. | յԵրկոցունց։ |

Երեքեան, Երեքին, երեքն ալ, իւչիւ տէ։
Չորեքեան, Չորեքին, չորսն ալ, տէօրտիւ տէ։
եւայլն.

---

49. ԱՆՈՐՈՇ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԸ

ՈՄՆ. Մէկը, մը, պիրիսի։

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ոմն. | Մէկը. | պիրիսի. |
| Ս. | Ուրումն. | Մէկու մը. | պիրիսինին. |
| Գ. | Ումամբ. | Մէկով մը. | պիրիսի իլէ. |
| Հ. | զՈմն. | Մէկը. | պիրիսինի. |
| Տ. | Ումեմն, յումն. | Մէկու մը. | պիրիսինէ. |
| Բ. | յՈւմեմնէ. | Մէկէ մը. | պիրիսինտէն։ |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ոմանք. | Մէկ քանիք. | պազըլարը. |
| Ս. | Ոմանց. | Մէկ քանիի. | պազըլարըն. |
| Գ. | Ոմամբք. | Մէկ քանիով. | պազըլարը իլէ. |
| Հ. | զՈմանս. | Մէկ քանին. | պազըլարը. |
| Տ. | Ոմանց, յոմանս. | Մէկ քանիի. | պազըլարա. |
| Բ. | յՈմանց. | Մէկ քանիէ. | պազըլարընտան։ |

50. ՈՔ, Մէկը, մը, պիրիսի. Ճիշդ ոմի նշա-նակութեամբ կը բանի. և յոգնակի չունի, միայն եզակի այսպէս կը հոլովի.

Ո. Ոք.
Ս. Ուրուք.
Գ. —
Հ. զՈք.
Տ. Ումեք, յոք.
Բ. յՈւմեքէ.

51. ԻՄՆ, ԻՔ, ԻՆՉ, բան մը, մը, պիր շէյ:

Եզակի անյոգնական

Ո. Իմն, իք, ինչ. բան մը. պիր շէյ.
Ս. — իրիք, — բանի մը. պիր շէյին.
Գ. — իւիք, — բանով մը. պիր շէյիլէ.
Հ. Իմն, — ինչ. բան մը. պիր շէյի.
Տ. Իմեմն, իմիք, յինչ. բանի մը. պիր շէյէ.
Բ. յիմեմնէ, յիմեքէ, — բանէ մը. պիր շէյտէն.

52. ԶԻ, ԶԻՆՉ, ԻՆՉ. ինչ. նէ, նէ շէյ:

Եզակի անյոգնական

Ո. Զի, զինչ, ինչ. ինչ. նէ շէյ.
Ս. Էր, եր. ինչու. նէ շէյին.
Գ. Իւ. ինչով. նէ շէյիլէ.
Հ. Զի, զինչ, ինչ. ինչ. նէ շէյ.
Տ. Իմ, հիմ, էրում, երում, յինչ. ինչու. նէ շէյէ.
Բ. առ իմէ. ինչէ. նէ շէյտէն.

53. Ամենեքեան կամ ամենեքին. Բոլորե-քեան կամ բոլորեքին, կը հոլովին Երկոքեան, Երկոքեանին պէս, տես. երես 26:

Ամենայն, ամէնը. կը հոլովի բառին պէս. վերջ. տր. Ամենայնում ալ կ'ըլլայ, և յոգնակին տեղ Ամենեքեանը կը բանի, կամ եզակի Ամենայնը:

54. Այլ. ուրիշ. պաշգա, կը հոլովի գետին պէս. վերջահոլով տրականը Այլում, բացառականը յԱյլմէ կ'ըլլայ:

Նոյնպէս Իւրաքանչիւր, ամէն մէկը, հէր բիրի, կը հոլովի գետին պէս. վերջ. տր. Իւրաքանչիւրում, բաց. յԻւրաքանչիւրոյ կամ յԻւրաքանչիւրմէ կ'ըլլայ:

Նոյնպէս Միւս, մէկալը, օ բիրի, կը հոլովի գետին պէս. վերջ. տր. Միւսում. բաց. ի Միւսմէ կ'ըլլայ:

Միմեանց. մէկ մէկու, պիրպիրլերինի. յոգնակի է, և ուղղական չունի, կը հոլովի սերմին յոգնակիին պէս. Միմեամբք, զՄիմեանս, ի Միմեանց:

Իրերաց, իրարու, պիրպիրլերինի, յոգնակի է, և ուղղական չունի, կը հոլովի քաղաքին յոգնակին պէս. Իրերօք, զԻրեարս, յԻրերաց:

## ԳԼՈՒԽ Բ.

# ԴԵՐԱՆՈՒՆ

55. Արդէն յիշուած խօսք մը չկրկնելու համար, անոր տեղն ուրիշ բառ մը կը դրուի որ Դերանուն կ'ըսուի:

56. Դերանունը չորս տեսակ է. Անձնական, Ցուցական, Ստացական և Յարաբերական.

### 57. ԱՆՁԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Դիմական կամ Անձական կ՚ըսուին այն դերանունները, որոնք դէմք կը ցուցնեն։

58. Դէմքն երեք է. Առաջին, Երկրորդ. Երրորդ։ Առաջին դէմքը խօսողն է, Ես. երկրորդ դէմքը որու որ կը խօսուի, Դու. երրորդ դէմքը որու համար որ խօսք կ՚ըլլայ, Նա։

59. Անձական Դերանուններն ասոնք են, Ես, Դու, Ինքն, Իւր. որոնք գոյական են, և առանձին հոլովմունք ունին այսպէս։

### 60. ԱՌԱՋԻՆ ԴԷՄՔ—ԵՍ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ես. | [illegible] | [illegible] |
| Ս. | Իմ. | [illegible] | [illegible] |
| Գ. | Ինեւ. | [illegible] | [illegible] |
| Հ. | զԻս. | [illegible] | [illegible] |
| Տ. | Ինձ, յԻս. | [illegible] | [illegible] |
| Բ. | յԻնէն. | [illegible] | [illegible] |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Մեք. | [illegible] | [illegible] |
| Ս. | Մեր. | [illegible] | [illegible] |
| Գ. | Մեօք. | [illegible] | [illegible] |
| Հ. | զՄեզ. | [illegible] | [illegible] |
| Տ. | Մեզ, ՚ի Մեզ. | [illegible] | [illegible] |
| Բ. | ՚ի Մէնջ. | [illegible] | [illegible] |

### 61. ԵՐԿՐՈՐԴ ԴԷՄՔ—ԴՈՒ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Դու. | [illegible] | [illegible] |

| | | | |
|---|---|---|---|
| Ս. | քո. | քու. | սէնին. |
| Գ. | քև. | քեզմով. | սէնին իլէ. |
| Հ. | զքեզ. | քեզ. | սէնի. |
| Տ. | քեզ, ի քեզ. | քեզի. | սանա. |
| Բ. | ի քէն. | քեզնէ. | սէնտէն. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Դուք. | դուք. | սիզ. |
| Ս. | Ձեր. | ձեր. | սիզին. |
| Գ. | Ձեօք. | ձեզմով. | սիզին իլէ. |
| Հ. | զձեզ. | ձեզ. | սիզի. |
| Տ. | Ձեզ, ի ձեզ. | ձեզի. | սիզէ. |
| Բ. | ի ձէնջ. | ձեզնէ. | սիզտէն. |

62. ԵՐՐՈՐԴ ԴԷՄՔ—ԻՒՐ, ԻՆՔՆ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | — | — | — |
| Ս. | Իւր, իւրեան. | իր. | քէնտինին. |
| Գ. | Իւրև, իւրեաւ, իւրեամբ. | իրմով. | քէնտի իլէ. |
| Հ. | — | — | — |
| Տ. | Իւր, իւրեան, յիւր. | իրեն. | քէնտինէ. |
| Բ. | յիւրմէ. | իրմէ. | քէնտինտէն. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Իւրեանք. | իրենք. | քէնտիլէրի. |
| Ս. | Իւրեանց. | իրենց. | քէնտիլէրինին. |
| Գ. | Իւրեամբք. | իրենցմով. | քէնտիլէրի իլէ. |
| Հ. | զԻւրեանս. | զիրենք. | քէնտիլէրինի. |

Տ. Իւրեանց, իրենց. քէնտիլէրինէ.
յիւրեանս.
Բ. յիւրեանց. իրենցմէ. քէնտիլէրինտէն։

ԻՆՔՆ, ինքը, քէնտի, կը հոլովի Սեռին պէս. ինքն, ինքեան, ինքեամբ. ինքեանք, ինքեանց, ինքեամբք, զինքեանս։

63. ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ցուցական դերանուններն երեք տեսակ են.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սա, | Այս, | Սոյն, | աս, | պու։ |
| Դա, | Այդ, | Դոյն, | ատ, | շու։ |
| Նա, | Այն, | Նոյն, | ան, | օ։ |

Սա, Դա, Նա՝ գոյական են. իսկ Այս, Այդ, Այն. Սոյն, Դոյն, Նոյն՝ ածական են. և այսպէս կը հոլովին.

64. ՍԱ, աս, պու։

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Սա. | աս. | պու. |
| Ս. | Սորա. | ասոր. | պունուն. |
| Գ. | Սովաւ. | ասով. | պունուն իչին. |
| Հ. | զՍա. | աս. | պունու. |
| Տ. | Սմա, ի սա. | ասոր. | պունա. |
| Բ. | ի Սմանէ. | ասկէ. | պունտան. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Սոքա. | ասոնք. | պունլար. |
| Ս. | Սոցա. | ասոնց. | պունլարըն. |
| Գ. | Սոքօք. | ասոնցմով. | պունլար իչին. |
| Հ. | զՍոսա. | ասոնք. | պունլարը. |
| Տ. | Սոցա, ի սոսա. | ասոնց. | պունլարա. |
| Բ. | ի Սոցանէ. | ասոնցմէ. | պունլարտան։ |

Ասոր նման կը հոլովին ԴԱ. ՆԱ. Սին տեղ Դ և Ն դրը-ուելով. դիւրութեան համար անոնց հոլովման ամբողջ ձեւը գրենք.

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Դա. | Դոքա. | Նա. | Նոքա. |
| Ս. | Դորա. | Դոցա. | Նորա. | Նոցա. |
| Գ. | Դովաւ. | Դոքօք. | Նովաւ. | Նոքօք. |
| Հ. | զԴա. | զԴոսա. | զՆա. | զՆոսա. |
| Տ. | Դմա, | Դոցա, | Նմա, | Նոցա, |
| | ի Դա. | ի Դոսա. | ի Նա. | ի Նոսա. |
| Բ. | ի Դմանէ. | ի Դոցանէ. | ի Նմանէ. | ի Նոցանէ։ |

## 65. ԱՅՍ, աս, պու:

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այս. | աս: | պու. |
| Ս. | Այսր, այսորիկ. | ասոր. | պունուն. |
| Գ. | Այսու, այսուիկ. | ասով. | պունուն իլէ. |
| Հ. | զԱյս. | աս. | պունու. |
| Տ. | Այսմ, այսմիկ, յայս. | ասոր. | պունա. |
| Բ. | յԱյսմ, յայսմանէ. | ասկէ. | պունտան. |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այսք, Այսոքիկ. | ասոնք. | պունլար. |
| Ս. | Այսց, Այսոցիկ. | ասոնց. | պունլարըն. |
| Գ. | Այսոքիւք. | ասոնցմով. | պունլար իլէ. |
| Հ. | զԱյսոսիկ. | ասոնք. | պունլարը. |
| Տ. | Այսց, այսոցիկ, | | |
| | յայսս. յայսոսիկ. | ասոնց. | պունլարա. |
| Բ. | յԱյսց, յայսցանէ. | ասոնցմէ. | պունլարտան։ |

Այս օրինակէն կ'երեւայ թէ երկու կերպ կը հոլովի, կարճ և երկայն: ԱՅԴ, ԱՅՆ կը հոլովին սոր նման, դ և ն դրուելով սի տեղ. դիւրութեան համար անոնց հոլովման ամբողջ ձեւը դնենք:

ԱՅԴ, ատ, շու:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այդ. | Այդք, այդոքիկ. |
| Ս. | Այդր, այդորիկ. | Այդց, այդոցիկ. |
| Գ. | Այդու, այդուիկ. | Այդոքիւք. |
| Հ. | զԱյդ. | զԱյդոսիկ. |
| Տ. | Այդմ, այդմիկ, յայդ. | Այդց, այդոցիկ, յայդոսիկ. |
| Բ. | յԱյդմ, յայդմանէ. | յԱյդց, յայդցանէ: |

ԱՅՆ, ան, օ:

| | | |
|---|---|---|
| Ո. | Այն. | Այնք, այնոքիկ. |
| Ս. | Այնր, այնորիկ. | Այնց, այնոցիկ. |
| Գ. | Այնու, այնուիկ. | Այնոքիւք. |
| Հ. | զԱյն. | զԱյնս, զայնոսիկ. |
| Տ. | Այնմ, այնմիկ, յայն. | Այնց, այնոցիկ, յայնս, յայնոսիկ. |
| Բ. | յԱյնմ, յայնմանէ. | յԱյնց, յայնցանէ: |

66. ՍՈՅՆ, սա, պու:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Սոյն. | Սոքին. |
| Ս. | Սորին. | Սոցին. |
| Գ. | Սովին. | Սովիմբք. |
| Հ. | զՍոյն. | զՍոսին. |
| Տ. | Սմին, ի սոյն. | Սոցին, ի սոսին. |
| Բ. | — | ի Սոցունց. |

Ասոր նման կը հոլովին ԴՈՅՆ, ՆՈՅՆ։

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Դոյն. | Դոքին. | Նոյն. | Նոքին. |
| Ս. | Դորին. | Դոցին. | Նորին. | Նոցին. |
| Գ. | Դովին. | Դովիմբք. | Նովին. | Նովիմբք. |
| Հ. | զԴոյն. | զԴոսին. | զՆոյն. | զՆոսին. |
| Տ. | Դմին, | Դոցին, | Նմին. | Նոցին, |
| | ի դոյն. | ի դոսին. | ի նոյն. | ի նոսին. |
| Բ. | — | ի Դոցունց։ | — | ի Նոցունց։ |

Սոյն, Դոյն, Նոյն կ'ըլլան նաև եզակի սեռականի մէջ Սորուն, Դորուն, Նորուն. գործիական Սովիմբ, Դովիմբ, Նովիմբ. յոգնակիի մէջ Ուղղական Սոյնք, Դոյնք, Նոյնք. Սեռական Սոցուն՝ Սոցունց. Դոցուն՝ Դոցունց. Նոցուն՝ Նոցունց. Գործիական Սոքիմբք՝ Սոքումբք. Դոքիմբք՝ Դոքումբք. Նոքիմբք՝ Նոքումբք. Հայցական զՍոյնս. զԴոյնս. զՆոյնս։

## 67. ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ես, Դու, Իռական դերանուններուն եզակի և յոգնակի սեռականները Իմ, Քո, Մեր, Ձեր, և Իւր եզակին՝ Ստացական դերանուն կ'ըսուին, և ածական են, ու այսպէս կը հոլովին։

| | ԻՄ | | ՔՈ | |
|---|---|---|---|---|
| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
| Ո. | Իմ. | Իմք. | Քո. | Քոյք. |
| Ս. | Իմոյ. | Իմոց. | Քոյ. | Քոց. |
| Գ. | Իմով. | Իմովք. | Քով. | Քովք. |
| Հ. | զԻմ. | զԻմս. | զՔո. | զՔոյս. |
| Տ. | Իմում, | Իմոց, | Քում, | Քոց, |
| | յիմ. | յիմս. | ի քո. | ի քոյս. |
| Բ. | յԻմմէ. | յԻմոց։ | ի Քումմէ. | ի Քոց։ |

| | ՄԵՐ | | ՁԵՐ | |
|---|---|---|---|---|
| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
| Ո · | մեր · | մերք · | ձեր · | ձերք · |
| Ս · | մերոյ · | մերոց · | ձերոյ · | ձերոց · |
| Գ · | մերով · | մերովք · | ձերով · | ձերովք · |
| Հ · | զմեր · | զմերս · | զձեր · | զձերս · |
| Տ · | մերում, ի մեր · | մերոց, ի մերս · | ձերում, ի ձեր · | ձերոց, ի ձերս · |
| Բ · | ի մերմէ · | ի մերոց ։ | ի ձերմէ · | ի ձերոց ։ |

| | ԻՒՐ | |
|---|---|---|
| | Եզակի | Յոգնակի |
| Ո · | իւր · | իւրք · |
| Ս · | իւրոյ · | իւրոց · |
| Գ · | իւրով · | իւրովք · |
| Հ · | զիւր · | զիւրս · |
| Տ · | իւրում, յիւր · | իւրոց · յիւրս · |
| Բ · | յիւրմէ · | յիւրոց ։ |

Քո ին սեռականն ու տրականը ու գործիականը քոյոյ · քոյում, քոյով · քոյոց · քոյովք · և բացառական ի քոյոյ, ի քոյոց ալ գործածուած կայ ։

Ասոնց եզակի տրական ինձոյ, քոյ · մերոյ · ձերոյ · իւրոյ ալ կըլլայ, և բացառական յինձոյ · ի քոյ · ի մերոյ · ի ձերոյ յիւրոյ ։

Սա, դա, նա՝ Ցուցական դերանուններուն եզակի և յոգնակի սեռականներն ալ սորա, սոցա, դորա, դոցա, նորա, նոցա Ստացական դերանուն գործածուած կան · և վերջիններուն նման կը հոլովին, սորա, սորայոյ · սորայով · սորայք · սորայոց · սորայովք, և այլն ։

## 68 · ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Որ, Ո կըսուի Յարաբերական Դերանուն · որ դէմք չունի, բայց ամէն դէմքի անուն կամ

դերանուն մէջ կը բերէ, ինչպէս, Ես որ կը խօսիմ. Դու որ կը խօսիս, Նա կամ Ստեփան որ կը խօսի ։

ՈՐ, որն որ, ժէ ։ Ո կամ ՈՎ, որը ։

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Որ. | Որք. | Ո, ով. | Ոյք. |
| Ս. | Որոյ. | Որոց. | Ոյր. | Ոյց. |
| Գ. | Որով. | Որովք. | — | — |
| Հ. | զՈր. | զՈրս. | զՈ, զով. | զՈյս. |
| Տ. | Որում, | Որոց, | Ում, յո, | Ոյց, |
| | յոր. | յորս. | յով. | յոյս. |
| Բ. | յՈրմէ. | յՈրոց ։ | յՈւմէ, | յՈյց ։ |
| | | | յումմէ. | |

Էական, Ցուցական և Ստացական դերանուններու մէջ ունեցող երեք գրեր կան ս, դ, ն, որոնց Դիմորոշ յօդ կ՚ըսուի ։ Ասոնց վրայ կարևոր տեղեկութիւն աւանդուած է Քերականութեան Բ. Մասին մէջ ։

## ԳԼՈՒԽ Գ.

# ՆԱԽԴԻՐ

69. Մինչև ցարդ հոլովմանց մէջ տեսանք, որ Հայցական հոլովը զ գիր մը, և բացառականով սկսուած բառերուն Նախդիրն ալ

րականներն և Բացառականներն ալ է գիր մը ․ և ձայնաւորով սկսուածներուն ալ յ գիր մը կ՚առնեն ։

70․ Այս զ՚, է՛, յ գրերը Նօխթէր կ՚ըսուին ․ և ոչ միայն Հայցական, Նախդրիւ տրական և բացառական հոլովները շինելու կը գործածուին ․ այլ ուրիշ հոլովներու վրայ ալ դրուելով ուրիշ նշանակութիւն կուտան անոնց, որ գիտնալու է ։

71․ Զ նախդիրը մերձահոլով տրականի վրայ ալ կը դրուի, և կ՚ըսուի զնախդրով տրական հոլով, որ քիչ կը գործածուի [1] ․

Ուղ․ Բաշ․ տրա․ Բաշէ․ զ գնելով զԲաշէ․ ճարի, Բաշա ։

Ուղ․ Ահ․ տրա․ Ահէ․ զ գնելով զԱհէ․ վախէ գօրգույա ։

Զ նախդիրը գործիական հոլովի վրայ ալ կը դրուի, և կ՚ըսուի զնախդրով գործիական հոլով ․ կամ որ նոյնն է՝ Պարառական հոլով ․ Նշանակութիւնը կ՚ըլլայ Բոլըրբէճը կամ Վըլա ․ Էրֆըրաս կամ Իըսէ Նաբէ ․ ինչպէս,

Ուղ․ Տաղ, գործ․ Տաղէ․ զ նախդրով զՏաղէ․ փառ Բոլըրբէճը ։

[1] Այս զ նախդրով տրական հոլովը Հարկանել ․ Զարկանել բայերուն հետ կը գործածուի ․ ինչպէս,

Հարկանել զ․քարի ․ ճարի ըարնալու ։

զԱհի հարկանել ․ վախէ ըարնալու ․ վախէ մէջ էյնալ ։

Հարկանել զայս ․ թառ ըարնալու ։

Զնմին Քրիստոսի զարկուցեալ հրեայքն ․ Հրէայները նոյն Քրիստոսին ըարնալով ։

նենան , որոնք Քերականութեան Երկրորդ Մասին մէջ պիտի աւանդուին ։

76 . Զ , է , յ , ց , առ , ընդ , ըստ նախդիրներէն զատ , ուրիշ բառեր ալ կան , որոնք հոլովով մը կը բանին , ու բառին մէկ միտք մը կուտան . և հոլովառու բառ կամ Նախադրութիւն կ'ըսուին . անոնցմէ խիստ գործածականներն ասոնք են .

Յետ , ետքը ։ Առանց , առանց ։ Իբրև , Որպէս , պէս ։ Քան , աւել կամ վէր ։ Մինչ , մինչև ։ Բաց , զատ ։ Չափ , չափ ։ Կողմն , Կոյս , դէպ , դին ։ Վասն , Սակս , Ի սակս , Յաղագս , համար ։ Ի վերայ , վրայ ։ Զկնի , Զհետ , ետևէն ։ Առաջի , առջև ։ Ընթեր , Առընթեր , քով ։ Յանդիման , Հանդէպ , դիմաց ։ Ներքոյ , Ի ներքոյ , տակը ։ Հանդերձ , Հետ , մէկտեղ ։

Ասոնց ինչ հոլովներով բանելուն վրայ Քերականութեան Երկրորդ Մասին մէջ պիտի խօսինք ։

## ԳԼՈՒԽ Գ.

# ԲԱՅ

77 . Բայ կ'ըսուին այն բառերը , որոնք ընել կամ ըլլալ կը նշանակեն ։

78 . Բայերը երեք տեսակ են , Ներգործական , Կրաւորական և Չէզոք ։

79. Բայերն ունին Թիւ, Դէմք, Եղանակ, Ժամանակ։

80. Թիւն՝ Եզակին և Յոգնակին է։

81. Դէմքը դերանուան պէս երեք է. առաջին, երկրորդ, երրորդ։

82. Եղանակն ալ երեք է, Սահմանական, Հրամայական, Ստորադասական։

83. Ժամանակն ալ երեք է, Ներկայ, անցեալ, ապառնի։ Անցեալն ալ երկու է, անցեալ անկատար, անցեալ կատարեալ։

84. Երեք հատ ալ դերբայներ կան, Անորոշ, Անցեալ, Ապառնի, որոնք դէմք չունին։

85. Բայերը Թիւ, դէմք, եղանակ, ժամանակ ցուցնելու համար իրենց վերջաւորութիւնը կը փոխեն. այս փոփոխութեանը Խոնարհում կ՚ըսուի։ Ամէն բայ միենոյն կերպով չխոնարհիր. գլխաւոր չորս կերպ խոնարհմունք կայ, չորս լծորդութեանց համեմատ, որք են ԵՄ, ԻՄ, ԱՄ, ՈՒՄ։

## Ա. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ—ԵՄ

### 86. ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

Ներգործական ՍԻՐԵՄ. արմատ ՍԷՐ, ՍԻՐԵԱՑ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզակի

(Ես) Սիրեմ. Կը սիրեմ. սէվէրեմ.

| | | | |
|---|---|---|---|
| (Դու) | Սիրես . | կը սիրես . | սէվէրսին . |
| (Նա) | Սիրէ . | կը սիրէ . | սէվէր . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| (Մեք) | Սիրեմք . | կը սիրենք . | սէվէրիզ . |
| (Դուք) | Սիրէք . | կը սիրէք . | սէվէրսինիզ . |
| (Նոքա) | Սիրեն . | կը սիրեն . | սէվէրլէր : |

Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Սիրէի . | կը սիրէի . | սէվէրիտիմ . |
| Սիրէիր . | կը սիրէիր . | սէվէրիտին . |
| Սիրէր . | կը սիրէր . | սէվէրիտի . |
| Սիրէաք . | կը սիրէինք . | սէվէրիտիք . |
| Սիրէիք . | կը սիրէիք . | սէվէրիտինիզ . |
| Սիրէին . | կը սիրէին . | սէվէրիտիլէր : |

Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Սիրեցի . | սիրեցի . | սէվտիմ . |
| Սիրեցեր . | սիրեցիր . | սէվտին . |
| Սիրեաց . | սիրեց . | սէվտի . |
| Սիրեցաք . | սիրեցինք . | սէվտիք . |
| Սիրեցէք . | սիրեցիք . | սէվտինիզ . |
| Սիրեցին . | սիրեցին . | սէվտիլէր : |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Սիրեցից . | (պիտի) սիրեմ . | սէվէյիմ . |
| Սիրեսցես . | սիրես . | սէվէսին . |
| Սիրեսցէ . | սիրէ . | սէվսին . |
| Սիրեսցուք . | սիրենք . | սէվէլիմ . |
| Սիրեսջիք . | սիրէք . | սէվէսինիզ . |
| Սիրեսցեն . | սիրեն . | սէվսինլէր : |

**ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ**

(Դու) Սիրեա · սիրէ · սէ՛վ ·
(Դու) Մի սիրեր · Մի սիրեր · սէվմէ՛ ·
(Դուք) Սիրեցէք · սիրեցէք · սէ՛վինիզ ·
(Դուք) Մի սիրէք · Մի սիրէք · սէ՛վմէյինիզ ։

**ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ**

Սիրիցեմ · (Թէ որ) սիրեմ · սէվսէմ ·
Սիրիցես · սիրես · սէվսէն ·
Սիրիցէ · սիրէ · սէվսէ ·
Սիրիցեմք · սիրենք · սէվսէք ·
Սիրիցէք · սիրէք · սէվսէնիզ ·
Սիրիցեն · սիրեն · սէվսէլէր ։

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ · Սիրել · սիրել · սէվմէք ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ · Սիրեալ[1] · սիրած · սէվմիշ ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ · Սիրելոց · սիրելու · սէվէճէք ։

87 · Սիրեմին պէս կը խոնարհին ընդհանրապէս արմատին վրայ պարզ եմ վերջաւորած ամէն բայերը, թէ ներգործական և թէ չէզոք · որոնցմէ քանի մը հատ դնենք կրթութեան համար ։

**Ներգործական**

Գործեմ, գործեցի, գործեա՛ · Ռմ. գործեմ, իշլէրիմ ։
Կոչեմ, կոչեցի, կոչեա՛ · Ռմ. կանչեմ, չաղըրըրըմ ։
Գրեմ, գրեցի · գրեա՛ · Ռմ. գրեմ, եազարըմ ։
Սերմանեմ, սերմանեցի, սերմանեա · Ռմ. ցանեմ, թօխում էքէրիմ ։

**Չէզոք**

Ժամանեմ, ժամանեցի, ժամանեա՛ · Ռմ. հասնիմ, եէթիշիրիմ ։ (ըրմ ։
Թագաւորեմ · ւորեցի, ւորեա՛ · Ռմ. թագաւոր կ'ըլլամ, փատիշահ օլու-
Աղաղակեմ, աղաղակեցի · աղաղակեա՛ · Ռմ. պօռամ, պաղըրըրըմ ։

[1] Այս լծորդութեան վրայ խոնարհող շատ բայերուն անցեալ դերբայը եցեալ ալ կը յանգի, սիրեցեալ · բայց անխտիր ամենուն համար չէ սա ։

## 88. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

### Ներգործական ՏԵՍԱՆԵՄ, արմատ ՏԵՍ:

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ

| | | |
|---|---|---|
| Տեսանեմ. | կը տեսնեմ. | կէօրիւ-րիւ-մ. |
| Տեսանես. | կը տեսնես. | կէօրիւ-րսիւ-ն. |
| Տեսանէ. | կը տեսնէ. | կէօրիւ-ր. |
| Տեսանեմք. | կը տեսնենք. | կէօրիւ-րիւ-զ. |
| Տեսանէք. | կը տեսնէք. | կէօրիւ-րսիւ-նիւ-զ. |
| Տեսանեն. | կը տեսնեն. | կէօրիւ-րլէր: |

#### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Տեսանէի. | կը տեսնէի. | կէօրիւ-րտիւմ. |
| Տեսանէիր. | կը տեսնէիր. | կէօրիւ-րտիւն. |
| Տեսանէր. | կը տեսնէր. | կէօրիւ-րտիւ. |
| Տեսանէաք. | կը տեսնէինք. | կէօրիւ-րտիւք. |
| Տեսանէիք. | կը տեսնէիք. | կէօրիւ-րտիւնիւզ. |
| Տեսանէին. | կը տեսնէին. | կէօրիւ-րտիւլէր: |

#### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Տեսի. | տեսայ. | կէօրտիւ-մ. |
| Տեսեր. | տեսար. | կէօրտիւ-ն. |
| Տես, Է[1]տես. | տեսաւ. | կէօրտիւ-. |

---

[1] Ո՛ր բային արմատը որ միավանկ և բաղաձայնով սկսած է, ինչպէս Տեսանեմ՝ արմատ տես, Հատանեմ՝ արմատ հատ, ասանկներուն կատարեալ եզակի երրորդ դէմքը սկիզբը է գիր առնելով ալ կ'ըլլայ Էտես, Էհատ: Նոյնպէս միայն ա ձայնաւորով սկսող միավանկ արմատներուն սկիզբն ալ է գիրը կը դըրուի. ինչպէս Արկանեմ՝ արմատ արկ, կատարեալ Էարկ. ևն:

| | | |
|---|---|---|
| Տեսաք. | տեսանք. | կէօրտիւք. |
| Տեսէք. | տեսաք. | կէօրտիւնիւզ. |
| Տեսին. | տեսան. | կէօրտիւլէր: |

### Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| եկի. | եկաք. |
| եկիր. | եկիք. |
| եկն. | եկին: |

### Ապառնի

| | |
|---|---|
| եկից. | եկեսցուք. |
| եկեսցես. | եկեսջիք. |
| եկեսցէ. | եկեսցեն: |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| եկ. | եկայք. |
| Մի գար. | Մի գայք: |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| գայցեմ. | գայցեմք. |
| գայցես. | գայցէք. |
| գայցէ. | գայցեն: |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. գալ:

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. եկեալ:

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. գալոց:

131 · Չէզոք ԵՐԹԱՄ, արմատ՝ ԵՐԹ, ՉՈՔ · հ'եղբեալ:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ներկայ

| | |
|---|---|
| Երթամ · | Երթամք · |
| Երթաս · | Երթայք · |
| Երթայ · | Երթան : |

Անցեալ անկատար

| | |
|---|---|
| Երթայի · | Երթայաք · |
| Երթայիր · | Երթայիք · |
| Երթայր · | Երթային : |

Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| Չոքայ · | Չոքաք · |
| Չոքար · | Չոքայք · |
| Չոքաւ · | Չոքան : |

Ապառնի

| | |
|---|---|
| Երթայց · | Երթիցուք · |
| Երթիցես · | Երթիջիք · |
| Երթիցէ · | Երթիցեն : |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Երթ · | Երթայք · |
| Մի երթար · | Մի երթայք : |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Երթայցեմ · | Երթայցեմք · |
| Երթայցես · | Երթայցէք · |
| Երթայցէ · | Երթայցեն : |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ · Երթալ:

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ · Երթեալ:

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ · Երթալոց:

132 . Մէկ երկու բայեր կան , որոնց մէկ քանի ժամանակները միայն կը բանին , անոր համար Պակասաւոր կ՚ըսուին ։

| Պարտիմ . պարտական եմ . | Գոգել . ըսել ։ |
|---|---|

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ներկայ

| | |
|---|---|
| Պարտիմ . Պարտիմք . <br> Պարտիս . Պարտիք . <br> Պարտի . Պարտին ։ | չունի ։ |

Անցեալ անկատար

| | |
|---|---|
| Պարտէի . Պարտէաք . <br> Պարտէիր . Պարտէիք . <br> Պարտէր . Պարտէին ։ | չունի ։ |

Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| չունի . | չունի ։ |

Ապառնի

| | |
|---|---|
| չունի ։ | — Գոգցուք . <br> Գոգցես . Գոգջիք . <br> Գոգցէ . Գոգցեն ։ |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| չունի . | Գոգ . Գոգէք . <br> — — |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Պարտիցիմ . Պարտիցիմք . <br> Պարտիցիս . Պարտիցիք . <br> Պարտիցի . Պարտիցին ։ | չունի ։ |
| ԱՆՈ . ԴԵՐԲ . Պարտել ։ | ԱՆՈ . ԴԵՐԲ . Գոգել ։ |

Պարտիմ կրաւորական մի կայ · որուն ներգործականն է Պարտեմ, նշանակութիւնն է ՚ի պարտել, ամբողջ բայ է աս, և կը խոնարհի Սիրեմ ին պէս :

133 · Մէկ երկու ալ խիստ պակասաւոր բայեր կան, որոնց մէկ քանի եղանակի երրորդ դէմքերը միայն կը բանին · անոր համար Դէմքազուրկ կամ անդէմ բայ կ'ըսուին, և գլխաւոր ասոնք են ։

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ներկայ

Գիտի · պիլիր է ։ Ցաւի · ջան ՚ճըլըյ ։ Մարթի · չարէնէ է ։

### Անցեալ անկատար

Գիտէր · պիլիր էր ։ Ցաւէր · ջան ՚ճըլըր ։ Մարթէր · չարէնէ էր ։

### Անցեալ կատարեալ

Գիտեցաւ · պիլիր էշտա ։ Ցաւեաց · ջան էշտա ։

### Ապառնի

Գիտեսցի · պիլիր ըլըյ ։ Ցաւեսցէ կամ ցաւեսցի · ջան ըլըյ ։

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

չունին ·

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Գիտիցի · պիլիր ըլըյ ։ Ցաւիցէ · Մարթիցի · չարէնէ ըլըյ ։
կամ ցաւիցի · ջան ըլըյ ։

134 · Չորս բայ կան, Եմ, Եղանիմ, Լինիմ, Գամ, որոնք Լծական բայ կ'ըսուին, և նշանակութեամբ չէզոք, ու խոնարհմանց մէջ ալ արտաքոյ և պակասաւոր են · ինչպէս,

Պակասաւոր ԵՄ, արմատ՝ է · էմ ։

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ներկայ

| | |
|---|---|
| Եմ · | Եմք · |
| Ես · | Էք · |
| Է · | Են · |

Անցեալ անկատար

| | |
|---|---|
| էի · | էաք · |
| էիր · | էիք · |
| էր · | էին ։ |

Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| չունի · | չունի ։ |

Ապառնի

| | |
|---|---|
| չունի · | չունի ։ |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Եր · | Էք , Երուք ։ |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Իցեմ · | Իցեմք · |
| Իցես · | Իցէք · |
| Իցէ · | Իցեն ։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ · Ել ։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ · Եալ ։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ · Ելոց ։

135 · Երրորդն ԵՂԱՆԻՄ , արմատ՝ ԵՂ · նշանակ՝ ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ներկայ

| | |
|---|---|
| Եղանիմ · | Եղանիմք · |
| Եղանիս · | Եղանիք · |
| Եղանի · | Եղանին ։ |

Անցեալ անկատար

| | |
|---|---|
| Եղանէի · | Եղանէաք · |
| Եղանէիր · | Եղանէիք · |
| Եղանէր · | Եղանէին ։ |

### Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| Եղէ · | Եղաք · |
| Եղեր · | Եղէք · |
| Եղեւ · | Եղեն ։ |

### Ապառնի

| | |
|---|---|
| Եղէց · | Եղիցուք · |
| Եղիցիս · | Եղիջիք · |
| Եղիցի · | Եղիցին ։ |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Եղիջիր · | Եղերուք · |
| Մի եղանիր · | Մի եղանիք ։ |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Եղանիցիմ · | Եղանիցիմք · |
| Եղանիցիս · | Եղանիցիք · |
| Եղանիցի · | Եղանիցին ։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ · Եղանել ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ · Եղեալ ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ · Եղանելոց ։

## 136 · Պակասաւոր ԼԻՆԻՄ · կ'ըլլամ ։

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ներկայ

| | |
|---|---|
| Լինիմ · | Լինիմք · |
| Լինիս · | Լինիք · |
| Լինի · | Լինին ։ |

### Անցեալ անկատար

| | |
|---|---|
| Լինէի · | Լինէաք · |
| Լինէիր · | Լինէիք · |
| Լինէր · | Լինէին ։ |

Անցեալ կատարեալ

չունի ․ չունի ։

Ապառնի

Լիցիմ ․ Լիցուք ․
Լիցիս ․ Լիջիք ․
Լիցի ․ Լիցին ։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Լեր ․ Լերուք ․
Մի լինիր ․ Մի լինիք ։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Լինիցիմ ․ Լինիցիմք ․
Լինիցիս ․ Լինիցիք ․
Լինիցի ․ Լինիցին ։

ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ ․ Լինել ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ ․ Լեալ ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ ․ Լինելոց ։

137 ․ Պակասաւոր ԳՈԼ, արմատ՝ ԳՈՅ ․ կամ, էմ ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ներկայ

Գոմ ․ Գոմք ․
Գոս ․ Գոյք ․
Գոյ ․ Գոն ։

Անցեալ անկատար

Գոյի ․ Գոյաք ․
Գոյիր ․ Գոյիք ․
Գոյր ․ Գոյին ։

Անցեալ կատարեալ

չունի ․ չունի ։

Ապառնի

չունի . չունի ։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

չունի . չունի ։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| գուցեմ. | գուցեմք . |
| գուցես . | գուցէք . |
| գուցէ . | գուցեն ։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ . Գոլ ։

138 . Անկան բայերուն կարգը կը դրուի նաև Իբ բայը, որ կայ ըսել է, և աւելի շատ կը բանի Չիք, չկայ, ոչ գոյ ըսելու տեղ ։

## ԳԼՈՒԽ Ե.

# ԴԵՐԲԱՅ

139 . Վերը (84) ըսինք թէ երեք Դերբայ կան, Անորոշ, Անցեալ, Ապառնի, որոնք դէմք չունին, և թէ իբրև անուն և թէ իբրև բայ կը գործածուին ։

140 . Անորոշ դերբայը իբրև գոյական Անուն կը հոլովի գէթ բառին հոլովմանը պէս միայն եզակի . ինչպէս,

Ա . Լծորդ . | Սիրել, սիրելու, սիրելով .
Տեսանել, տեսանելու, նելով .

Բ. Լծորդ.

Խօսել, խօսելոյ, խօսելով.
Ուսանել, ուսանելոյ, նելով.

Գ. Լծորդ.

Աղալ, աղալոյ, աղալով.
Ստանալ, ստանալոյ, ստանալով.

Դ. Լծորդ.

Զենուլ, զենլոյ, զենլով.
Զգենուլ, զգենլոյ, զգենլով.

141. Անցեալ դերբայը իբրեւ ածական Անուն կը հոլովի գեւ. բառին հոլովմանը պէս՝ թէ եզակի և թէ յոգնակի. ինչպէս,

Ա. Լծորդ.

Սիրեալ, սիրելոյ, սիրելով. կամ
Սիրեցեալ, սիրեցելոյ, եայլն.
Սիրեալք, սիրելոց, սիրելովք.
Տեսեալ, տեսելոյ, տեսելով.
Տեսեալք, տեսելոց, տեսելովք.

Բ. Լծորդ.

Խօսեալ, խօսելոյ, խօսելով.
Խօսեալք, խօսելոց, խօսելովք.
Ուսեալ, ուսելոյ, ուսելով.
Ուսեալք, ուսելոց, ուսելովք.

Գ. Լծորդ.

Աղացեալ, աղացելոյ, ցելով.
Աղացեալք, աղացելոց, ցելովք.
Ստացեալ, ստացելոյ, ցելով.
Ստացեալք, ստացելոց, ցելովք.

Դ. Լծորդ.

Զենեալ, զենելոյ, զենելով.
Զենեալք, զենելոց, նելովք.
Զգեցեալ, զգեցելոյ, ցելով.
Զգեցեալք, զգեցելոց, ցելովք.

Լինիմ էական բային անցեալ դերբայը նախդիրէ միայն կը հոլովի։

142. Ապառնի դերբայը չհոլովիր։

143. Դերբայները իբրև բայ կը գործածուին Եմ և Լինիմ էական բայերուն հետ. և անանկ ժամանակ մը կը ցուցնեն որ բայը լոկ իր վերջը փոխելով չկրնար այն ժամանակը ցուցնել։

144. Ներկայ դերբայը Եմ բային ներկայ անկատար և ստորադասական եղանակի երրորդ դէմքերուն հետ կ'ըլլայ. ինչպէս, գրելէ, գրելէր. գրել իցէ. որ կը նշանակեն գրել կը փայլէ, գրել կը փայլէր, գրել փայլէ նէ, եազմագը տըր. եազմագը իտի. եազմագը իսէ։

145. Անցեալ դերբայն ալ Եմ բային ներկայ, անկատար և ստորադասական ժամանակներուն հետ մէկտեղ կը գործածուի։ Ներկային հետ՝ եղած լմնցած բանը կը ցուցնէ, բայց բուն կատարեալէն ցուցրածէն աւելի ժամանակ անցած ըլլալը իմացնելով. ինչպէս, գրեալ եմ, գրած եմ. եազմըշըմ ըսելը շատոնց գրեր եմ ըսելու պէս է. ասոր կ'ըսուի Յարաջափար։ Անկատարին հետ՝ կը ցուցնէ որ գործը լմննալէն ետքը այնքան ժամանակ անցեր է, որ այն միջոցին ուրիշ գործ մ'ալ եղեր լմնցեր է. ինչպէս, գրեալ էի, գրած էի, եազմըշտըմ. ասոր կ'ըսուի Դերաջափար։ Ստորադասականին հետ՝ գործոյն ըլլալը անստոյգ կերպով մը կը ցուցնէ. ինչպէս, Գրեալ իցեմ,

Գրերեմէ, եազմըշըդամ. որ թէպէտ անցած ատեն կը ցուցնէ, բայց գործոյն եղած ըլլալը տարակուսելի կը թողու. ասոր կ'ըսուի Ստորադասական անցեալ ժամանակ ։

Այս Յարակատար, Գերակատար և Ստորադասական անցեալ ժամանակներէն մէկ ամբողջ օրինակը դնենք հոս ։

### Յարակատար

| | | |
|---|---|---|
| Սիրեալ եմ. | սիրած եմ. | սէվմիշիմ. |
| Սիրեալ ես. | սիրած ես. | սէվմիշսին. |
| Սիրեալ է. | սիրած է. | սէվմիշտիր. |
| Սիրեալ եմք. | սիրած ենք. | սէվմիշիզ. |
| Սիրեալ էք. | սիրած էք. | սէվմիշսինիզ. |
| Սիրեալ են. | սիրած են. | սէվմիշլէր տիր ։ |

### Գերակատար

| | | |
|---|---|---|
| Սիրեալ էի. | սիրած էի. | սէվմիշիտիմ. |
| Սիրեալ էիր. | սիրած էիր. | սէվմիշիտին. |
| Սիրեալ էր. | սիրած էր. | սէվմիշիտի. |
| Սիրեալ էաք. | սիրած էինք. | սէվմիշիտիք. |
| Սիրեալ էիք. | սիրած էիք. | սէվմիշիտինիզ. |
| Սիրեալ էին. | սիրած էին. | սէվմիշլէրիտի ։ |

### Ստորադասական անցեալ

| | | |
|---|---|---|
| Սիրեալ իցեմ. | սիրած եմ նէ. | սէվմիշիսէմ. |
| Սիրեալ իցես. | սիրած ես նէ. | սէվմիշիսէն. |
| Սիրեալ իցէ. | սիրած է նէ. | սէվմիշիսէ. |
| Սիրեալ իցեմք. | սիրած ենք նէ. | սէվմիշիսէք. |
| Սիրեալ իցէք. | սիրած էք նէ. | սէվմիշիսէնիզ. |
| Սիրեալ իցեն. | սիրած են նէ. | սէվմիշլէրիսէ ։ |

146. Թէ միւս բոլոր լծորդութեանց վը-րայ խոնարհող, և թէ արտաքին խոնարհում ունեցող բայերն այս օրինակին նման կրնան ունենալ յարակատար, գերակատար և ստորադասական անցեալ ժամանակներ, իրենց անցեալ դերբային հետ մէկտեղ Լինիմ բային ներկայն, անկատարը և ստորադասականը դրուելով:

147. Անցեալ դերբայը Լինիմ էական բային հետ դրուելով, թէ ներգործական և թէ կրաւորական նշանակութիւն կ'ունենայ. ըստ որում անցեալ դերբային ներգործականը ու կրաւորականը միևնոյն է. բայց աւելի կրաւորական բայի ոյժ կ'ունենայ. և այս ձևը կը գործածուի մանաւանդ յատուկ կրաւորական չունեցող ներգործական բայերուն համար:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ներկայ

| | | |
|---|---|---|
| Սիրեալ լինիմ. | կը սիրուիմ. | սիրուած կ'ըլլամ. |
| Սիրեալ լինիս. | կը սիրուիս. | սիրուած կ'ըլլաս. |
| Սիրեալ լինի. | կը սիրուի. | սիրուած կ'ըլլայ. |
| Սիրեալ լինիմք. | կը սիրուինք. | սիրուած կ'ըլլանք. |
| Սիրեալ լինիք. | կը սիրուիք. | սիրուած կ'ըլլաք. |
| Սիրեալ լինին. | կը սիրուին. | սիրուած կ'ըլլան: |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Սիրեալ լինէի. | կը սիրուէի. | սիրուած կ'ըլլայի. |
| Սիրեալ լինէիր. | կը սիրուէիր. | սիրուած կ'ըլլայիր. |
| Սիրեալ լինէր. | կը սիրուէր. | սիրուած կ'ըլլար. |
| Սիրեալ լինէաք. | կը սիրուէինք. | սիրուած կ'ըլլայինք. |
| Սիրեալ լինէիք. | կը սիրուէիք. | սիրուած կ'ըլլայիք. |
| Սիրեալ լինէին. | կը սիրուէին. | սիրուած կ'ըլլային: |

## Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Սիրեալ եղէ · | սիրուեցայ · | սիրուած եղայ · |
| Սիրեալ եղեր · | սիրուեցար · | սիրուած եղար · |
| Սիրեալ եղև · | սիրուեցաւ · | սիրուած եղաւ · |
| Սիրեալ եղաք · | սիրուեցանք · | սիրուած եղանք · |
| Սիրեալ եղէք · | սիրուեցաք · | սիրուած եղաք · |
| Սիրեալ եղեն · | սիրուեցան · | սիրուած եղան ։ |

## Ապառնի

| | | |
|---|---|---|
| Սիրեալ եղէց · | (պիտի) սիրուիմ · | սիրուած ըլլամ · |
| Սիրեալ եղիցիս · | սիրուիս · | սիրուած ըլլաս · |
| Սիրեալ եղիցի · | սիրուի · | սիրուած ըլլայ · |
| Սիրեալ եղիցուք · | սիրուինք · | սիրուած ըլլանք · |
| Սիրեալ եղիջիք · | սիրուիք · | սիրուած ըլլաք · |
| Սիրեալ եղիցին · | սիրուին · | սիրուած ըլլան ։ |

## Կամ

| | |
|---|---|
| Սիրեալ լիցիմ · | Սիրեալ լիցուք · |
| Սիրեալ լիցիս · | Սիրեալ լիջիք · |
| Սիրեալ լիցի · | Սիրեալ լիցին ։ |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Սիրեալ լեր · | սիրուէ · | սիրուած եղիր · |
| Մի սիրեալ լինիր · | մի սիրուիր · | սիրուած մ՚ըլլար · |
| Սիրեալ լերուք · | սիրուեցէք · | սիրուած եղէք · |
| Մի սիրեալ լինիք · | մի սիրուիք · | սիրուած մ՚ըլլաք ։ |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Սիրեալ լինիցիմ · | (թէ որ) սիրուիմ · | սիրուած ըլլամ · |
| Սիրեալ լինիցիս · | սիրուիս · | սիրուած ըլլաս · |
| Սիրեալ լինիցի · | սիրուի · | սիրուած ըլլայ · |
| Սիրեալ լինիցիմք · | սիրուինք · | սիրուած ըլլանք · |

Սիրեալ լինիցիք · սիրուիք · սիրուած ըլլաք ·
Սիրեալ լինիցին · սիրուին · սիրուած ըլլան :

ԱՆՈ · ԴԵՐԲ · Սիրեալ լինել · սիրուիլ · սիրուած ըլլալ :

ԱՆՑ · ԴԵՐԲ · Սիրեալ լեալ կամ եղեալ · սիրուած, սիրուած եղած :

ԱԳ · ԴԵՐԲ · Սիրեալ լինելոց · սիրուելու · սիրուած ըլլալու :

148 · Թէ միւս բոլոր լծորդութեանց վրայ խոնարհող, և թէ արտուղի խոնարհում ունեցող ներգործական բայերը այս օրինակին նման կրնան կրաւորական ունենալ, իրենց անցեալ դերբային հետ մէկտեղ Լինիմ բայն ամբողջ խոնարհելով:

149 · Ապառնի դերբայն ալ Եմ բային ներկայ, անկատար և ստորադասական ժամանակներուն հետ մէկտեղ կը գործածուի, և ապառնիի նշանակութիւն կուտայ, բայց մէկ ստուգութիւն մ'աւելցնելով. ինչպէս, Գալոց է կ'ըսուի անոր համար, որուն գալը ստոյգ գիտենք. և այս է աշխարհաբառին մէջ պիտի գայ և տաճկերէն կէլէճէք դիր ըսածը: Եկեսցէ ըսելը՝ որ բուն ապառնի է, այս ստուգութիւնը չցուցըներ. գալը ըլլալը ստոյգ չգիտցած մարդերնուս համար ալ կրնանք ըսել՝ Եկեսցէ. և աս ալ աշխարհաբառին մէջ կուգայ, գայ, և տաճկերէն կէլիր ըսածին պէս, նշանակութիւն ունի:

150 · Ապառնի դերբայը Եմ բայով խոնարհուած ամբողջ օրինակ մը դնենք հոս, որ

Թէ ներգործական և թէ կրաւորական նշանակութիւնն ունի, բայց որում Ապառնի դերբայը ներգործական և կրաւորական մէկ է։

Սիրելոց եմ. պիտի սիրեմ, պիտի սիրուիմ, կամ սիրելու եմ, սիրուելու եմ.

Սիրելոց ես. պիտի սիրես. պիտի սիրուիս.
Սիրելոց է. պիտի սիրէ. պիտի սիրուի.
Սիրելոց եմք. պիտի սիրենք. պիտի սիրուինք.
Սիրելոց էք. պիտի սիրէք. պիտի սիրուիք.
Սիրելոց են. պիտի սիրեն. պիտի սիրուին։

Սիրելոց էի. պիտի սիրէի. պիտի սիրուէի.
Սիրելոց էիր. պիտի սիրէիր. պիտի սիրուէիր.
Սիրելոց էր. պիտի սիրէր. պիտի սիրուէր.
Սիրելոց էաք. պիտի սիրէինք. պիտի սիրուէինք.
Սիրելոց էիք. պիտի սիրէիք. պիտի սիրուէիք.
Սիրելոց էին. պիտի սիրէին. պիտի սիրուէին։

Սիրելոց իցեմ. (Թէ որ) պիտի սիրեմ. պիտի սիրուիմ.
Սիրելոց իցես. պիտի սիրես. պիտի սիրուիս.
Սիրելոց իցէ. պիտի սիրէ. պիտի սիրուի.
Սիրելոց իցեմք. պիտի սիրենք. պիտի սիրուինք.
Սիրելոց իցէք. պիտի սիրէք. պիտի սիրուիք.
Սիրելոց իցեն. պիտի սիրեն. պիտի սիրուին։

151. Թէ միւս բոլոր լծորդութեանց վերայ խոնարհող և թէ արտուղի խոնարհում ունեցող բայերը այս օրինակին նման կրնան ըլլալ. Ապառնի դերբայը Եմ բային հետ մէկտեղ խոնարհելով։

152. Հոս գիտնալ արժան է որ, դերբայները էական բայերով գործածուած ատեն,

կընան եական բայէն եաքն ալ դրուիլ այսպէս, Է սիրել. Եմ սիրել. Լինիմ սիրեալ. Եմ սիրելոց, եայլն :

## ԳԼՈՒԽ Զ.

# ՄԱԿԲԱՅ

153. Մակբայ կըսուին այն բառերը, որ բայերու վրայ դրուելով՝ անոնց գործողութեան պարագաները այսինքն կերպը, տեղը, ատենը եայլն կը ցուցընեն : Շատ գործածական մակբայներն իրենց նշանակութեամբը հոս դնենք :

Աստ, Այսր } հոս :
Այդր, հոդ :
Անդ, Անդր, Անդանօր } հոն :
Աստի, ասկէց :
Այտի, ատկէց :
Անտի, անկէց :
Ուստի՞, ուսկէ՞ց :
Արտաքս, դուրս :
Արտաքուստ, դուրսէն :
Ի ներքս, ներս :
Ի ներքուստ, ներսէն :
Մօտ, Մերձ } մօտ :
Հեռի, հեռու :
Ի վեր, վեր :
Հերուն, անցած տարի :

Գիշերայն, գիշերանց :
Այգուն, առաւօտանց :
Վաղ, շուտով :
Իսկոյն, ճէշէն ի ճէշ :
Վաղվաղակի, շուտով :
Նախ, առաջ :
Ապա, ետքը :
Զարաչար, խիստ գէշ :
Ջուր, Վայրապար } պարապ տեղը :
Զիարդ, ի՞նչպէս :
Զի՞, Ընդէ՞ր } ի՞նչու :
Ահա, Ահաւասիկ, Ահաւադիկ, Ահաւանիկ } էշտէ :
Թերեւս, պէլքի :
Այո, այո :

Յայնժամ, ան ատէն ։
Ստէպ, սըք սըք ։
Յաճախ, շատ, շարունակ ։
Սակաւ, քիչ ։
Յոյժ,
Կարի, } շատ ։
Ի վերուստ, վերէն ։
Բարւոք, աղէկ ։
Ոչ,
Մի, } չէ, էօգ ։
Մինչ,
Մինչդեռ,
Յորժամ,
Իբրև, } երբ ։
Ո՞ւր, ո՞ւր ։
Անդրէն, նորէն ։
Այժմ, հիմա ։
Յետոյ, ետքը ։
Այսօր, այսօր ։
Վաղիւ, վաղը ։
Կանուխ, կանուխէն ։
Անագան, ուշ ։
Երէկ, երէկ ։
Եռանդ, առջի օրը ։
Մերթ, մէյմը ։
Երբեմն, ատենով, ատէն մը ։
Մանաւանդ, հաթթա ։
Այսչափ, այսչափ ։
Այդչափ, այդչափ ։
Այնչափ, այնչափ ։
Այսքան, այսքան ։
Միանգամ, անգամ մը ։
Միւսանգամ, ուրիշ անգամ ։
Դարձեալ,
Վերստին,
Կրկին, } նորէն ։
Միայն,
Եւեթ, } տալը ։
Արդեօք,
Միթէ, } աճապա ։
Ապաքէն, ի հարկէ ։
Չև,
Չև ևս, } դեռ չեղած ։
Ամէն,
Ամէն ամէն, } իրաւ ։
Միշտ,
Հանապազ, } ամէն ժամեր դայիմա ։
Ընդ փոյթ, շուտով ։

154. Ածականներն ալ եղակի, և երբեմն յոգնակի «ով», և իմն, ինչ, մի բառերով կը դրուին բային վրայ և մակբայ կ՚ըլլան. ինչպէս,

Նոր (շինեաց), նոր (շինեց) ։
Մեծամեծս (փքալ), մեծ մեծ (խրոխտալ) ։
Գեղեցիկ իմն (պատմել), աղուոր մը (պատմել) ։
Սակաւ ինչ (ծառայել), քիչ մը (ծառայել) ։
Փոքր մի (ննջել), քիչ մը (քնանալ) ։

# ԳԼՈՒԽ Է.

# ՇԱՂԿԱՊ

**155**. Շաղկապ կ'ըսուին այն բառերը, որ բառ բառի և խօսք խօսքի հետ կը կապեն։

**156**. Գլխաւոր շաղկապները հետևեալներն են, և. ու. ալ. եթէ. թէ. կամ. իսկ. բայց. այլ. սակայն. թէպէտ. քանզի. քան. արդ. ապա. ուրեմն. ապա ուրեմն. գոնեայ. գէթ, ևայլն։

# ԳԼՈՒԽ Ը.

# ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

**157**. Ձայնարկութիւն կ'ըսուին այն տեսակ բառերը կամ ձայները, որոնք կիրք մը կը յայտնեն, երկիւղ, զարմանք, բարկութիւն, զղջումն, ցաւ, արհամարհութիւն, ևայլն։

**158**. Գլխաւոր ձայնարկութիւնները հետևեալներն են,

Ո՛հ. օ՛. ո՛չ. օ՛ն. վա՛հ. աղէ՛. բաբէ. եղո՛ւկ. հա՛պա. վա՛շ. էյվ՛ւ. աւա՛ղ. ա՛յ, ևայլն։

ՎԵՐՋ Ա. ՄԱՍԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

# ՄԱՍՆ Բ·

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

159· Առաջին մասին մէջ խօսքի մասերը կազմող ութ տեսակ բառերուն բնութեան վրայ խօսեցանք· հիմա պէտք խօսինք թէ բառերը ինչ պաշտօն կը կատարեն խօսքի մէջ· և այն պաշտօնները կատարելու համար ինչպէս կը համաձայնին իրարու հետ:

160· Բառերը խօսքի մէջ հետեւեալ պաշտօններն ունին·

1· Տէր բայի և Բայ·
2· Խնդիր և Խնդրառու·
3· Յատկացուցիչ և Յատկացեալ·
4· Բացայայտիչ և Բացայայտեալ·
5· Ածական և Գոյական·
6· Յարաբերական և Յարաբերեալ:

161· Հետեւաբար այս Երկրորդ մասին մէջ բառերուն այս պաշտօններուն վրայ կարգաւ պէտք խօսինք նախ, յետոյ մասնաւոր գիտելիքներ պէտք աւանդենք Դերանուան Յօդի, Դերբայի, Մակբայի, Շաղկապի վրայ:

# ԳԼՈՒԽ Է.

# ՏԷՐ ԲԱՅԻ ԵՒ ԲԱՅ

**162.** Վերը (77) ըսինք որ բայը ընել, ընուել, ըլլալ կը ցուցընէ։ Արդ ընել մը ընող մը պէտք ունենայ, ընուել մը՝ ընուող մը, ըլլալ մը՝ ըլլող մը։ Այս ընողն, ընուողն, ըլլողն կ'ըսուի Տէր բայի, կամ բային գործողութեան տէրը։

**163.** Տէր բային ով կամ ինչ բան եղակի՝ ո՞րոնք կամ ինչ բաներ յոգնակի հարցմանց կը պատասխանէ. ինչպէս, հայրս եկաւ, առաքինութիւնը պատուեցաւ, զինուորները մեռան, ցաւերը աւելցան, ըսեմ նէ, ո՞վ եկաւ, —հայրս. ի՞նչ բան պատուեցաւ, —առաքինութիւնը. ո՞րոնք մեռան, —զինուորները. ի՞նչ բաներ աւելցան, ցաւերը. հայրս Տէր բայի է եկաւ բային, առաքինութիւնը Տէր բայի է պատուեցաւ բային, զինուորները Տէր բայի է մեռան բային, ցաւերը Տէր բայի է աւելցան բային։

**164.** Տէր բային ուղղական հոլով կը դրուի, ու բային ալ թուով ու դէմքով անոր համաձայն. ինչպէս,

Ես սիրեցի, ես սիրեցի. Մեք սիրեցաք, մենք սիրեցինք.
Դու ասացեր. դուն ըսիր, Դուք ասացէք. դուք ըսիք.
Նա գործեաց, ան գործեց. Նոքա գործեցին. անոնք գործեցին։

Ով սիրեց, — Ես, Տէր բայի սիրեցի բային։ Ես Ա. դէմք ըլլալուն՝ բայն ալ սիրեցի եղակի Ա. դէմք դրուած է։

Որո՞նք սիրեցին, — Մեք. Տէր բայի սիրեցաք բային: Մեք յոգնակի Ա. դէմք ըլլալուն՝ բայն ալ սիրեցաք՝ յոգնակի Ա. դէմք դրուած է:

Ո՞վ ըրաւ, — Դու. Տէր բայի արարեր բային: Դու եզակի Բ. դէմք ըլլալուն՝ բայն ալ արարեր եզակի Բ. դէմք դրուած է:

Որո՞նք ըրին, — Դուք. Տէր բայի արարէք բային: Դուք յոգնակին Բ. դէմք ըլլալուն՝ բայն ալ արարէք յոգնակի Բ. դէմք դրուած է:

Ո՞վ գործեց, — Նա. Տէր բայի գործեաց բային: Նա եզակի Գ. դէմք ըլլալուն՝ բայն ալ գործեաց եզակի Գ. դէմք դրուած է:

Որո՞նք գործեցին. — Նոքա. Տէր բայի գործեցին բային: Նոքա յոգնակի Գ. դէմք ըլլալուն՝ բայն ալ գործեցին յոգնակի Գ. դէմք դրուած է:

Վերի օրինակներուն մէջ կը տեսնենք որ Տէր բայերը միայն Դերանուն էին: Տէր բայ կ'ըլլան նաև Անունը, Դերբայը, մինչև անգամ Ածականը, Շաղկապը, Նախադրութիւնն իր խնդրովը, հոլոված բառ, և դիմաւոր բայ. սակայն ասոնք խիստ քիչ կը գործածուին. ընդհանրապէս Անունները, Դերանունները ու Դերբայները Տէր բայի կ'ըլլան:

165. Առաջին ու երկրորդ դէմքով Տէր բայերն Ես, Մեք. Դու, Դուք դերանուններն են. Անուններն ու Դերբայները դէմք չունին, և անոր համար ամէնքն ալ երրորդ դէմքով կը բանին, և իրենց բայը երրորդ դէմքով կը դրուի. ինչպէս,

| | |
|---|---|
| Աստուած ստեղծ. | Աստուած ստեղծեց: |
| Հովիւք արածեն. | Հովիւները կ'արածեն: |
| Անասունք սատակեցան. | Անասունները սատկեցան: |
| Կորուսեալն գտաւ. | Կորսուածը գտնուեցաւ: |
| Մեռեալք յարիցեն. | Մեռելները պիտի յառնեն: |

**166.** Ածական անունները և մարդու անունները՝ որ երրորդ դէմք են, կրնան առաջին և երկրորդ դէմք ունենալ։ Առաջին դէմք ցուցնելու համար ս դիմորոշ յօդը կ'առնեն. ինչպէս,

Նուաստս ասացի. — Ես նուաստս ըսի։

Տէրս արարի. — Ես տէրս ըրի։

Երկրորդ դէմք ցուցնելու համար դ դիմորոշ յօդը կ'առնեն. ինչպէս,

Անմահդ մեռար. — Դու անմահդ մեռար։

Այս ս և դ դիմորոշներուն գործածութեան վրայ դիմորոշ յօդերուն գլխուն մէջ պիտի խօսինք։

**167.** Երբ երկու կամ աւելի բառեր տէր բայի ըլլան, բայը յոգնակի կը դրուի, թէև տէր բային կազմող բառերը եզակի ըլլան. ինչպէս,

Պետրոս և Յովհաննէս եկին. — Պետրոս ու Յովհաննէս եկան, չըլլար եկաւ։

Նոյ և որդիքն մտին. — Նոյ ու զաւակները մտան, չըլլար մտաւ։

**168.** Որոշեալ թուականները մէկէն զատ թէ գոյականով և թէ առանց գոյականի, եզակի ալ դրուին նէ, իրենց բայը յոգնակի պիտի դրուի, որովհետև նշանակութիւննին յոգնակի է. ինչպէս,

Պատահեցան տասն այր. — տասը մարդ պատահեցան, չըլլար պատահեցաւ։

Հինգն եկին. — հինգը եկան, չըլլար եկաւ։

**169.** Երբ ատանկ երկու կամ աւելի բառեր տէր բայի ըլլան, և անոնց մէջէն ալ Ա.

Բ. Գ. դէմք ունեցողներ գտնուին, բայց վերի կանոնին համեմատ յոգնակի, և նախապատիւ դէմք ունեցող տէր բային դէմքովը կը դրուի։ (Ա. դէմքը Բ. դէմքէն, Բ. դէմքը Գ. դէմքէն նախապատիւ է). ինչպէս,

Ես և դու և բազմութիւնդ աշակերտեցաք.

— Ես ու դուն ու բազմութիւնդ աշկերտեցինք։

Հոս Ես Ա. դէմք՝ Դուն Բ. դէմք՝ Բազմութիւնդ Գ. դէմք տէր բայի են աշկերտեցինք բային։ Տէր բայիներուն մէջ Ես նախապատիւ դէմքն է. բայն ալ անոր դէմքով, այսինքն Ա. դէմքով դրուեր է, և յոգնակի, ըստ որում երեք հատ տէր բայի ունի։

Դու և որդիքդ պատուեցայք. — Դուն ու զաւակներդ պատուուեցաք։

Հոս Դուն Բ. դէմք՝ որդիքդ Գ. դէմք տէր բայի են պատուուեցաք բային։ Դուն տէր բային որդիքդ տէր բայիէն նախապատիւ է, անոր համար պատուուեցաք բայն ալ Դուն ին դէմքով այսինքն երկրորդ դէմքով դրուեր է։

170. Երբ ըսինք թէ տէր բային ուղղական հոլով կը դրուի ամէն բայի վրայ. բայց անորոշ և անցեալ դերբայներուն վրայ սեռական հոլով կը դրուի տէր բային. ինչպէս,

Տեսեալ Յիսուսի. — Յիսուսը տեսնելով։

Հոս Յիսուսի տէր բայի է տեսեալ անցեալ դերբային։ Անցեալ դերբայը հիմա քիչ գործածուի նէ, անորոշ դերբայի գործածականն ալ կ'ունենայ։

Ի ժողովել Պաւղոսի. — Պաւղոսին ժողվելու ատենը։

Հոս Պաւղոսի տէր բայի է ի ժողովել անորոշ դերբային, որ հոլոված ըլլալով ատենը նշանակութիւն կը ցուցնէ։

Լուեալ ձեր. — Ձեր լսելով։

Ձեր տէր բայի է լուեալ անցեալ դերբային։

Ի մտանել Նորա. — Անոր մտնելու ատենը։

Նորա տէր բայի է ի մտանել անորոշ դերբային։

171. Անորոշ դերբային, մանաւանդ ուղ-ղականին տէր բային եթէ դերանուն ըլլայ, սեռական կը դրուի. ինչպէս,

Ի կալ նմա յաղօթս. — Անոր աղօթքի կենալը տեսնելը:

Նմա տէր բայի է ի կալն:

Ոչ կամիմք թագաւորել դմա. — Ասոր թագաւորե-լը չենք ուզեր, կամ չենք ուզեր որ աս թագաւորէ:

Դմա տէր բայի է թագաւորելին:

Երթալ անցանել ինչ յաշխարհ իմ. — Երթամ անցնիմ իմ երկիրս:

Ինչ տէր բայի է երթալ անցանելին:

172. Անցեալ դերբայը Եմ էական բային հետ Յարակատար Գերակատար և Ստորադասական անցեալ ժամանակները կը շինէ բունք Դերբայներուն մէջ (145): Այս ժամանակներուն եզակի երրորդ դէմքերը ամէն դէմքի տեղ կը բանին եզակի և յոգնակի, երբ քովերնին ստացական հոլովով Իմ, Քո, Նորա, Մեր, Ձեր, Նոցա դերանունները տէր բայի առնեն. ինչպէս,

Յարակատար ժամանակին եզակի երրորդ դէմքը ամէն դէմքի տեղ,

| | |
|---|---|
| Սիրեալ է իմ, | Ա. դէմք եզ. |
| Սիրեալ է քո, | Բ. դէմք եզ. |
| Սիրեալ է նորա, | Գ. դէմք եզ. |
| Սիրեալ է մեր, | Ա. դէմք յոգ. |
| Սիրեալ է ձեր, | Բ. դէմք յոգ. |
| Սիրեալ է նոցա, | Գ. դէմք յոգ. |

Ինչպէս օրինակներուն մէջ կը տեսնուի, Սիրեալ է միշտ եզակի երրորդ դէմք մնացած է. բայց իմ դերանունը Ա. դէմք եզակին ցուցած է, քո Բ. դէմք եզակին, նորա Գ. դէմք եզակին.

Նոյնպէս ալ մեր Ա. դէմք յոգնակին՝ ձեր Բ. դէմք յոգնակին՝ նոցին Գ. դէմք յոգնակին. անանկ որ ըսուած է

| | | |
|---|---|---|
| Սիրեալ է իմ, | փոխանակ ըսելու | Սիրեալ եմ ես. |
| Սիրեալ է քո, | " | Սիրեալ ես դու. |
| Սիրեալ է նորա, | " | Սիրեալ է նա. |
| Սիրեալ է մեր, | " | Սիրեալ եմք մեք. |
| Սիրեալ է ձեր, | " | Սիրեալ էք դուք. |
| Սիրեալ է նոցա. | " | Սիրեալ են նոքա: |

Ասանկ ալ Գերակատար ժամանակին եզակի երրորդ դէմքը ամէն դէմքի տեղ կը գործածուի. ինչպէս,

| | |
|---|---|
| Սիրեալ էր իմ, | Ա. դէմք եզ. |
| Սիրեալ էր քո. | Բ. դէմք եզ. |
| Սիրեալ էր նորա, | Գ. դէմք եզ. |
| Սիրեալ էր մեր, | Ա. դէմք յոգ. |
| Սիրեալ էր ձեր, | Բ. դէմք յոգ. |
| Սիրեալ էր նոցա, | Գ. դէմք յոգ. |

Ասանկ ալ Ստորադասական անցեալ ժամանակին եզակի երրորդ դէմքը ամէն դէմքի տեղ կը գործածուի. ինչպէս,

| | |
|---|---|
| Սիրեալ իցէ իմ, | Ա. դէմք եզ. |
| Սիրեալ իցէ քո, | Բ. դէմք եզ. |
| Սիրեալ իցէ նորա, | Գ. դէմք եզ. |
| Սիրեալ իցէ մեր, | Ա. դէմք յոգ. |
| Սիրեալ իցէ ձեր, | Բ. դէմք յոգ. |
| Սիրեալ իցէ նոցա, | Գ. դէմք յոգ. |

173. Վերի օրինակներուն մէջ կը տեսնուի որ առաջ անցեալ դերբայը, ետքը էական բայը և ետքը դերանուն վեր բայէն դրուած են. այս կարգը կրնայ փոխուիլ ստորաբար. այսպէս,

Սիրեալ է իմ.
է իմ Սիրեալ.
իմ է Սիրեալ.
իմ Սիրեալ է։

Չ կամ ոչ մասնիկս գնել պէտք ըլլայ, սովորաբար էական բայը անցեալ դերբայէն առաջ կը դրուի. ինչպէս,

Չէ Սիրեալ իմ.
իմ չէ Սիրեալ.
չէ իմ Սիրեալ.

Աւ չըսուիր Սիրեալ չէ իմ, Սիրեալ իմ չէ։

174. Առաջին և երկրորդ դէմքի բայերուն տէր բային, Ես, Մեք, Դու, Դուք, սովորաբար յայտնի չեն դրուիր. ուստի կ'ըսուի

Կամիմք տեսանել. փոխանակ ըսելու, Մեք կամիմք տեսանել։

Խորհեցար գնալ. փոխանակ ըսելու, Դու խորհեցար գնալ։

Բայց երրորդ դէմքի բայերուն դերանուն տէր բայիները, Նա, Նոքա, Ինքն, Ինքեանք, ան ատեն յայտնի չեն դրուիր, երբ նախընթաց բային տէր բային ցուցընեն. ինչպէս,

Զաքէոս խնդրէր տեսանել, և ոչ կարէր. — Զաքէոս կ'ուզէր տեսնել, ու չէր կրնար։

Հոս կարէր բային տէր բային զօրութեամբ Նա է, որ չէ դրուած, ըստ որում միևնոյն Զաքէոսին համար է խօսքը, ուզող և չկրցողը Զաքէոսն է։ Ուստի աւելորդ է ըսել. Զաքէոս խնդրէր տեսանել, և ոչ կարէր Նա։

175. Վերը (164) ըսուեցաւ թէ տէր բային թուով կը համաձայնի իր բային այսին-

քըն յոդնակի բային տեր բային յոդնակի ուղղական կ՚ըլլայ ։ Բայց յոդնակի ուղղական անուններն երբեմն յոդնականացուցիչ *ին տեղ ս գիրն առնելով տեր բայի կ՚ըլլան, և դարձեալ համաձայն կը համարուին . ինչպէս,

Արտասուս բազում հեղան . — շատ արցունք թափուեցան ։

Ինձ արտասուս զան ընդ մոլորութիւնդ . — մոլորութեանդ վրայ լալս կուգայ ։

Երիս խորհուրդս զարմանալիս գործեցան . — երեք զարմանալի խորհուրդներ գործուեցան ։

Բայն ալ եզակի կրնայ դրուիլ . ինչպէս,

Տուեալ է . . . այլում շնորհս բժշկութեանց . — ուրիշին տրուած է բժշկութեան շնորհք ։

Երիս խորհուրդս սոսկալիս ի քեզ տեսանի . — երեք սոսկալի խորհուրդներ քու վրադ կը տեսնուին ։

Ոչ էր ընդ նոսա Աստուածս օտարոտիս . — անոնց հետ օտար աստուածներ չկային ։

## ԳԼՈՒԽ Բ.

# ԽՆԴԻՐ ԵՒ ԽՆԴՐԱՌՈՒ

176 . Խնդիր կ՚ըսուին այն բառերը, որ խնդրառուին նշանակութիւնը կ՚որոշեն կամ կ՚ամբողջացնեն ։

Ինչպէս, երբ ըսենք Աստուած ստեղծ, ասիկա ամբողջ խօսք մը չկազմեր, վասն զի կ՚իմա

նանք որ Աստուած ստեղծեր է, ստեղծողն Աստուած է, բայց չենք իմանար թէ ինչ ըստեղծեր է. ուստի հարկ է որ քովը ուրիշ բառ մը դնենք, օրինակի համար. Աստուած ստեղծ զարարածս, և կը հասկնանք որ Աստուած ստեղծեր է արարածները. կ'ըլլայ խօսք մը. ահա զարարածս բառը ստեղծ բային նշանակութիւնը ամբողջացուց, և անոր խնդիրն եղաւ: Իսկ թէ որ ուզենք իմանալ թէ Աստուած արարածները ուսկէ ստեղծեր է, վերի խօսքին քով ուրիշ բառ մ'ալ կը դնենք. օրինակի համար. Աստուած ստեղծ զարարածս յոչընչէ, և կը հասկնանք որ Աստուած արարածները ոչընչէ ստեղծեր է. կ'ըլլայ ամբողջ խօսք մը. վասն զի ստեղծելու գործողութեանը՝ ստեղծողը ցուցուած է, որ է Աստուած. ստեղծուածներն ալ ցուցուած են, որ են արարածները. և ուսկէ ստեղծելը ցուցուած է, որ է ոչընչէ բառը:

Ահա զարարածս և յոչընչէ բառերը խնդիր կ'ըսուին ստեղծ խնդրառուին:

Խնդիրը երկու կերպ կ'ըլլայ, Սեռի խընդիր և Բնութեան խնդիր:

## 1. ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

177. Ներգործական բայերը հայցական հոլով խնդիր կ'ունենան, որն որ գործողութիւնը կրողն է, և կ'ըսուի Սեռի խնդիր. և զո՞վ կամ զի՞նչ բառը հարցման կը պատասխանէ. զորօրինակ, Սիրել ներգործական բայ է, և հարկ

է որ քովը դրուի հայցական հոլովով այն բա-նը որ կը սիրուի, սիրոյ գործողութիւնը կը կրէ. ինչպէս,

Սիրեցի զԱստուած. սիրեցի զքեզ. սիրեցի զնա.

զԱստուած, զքեզ, զնա հայցական սեռի խնդիր են սիրեցի բա-յին. վասն զի ես եմ որ կը սիրեմ, և անոնք կը սիր-ուին:

Զո՞վ սիրեցի, — զԱստուած, հայցական սեռի խնդիր է.
Զո՞վ սիրեցի, — զքեզ, հայցական սեռի խնդիր է.
Զո՞վ սիրեցի, — զնա. հայցական սեռի խնդիր է:

Անզգամն անգոսնէ զխրատ. — Անզգամը կ՚անգոսնէ խրատը:

Ո՞վ կ՚անգոսնէ, — Անզգամն, տէր բայի է անգոսնէ բային. Ի՞նչ բանը կ՚անգոսնէ, — զխրատ, հայցական սեռի խնդիր է ան-գոսնէ ներգործական բային:

Յովհաննէս մկրտեաց զՅիսուս. — Յովհաննէս մկրտեց Յիսուսը:

Ո՞վ մկրտեց, — Յովհաննէս, տէր բայի է մկրտեաց բային. Զո՞վ մկրտեց. — զՅիսուս, հայցական սեռի խնդիր է մկրտեաց ներ-գործական բային:

Առնու զհացն. — Հացը կ՚առնէ:

Ո՞վ կ՚առնէ, — նա. զօրութեամբ տէր բայի առնու բային. Ի՞նչ բանը կ՚առնէ, — զհացն, սեռի խնդիր է առնու ներգոր-ծական բային:

178. Երբ սեռի խնդիրը անորոշ բան մ՚է, զնախդիրը չդրուիր, և Ուղղականէն կամ Ուղ-ղականի հայցական կ՚ըսուի. ինչպէս,

Որթ խաղող բերէ. — Որթը խաղող կը բերէ:

Ո՞վ խաղող բերէ, — որթը. տէր բայի բերէ ին:

Որթը ի՞նչ բան բերէ, — խաղող, սեռի խնդիր է բերէ ին, բայց անախդիր հայցական սեռի խնդիր է. ինչու որ անորոշ բան մ՚է, չը յայտներ թէ այս կամ այն խաղողէն կը բերէ. այլ խաղող կը բերէ:

Յատուկ անունները, դերանունները և

անորոշ թուական ածականները և անոնց հետ եղող գոյականները, և դիմորոշ յօդ ու յատկացուցիչ ունեցող բառերը աննախդիր հայցական չեն ըլլար. չըսուիր տեսի Մարկոս, նա, ամէն, այր մը, այրն, հայր իմ. հապա պիտի ըսուի տեսի զՄարկոս, զնա, զամէն, զայր մը, զայրն, զհայր իմ:

**179.** Յոգնակի աննախդիր կամ անորոշ հայցական անունները երբեմն ուղղականի կերպով ալ կը դրուին. ինչպէս,

Օրհնութիւն և փառք տային. — փոխանակ ըսելու, օրհնութիւն և փառս տային. օրհնութիւն ու փառք կուտային:

Նոր սքանչելիք տեսանեմք. — փոխանակ ըսելու, նոր սքանչելիս տեսանեմք. նոր սքանչելիք կը տեսնենք:

Ստացան պարծանք յաւիտենական. — փոխանակ ըսելու, ստացան պարծանս յաւիտենական. յաւիտենական պարծանք ունեցան:

Ողջոյնք ինձ կարդացէք. — փոխանակ ըսելու, ողջոյնս ինձ կարդացէք. ինծի համար ողջոյն ըսէք:

**180.** Ներգործական բայերուն սեռի խնդիրը կրաւորական բայերուն մէջ տէր բայի կ'ըլլայ, և ներգործականի տէր բային՝ կրաւորականին առջև սովորաբար բացառական հոլովով խնդիր կ'ըլլայ. ինչպէս,

Ներգ. Յովհաննէս մկրտեաց զՅիսուս:

Կրա. Յիսուս մկրտեցաւ ի Յովհաննէ:

Մինչդեռ ներգ. բային տէր բայինէ Յովհաննէս, և սեռի խնդիրը զՅիսուս. բայց երբ բայը կրաւորական եղաւ, մինչդեռ,

ան ատեն Յովհաննէս բացառական դրուեցաւ, ի Յովհաննէ, և զՅիսուս ուղղական տէր բայի դրուեցաւ, Յիսուս. ուստի ըսուեցաւ Յիսուս մկրտուեցաւ ի Յովհաննէ, ո՞վ մկրտուեցաւ, — Յիսուս, տէր բայի է. մկրտուեցաւ, ի Յովհաննէ ուսկէ, բացառական խնդիր է մկրտուեցաւ կրաւորական բային:

Ներգ. Հիւսն շինեաց զտունն:

Կրա. Տունն շինեցաւ ի հիւսանէ:

Ներգործական օրինակին մէջ, ո՞վ շինեց տունը, — Հիւսն, տէր բայի է շինեաց ներգործական բային. կրաւորական օրինակին մէջ, ի՞նչ բան շինուեցաւ, — Տունը, տէր բայի է շինեցաւ կրաւորական բային: Ներգ. օրինակին մէջ, հիւսը ինչ բանը շինեց, — Տունը, սեռի խնդիր է շինեաց ներգ. բային. կրա. օրինակին մէջ, տունը ո՞ւսկէ շինուեցաւ. — ի հիւսանէ, բացառական խնդիր է շինեցաւ կրաւորական բային:

## 2. ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

181. Ներգործական, կրաւորական և չէզոք բայերը, նոյնպէս նաև դերբայները երբ իբրև բայ գործածուին, իրենց նշանակութեանը համեմատ հոլովներով խնդիր կ'առնեն. այս խնդիրը կ'ըսուի Բնութեան խնդիր:

182. Իւրաքանչիւր հոլովով բնութեան խնդիրներուն վրայ համառօտ տեղեկութիւն տանք:

### Ուղղական հոլով

183. Էական բայերը Եմ, Լինիմ, Եղանիմ, Գոմ, կը պահանջեն ուղղական հոլովով խնդիր, որ տէր բայիին ինչ ըլլալը կը ցուցնէ. ինչպէս,

Աստուած է հոգի:

Ո՞վ հզօր է, — Աստուած․ տէր բայի է Է բային։ Ի՞նչ է Աստուած․ — հզօր, ուղ. բնութեան խնդիր է Է բային։

Ցանկալի է նա։

Դու մեծ ես։

Այրն այն էր իշխան։

184․ Էական բայերուն այս ուղղական հոլով խնդիրը երբեմն նախդրիւ տրական հոլովով կը դրուի․ բայց ան ատեն նշանակութիւնն ալ քիչ մը կը փոխուի, անանկ որ ոչ ուղղականի և ոչ բուն տրականի նշանակութիւն կ'ունենայ, այլ տեղը բռնել կ'ըլլայ․ ինչպէս,

Ես եղէց ի հայր, և նա եղիցի յորդի․ — Ես հօր տեղ ըլլամ, ան ալ զաւակի տեղ ըլլայ։

Հոս ի հայր և յորդի նախդրիւ տրական են ուղղականի տեղ, և նշանակութիւննին ալ հօր տեղ, զաւակի տեղ եղած է․ թէ որ ուղղական ըսուէր, Ես եղէց հայր, ան ատեն հօր տեղ չէր նշանակեր այնչափ, որչափ բուն հայր ըլլամ ըսել կ'ըլլար։

Եղիցուք ձեզ ի ծառայս․ — Ձեզի ծառայ կամ ծառայի տեղ ըլլանք։

Մովսէս յորդեգիրս եղև․ — Մովսէս որդեգիր եղաւ։

185․ Էական բայէն զատ ուրիշ բայեր ալ կան, ինչպէս են Անուանել, Կոչել, Առնել, Դնել, Կարգել, Կացուցանել, և ուրիշ ասոնց մօտ նշանակութիւն ունեցող բայեր և ուրիշներ, որ ուղղական հոլով խնդիր կ'առնեն․ ինչպէս,

Ծնաւ Յիսուս, որ անուանեցաւ Քրիստոս․ — Ծնաւ Յիսուս, որ Քրիստոս ըսուեցաւ։

Ի՞նչ դրուեցաւ անունը, — Քրիստոս, ուղ. բնութեան խնդիր է անուանեցաւ բային։

Ո՞ կացոյց զքեզ դատաւոր․ — Ո՞վ քեզ դատաւոր կեցուց։

Դու կոչեսցիս Կեփաս․ — Դուն Կեփաս կոչուիս։

Կոչեաց զանուն նորա Յեսու. — Անոր անունը Յեսուս կոչեց։

Մտեմ ի բոյնն աղաւնի, և անդուստ ագռաւ ելանեմ. — Աղաւնի (աղաւնիի պէս) կը մտնեմ բոյնը, և անկէ ագռաւ (ագռաւի պէս) դուրս կ՚ելլեմ։

186. Այս բայերուն ուղղական խնդիրն ալ երբ նախդրիւ տրական դրուի, նշանակութիւնը քիչ մը կը փոխուի. ինչպէս,

Եդ զիս յոչինչ. — Զիս ոչինչի տեղ դրաւ։

Համարեցաւ յարբեցող. — Գինովի տեղ կարծեց։

Կարգեաց զնա ի ժառանգորդ. — Ժառանգորդի տեղ կարգեց։

187. Գիտնալ պէտք է որ բայերուն ուղղական խնդիրը՝ թէ որ եզակիի մը վրայ է խօսքը՝ սովորաբար եզակի կը դրուի. իսկ թէ որ յոգնակիի վրայով՝ յոգնակի. սա տարբերութեամբ որ ներգործական բայերուն և անորոշ դերբային քով յոգնակի ուղղական խնդիրը յոգնականացուցիչ ք ին տեղ ս առնելով կը դրուի (տես 175). ինչպէս,

Կացո զնոսա իշխանս. — Զանոնք իշխան կեցուր։

Կացո ներգործական բային իշխանս ուղղական խնդիր է, և [illegible] է։ Աշխարհաբառին մէջ եզակի, իշխան, կը թարգմանուի, և ոչ թէ յոգնակի, իշխաններ։

Եդ զձեզ տեսուչս. — Ձեզ տեսուչ դրաւ։

Կենդանիս արար զմեզ. — Մեզ կենդանի ըրաւ։

Յանդիման կացուցանել զձեզ սուրբս և անբիծս և անարատս. — Ձեզ սուրբ և անբիծ և անարատ դիմաց կեցնել։

Մինչև մերկ և վիրաւոր փախչել. — Մինչ մերկ ու վիրաւոր փախչիլ։

Անամօթ և անդաստիարակ կալ. — Անամօթ ու անդաստիարակ կենալ։

Վերջին երկու օրինակներուն մէջ փախչել և կալ չէզոք անորոշ դերբայներ են, բայց ուղղական խնդիրնին ալ առած են։

188. Կրնայ ըլլալ որ ուղղական խնդիրները առանց ս ի, ինչպէս նաև առանց ք ի եզակի գրուին. ինչպէս,

Զլուսին և զաստեղս արար իշխանական գիշերոյ. — Լուսինը և աստղերը գիշերուան իշխան ըրաւ։

Հոս իշխանականը որ ուղ. խնդիր է արար ներգործական բային եզակի գրուած է։

Զամենեսեան պատերազմող և թշնամի ունել բարի իցէ, եթէ սիրելիս և բարեկամս. — Ամենքը պատերազմող ու թշնամի ունենալը աղէկ է, թէ չէ՝ սիրելի ու բարեկամ։

Հոս պատերազմող և թշնամի որ ուղ. խնդիր են ունել դերբային եզակի գրուած են. և միևնոյն օրինակին մէջ սիրելիս և բարեկամս բառերը՝ որ նոյնպէս ուղ. խնդիր են զօրութեամբ ունել դերբայի մը, ս ով յոգնակի գրուած են վերի կանոնին համեմատ։

189. Կըլլայ որ ուղղական անուն մը խօսքի մէջ պաշտօն մը չունեցած կը գրուի կանչելու կերպով. ասանկները որ երբեմն հոլովի կարգ ալ անցած էին՝ կոչական բառ կ'ըսուին. ինչպէս,

Որդեա՛կ, զի՞նչ գործ գործեցեր. — Տղա՛ս, ի՞նչ գործ գործեցիր։

Բժի՛շկ, բժշկեա զանձն քո. — Բժի՛շկ, բժշկէ քու անձդ։

*Զաքէ՛, փութա էջ այսր*. — Զաքէոս, շուտով ե-
ջիր ասկէ։

*Լուր, որդեակ, խրատու հօր քո*. — Մտիկ ը-
րէ, տղաս, քու հօրդ խրատին։

*Մատերուք, հեթանոսք, և լուսարուք*. — Մօ-
տեցէք, հեթանոսներ, ու լուսցէք։

*Ապրեցո զիս, տէր, ի մարդոյ չարէ*. — Տէր,
չար մարդէ ազատէ զիս։

Օրինակներուն մէջ կ'երևայ որ կոչական հոլով ցուցուածները ուղղական հոլով են, բայց կանչուած կերպ մ'ունին, անոր համար երկրորդ դէմք են, և իրենց հետևորդ բայերն ալ երկրորդ դէմք դրուած են։

190. Կոչական հոլովին հետ կը դրուին նաև ով և դուն բառերը. երբեմն դուն ին տեղ դ դիմորոշ մը կ'աւելցուի ծայրը. ինչպէս,

*Ո՛վ տէր, ո՞չ այս բանք էին իմ*. — ո՛վ տէր, աս չէ՞ն
իմ խօսքերս։

*Ա՛յր դու, չգիտեմ զի՛նչ խօսիս*. — դո՛ւն ով
մարդ, չեմ գիտեր ի՛նչ կը խօսիս։

*Ով հէքդ և թշուառական*. — ով հէք ու թշ-
ուառական դուն։

*Ո՛վ անարժանդ*. — ո՛վ անարժան դուն։

191. Երբ կոչականն իրմէ առաջ ածական մը ունի, և ինքը յատուկ անուն է, դ դիմորոշը ածականին վրայ կ'աւելցուի. ինչպէս,

Քաջդ Թէոփիլէ։

Քաջդ փեստոս։

Սուրբ հայրապետդ Յակոբ։

192. Իսկ թէ որ իրմէ ետքը ածական մը

կամ յառաջացուցիչ և խնդիր ըլլայ, դիմորոշը կոչական բառին վրայ կը դրուի. ինչպէս,

Խորհրդակա՛նքդ առաքինիք։

Ա՛յրդ մահու։

Ողջ եր, արքայդ հրէից։

Անուանիդ ի վկայս։

## Սեռական հոլով

193. Էական բայերը սեռական հոլովը խնդիր կ՚առնեն. ինչպէս,

Իմ է հանճար և զօրութիւն. — հանճար ու զօրութիւնը իմս է։

Հոս Իմ սեռական հոլով խնդիր է Է էական բային. և նշանակութիւնը աւելի սեփականութիւն մը կը ցուցնէ, իմն է՝ իմ սեփականութիւնս է ըսելու պէս։

Քո է տիւ և քո է գիշեր. — քուկդ է տիւը, և քուկդ է գիշերը։

Նորա է ծով. — անորն է ծովը։

194. Էական բայի քով սեռական հոլովները ունենալ կը նշանակեն. ինչպէս,

Են իմ եղբարք հինգ. — ես հինգ եղբայր ունիմ։

Իմ սեռական հոլով խնդիրն է էն էական բային, և եղբարք հինգ ալ տէր բայի. Դիտել արժան է որ, ունեցողը որ է ես ուղղականը՝ գրաբարի մէջ սեռական դրուած է, և ունեցածը որ են հինգ եղբայր հայցական սեռի խնդիրը՝ ուղղական տէր բայի դրուած է. ասանկ գիտնալու է սեռական խնդրով էական բային ունենալ նշանակած բոլոր օրինակներուն համար։

Ոյր էին երկու հանդերձք. — ով որ երկու հանդերձ ունի։

Առն միոջ էին երկու որդիք. — Մարդ մը երկու տղայ ունէր ։

Ոչ գոյ մեր զօրութիւն. — Մենք զօրութիւն չունինք ։

Ուստի երբ ուզենք Թագաւորը շատ զօրութիւն ունէր աշխարհաբառը գրաբառի թարգմանել, պէտք ըսենք, Էր Թագաւորին զօրութիւն յոյժ. փոխանակ ըսելու Թագաւորն ունէր զօրութիւն յոյժ. այս վերջին ձեւն ալ թէպէտ կը գործածուի, բայց հեղինակներն աւելի էական բայով գործածուած ձեւը կ'ընդունին ։

195. Ծախելու և գնելու նշանակութիւն ունեցող բայերն ալ սեռական հոլովով խնդիր կ'առնեն դրամին անունը, կամ այն բանին անունը՝ որուն հետ որ փոխանակութիւն պիտի ըլլայ. ինչպէս,

Վաճառեցին զՅովսէփ քսան դահեկանի. — Քսան ոսկիի ծախեցին Յովսէփը.

Քանի՞ի վաճառեցին, — քսան դահեկանի, սեռական խնդիր է վաճառեցին բային ։

Վաճառեաց երեսուն դահեկանի. — Երեսուն ոսկիի ծախեց ։

Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դահկի միոջ վաճառին. — Երկու ճնճղուկ մէկ ստակի չծախուի՞ր մի։

Գնեաց յիսուն դահեկանի. — Յիսուն ոսկիի ծախու առաւ ։

Ուստի երբ ուզենք Յովսէփ տունը հինգ հազար ոսկիի ծախեց աշխարհաբառը գրաբառի թարգմանել, պէտք ըսենք, Յովսէփ վաճառեաց զտունն հինգ հազար դահեկանաց ։

196. Ծախելու և գնելու նշանակութիւն ունեցող բայերուն պահանջած սեռական հոլովով խնդիրը ըստ նախդրով ալ կը դրուի, առանց իր նշանակութիւնը փոխելու. ինչպէս,

Վաճառէ զնոսա ըստ չորսն դահեկանի. — զանոնք չորսուն ոսկիի կը ծախէ։

Ընդ երից հարիւրոց դահեկանաց. — երեք հարիւր ոսկիի ըսել է։

197. Տարիք ցուցնող բառերն ալ սեռական հոլով խնդիր կ'ըլլան, և նշանակութիւննին քանի՞ տարուան հարցման կը պատասխանէ. ինչպէս,

Վախճանեցաւ Յովսէփ ամաց հարիւր և տասանց. — Յովսէփ հարիւր տասը տարուան մեռաւ։

Քանի՞ տարուան վախճանեցաւ Յովսէփ, — ամաց հարիւր և տասանց, սեռական հոլով խնդիր է վախճանեցաւ բային։

Էր ամաց երկոտասանից. — տասներկու տարուան էր։

Աղեքսանդր երեսուն և երկուց ամաց եղեալ վախճանեցաւ. — Աղէքսանդր երեսուն և երկու տարուան ըլլալով մեռաւ։

Նոյ էր ամաց վեց հարիւրոց. — Նոյ վեց հարիւր տարուան էր։

Ասոնք երբ ուզենք ջան տարեկան մեռաւ աշխարհաբառը դժուարաւ թարգմանել, պէտք չունինք մեռաւ ամաց ըսելու։

198. Չափ ցուցնող բառերն ալ սեռական հոլով խնդիր կ'ըլլան. ինչպէս,

Լայնութիւն տանն էր կանգնոց քսանից. — տանը լայնութիւնը քսան կանգուն էր։

Կանգնոյ սեռական հոլով խնդիր է էր բային ։

Բարձրութիւն նորա ջառն կանգնոյ. — անոր բարձրութիւնը ջառն կանգուն ։

## Գործիական հոլով

**199**. Գործիականը որո՞վ կամ որո՞նցմով. և ի՞նչ բանով կամ ի՞նչ բաներով հարցմանց պատասխան է. ինչպէս,

Ամենայն ինչ նովաւ եղև. — ամէն բան անով եղաւ ։

Որո՞վ եղաւ, — նովաւ, գործիական հոլով խնդիր է եղև բային ։

Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ. — զանոնք երկաթէ գաւազանով հովուես ։

Ի՞նչ բանով հովուես. — գաւազանաւ երկաթեաւ, գործիական հոլով խնդիր է հովուեսցես բային ։

Զգեստուք պատսպարիմք. — զգեստներով կը պատըսպարուինք ։

Որք ծուլութեամբ անցուցին զկեանս, զղջացան. — անոնք որ ծուլութեանով կեանք անցուցին զղջացին ։

## Հայցական հոլով

**200**. Ժամանակ ցուցնող անունները հայցական հոլով բնութեան խնդիր կ՚ըլլան, ու ո՞րչափ ատեն կամ ո՞րչափ ատենի մէջ հարցման կը պատասխանեն. ինչպէս,

Զվեց օր արար տէր Աստուած զերկինս և զերկիր. — վեց օրուան մէջ տէր Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը ։

Ո՞րչափ ատենի մէջ արար. — զվեց օր, հայցական բնութեան խնդիր է արար ներգործական բային ։

Տեսին զգործս իմ՝ քառասուն ամ · — քառասուն տարի իմ գործերս տեսան :

Ո՞րչափ ատեն տեսին, — քառասուն ամ, հայցական բնութեան խնդիր է տեսին ներգործական բային :

Զգիշերն ողջոյն աշխատեցաք · — Բոլոր գիշերը աշխատեցանք :

Ո՞րչափ ատեն աշխատեցաք, — զգիշերն ողջոյն, հայցական բնութեան խնդիր է աշխատեցաք չէզոք բային :

Եղև ջրհեղեղ քառասուն տիւ և քառասուն գիշեր · — քառասուն օր և քառասուն գիշեր ջրհեղեղ եղաւ :

Ո՞րչափ ատեն եղև ջրհեղեղ, — քառասուն տիւ և քառասուն գիշեր, հայցական բնութեան խնդիր է եղև էական բային :

Օրինակներուն մէջ յայտնի կ'երևայ թէ այս հայցական բնութեան խնդիրը աւելի նախդրիւ տրական կամ ներգոյական հոլովներու նշանակութիւն ունի · ինչպէս զվեց օր՝ փոխանակ ըսելու ի վեց աւուրս · քառասուն ամ՝ փոխանակ ըսելու ընդ քառասուն ամ. և այլն :

201 · Հայցական բնութեան խնդիրը անախդիր ալ կը դրուի · ինչպէս,

Ծառայեաց ամս եօթն · — Եօթ տարի ծառայեց :

Լուռ եկաց աւուրս երկոտասան · — տասներկու օր լուռ կեցաւ :

Փոքր մի ժամանակ ընդ ձեզ եմ · — Քիչ մը ատեն ձեզի հետ եմ :

Ուստի երբ ուզենք Բոլոր օրը ծոմ կեցաւ, վեց տարի ճամբորդեց աշխարհաբառները գրաբարի թարգմանել, պէտք ըսենք պահեաց զօրն ողջոյն, ճամբորդեաց ամս վեց կամ զամս վեց :

202 · Ճամբայի անուններն ալ նախդրով

կամ աննախդիր Հայկական հոլով բնութեան խնդիր կ'ըլլան տրականի տեղ. ինչպէս,

Տրտմութեամբ երթային ընդ երկայնութեան ճանապարհին. այսինքն՝ ընդ երկայնութեան ճանապարհին. — տրտում կ'երթային երկար ճանապարհը:

Երթիցէք ճանապարհն ձեր. այսինքն՝ ըստ ճանապարհն ձեր. — ձեր ճանապարհը գացէք:

Նոքա բնակեցան եզր ծովուն. այսինքն՝ յեզր կամ ըստ եզր. — անոնք ծովուն եզրը բնակեցան:

Գնաց ճանապարհ ժամանակս բազում. այսինքն՝ ի ճանապարհ կամ ըստ ճանապարհ. — շատ ժամանակ ճանապարհ ըրաւ:

Ճանապարհ աննախդիր Հայկական բնութեան խնդիր փոխանակ տրականի դրուած է գնաց բային վրայ. ժամանակս բազում աննախդիր Հայկական բնութեան խնդիր է գնաց բային. վասն զի ժամանակ ցուցնող բառ է, ըստ վերը 201 թուահամարը:

Ասոր երբ ուզենք ճանապարհ ճանապարհներ գնաց աշխարհաբառ դարձնել թարգմանել, պէտք ըսենք գնաց ճանապարհ ըրաւ:

203. Չափի անուններն ալ Հայկական բնութեան խնդիր կ'ըլլան, փոխանակ տրականի կամ գործիականի. ինչպէս,

Բարձրանայ հնգետասան կանգուն. այսինքն՝ ի հնգետասան կանգուն կամ հնգետասան կանգնով. — տասն և հինգ կանգուն բարձրանայ:

Զկշիռ մարմնոյ նոցա ոսկի առնուին. այսինքն՝ կշռով, ի կշիռ. — անոնց մարմիններուն կշռովը ոսկի կ'առնէին:

Բարձին զնշխարսն երկոտասան ոտնաւ. այսինքն՝

Երկրպագեան աստուծոյ, յերկրպագեան աստուծոյ. — Փառ-
երկրի Աստուծոյ Հայրութեան վերցուցին։

204. Չեն անուններն ալ Հայցական բը-
նութեան խնդիր կ'ըլլան, փոխանակ տրակա-
նի կամ գործիականի. ինչպէս.

Զատարան չէ և օրէնքով Բաբելոնի շինէր. այս-
ինքն՝ չէր և օրէնքով, է չէ և յօրէնքով. — Տար-
ան ... կը շինէր Բաբելոնէն չէր և օրէնքով։

Զի՞նչ օրէնքով վկայեցին. այսինքն՝ որո՞վ օրէնքով,
յի՞նչ օրէնքով. — Ի՞նչ օրէնքով վկայեցին։

## Տրական հոլով

### Ա. Վերջահոլով տրական

205. Վերջահոլով տրականը ո՞րու, որո՞նց.
տաճկերէն ... , ... հարցմանց կը պատաս-
խանէ. ինչպէս,

Փոխ տայ Աստուծոյ, որ ողորմի աղքատին. — Աս-
տուծոյ փոխ կուտայ ան, որ աղքատին կ'ողորմի։

Որո՞ւ փոխ տայ, — Աստուծոյ, վերջահոլով տրական բնու-
թեան խնդիր է փոխ տայ բային։

Որո՞ւ ողորմի, — աղքատին, վերջահոլով տրական բնութեան
խնդիր է ողորմի բային։

Ոչ գոյ մեզ փրկութիւն. — Մեզի փրկութիւն չկայ։

Որո՞նց ոչ գոյ փրկութիւն, — մեզ, վերջահոլով տրական բնու-
թեան խնդիր է գոյ բային։

Կայր նորա յորժամ առաջնորդէ. — Կայրը երբ
նորը առաջնորդէ։

Խոստովանել քահանային. — Քահանային խոստովանիլ։

Պատմել եղբօրն. — Եղբօրը պատմել։

Հրամայել ծառային. — Ծառային հրաման ընել։

Հատուցանել վճարն . — վճարը հատուցանել:

206 . Յաղթեմ, Պաշտպանեմ բայերը հասա- րակօրէն հայցականի տեղ վերջահոլով տրական խնդիր կ'առնուն . ինչպէս,

Սէր ամենայնի յաղթէ . փոխանակ ըսելու՝ սէր զամենայն յաղթէ . — սէրը ամէն բանի կը յաղթէ:

Պաշտպանեաց Իսրայէլի . փոխանակ ըսելու՝ պաշտպանեաց զԻսրայէլ . — Իսրայէլին պաշտպան եղաւ:

207 . Կան անանկ բայեր ալ որ վերջահո- լով տրական խնդիր կ'առնուն փոխանակ հայ- ցականի . բայց ան ատեն նշանակութիւննին ալ քիչ մը կը փոխուի . ինչպէս,

Լուր ինձ . — ըսել կ'ըլլայ ինծի մտիկ ըրէ . չըսե- լու լուր զիս . բայց կ'ըսուի լուր զձայն իմ, որ ըսել կ'ըլլայ իմ ձայնս լսէ, և ոչ թէ իմ ձայնիս մտիկ ըրէ . վասն զի այս վերջինին գրաբառը կ'ըլլայ լուր ձայնի իմում . ձայնի վերջահոլով տը- րական դրուած, որովհետև լուր կը նշանա- կէ մտիկ ըրէ:

Անիծանել այլոց . — ըսել կ'ըլլայ անէծք կարդալ ուրիշներուն . իսկ անիծանել զայլս . ըսել կ'ըլլայ ուրիշները անիծել:

Հովուել հօտի . — ըսել կ'ըլլայ հովուութիւն ը- նել հօտի . իսկ հովուել զհօտ, ըսել կ'ըլլայ հօտը հովուել:

Զգալ ցաւոց . — ըսել կ'ըլլայ զգայուն ըլլալ ցա- ւերու . իսկ զգալ զցաւս, ըսել կ'ըլլայ ցաւերը զգալ:

## Բ. Նախդրիւ տրական

208. Երբ բայը մէկ տեղայ մէկալ տեղ շարժում կը նշանակէ, ու կը հարցուի ո՞ւր. նէ՞րէյէ, նախդրիւ տրական խնդիր կ'առնու. ինչպէս,

Չոգաւ ի ժողովն. — ժողովը գնաց:

Ո՞ւր չոգաւ, — ի ժողովն, նախդրիւ տրական բնութեան խնդիր է չոգաւ բային:

Գնաց ի տուն. — տուն գնաց:

Էջ Յակոբ յԵգիպտոս. — Յակոբ Եգիպտոս իջաւ:

Մտանել ի նաւ. — նաւ մտնել:

Արկանել ի ծով. — ծով նետել:

Հանել ի ցամաք. — ցամաք հանել:

Ելանել ի լեառն. — լեռն ելնել:

Փախչել յանապատ. — անապատ փախչիլ:

Այս աշխարհաբառներուն նայելով յայտնի կ'երևայ թէ նախդրիւ տրական հոլովը աշխարհաբառի մէջ ուղղական կամ հայցական դրուած է. ուստի բային նշանակութեանը նայելու եմք. երկինք նայիլ աշխարհաբառը գրաբառի թարգմանելով՝ պիտի ըսենք յերկինս հայել. որովհետև նայիլ դէպ ո՞ւր, — յերկինս, նախդրիւ տրական: Նմանկ ալ տուն մտնել. գրաբառ պիտի ըսենք մտանել ի տուն. հնոցն իջնալ. գրաբառ պիտի ըսենք անկանել ի հնոցն:

209. Ց գիրն ալ նախդիր է ըսինք վերը (73), և նախդրիւ տրական հոլով կ'ըլլայ, մանաւանդ ասեմ, հարցանեմ, տամ բայերուն քով. ինչպէս,

Ասէ ցնա. — կ'ըսէ անոր:

Երկնչէին հարցանել զնա · — Կը վախնային անոր հարցնել ։

Ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս · — պանդոկապետին երկու ղրուշ տուաւ ։

210 · ԱՌ նախդիր է ըսինք վերը (74), և նախդրիւ տրական հոլով կը շինէ այն բառերը, որ հոգի ունին, շնչաւոր են. ինչպէս,

Յորժամ երթիցես առ իշխանն · — Երբ իշխանին երթաս ։

Մատեան առ փարիսեցիս · — Փարիսեցիներուն մօտեցան ։

Իշխան և փարիսեցի հոգի ունեցողներ են, անոր համար առով նախդրիւ տրական գրուած են ։

211 · Առ նախդիրը եթէ հոգի չունեցող բառերու վրայ դրուի, տրականի նշանակութիւն չտար. ինչպէս ուղղականի վրայ դրուելով զանազան նշանակութիւններ կու տայ բառին կամ բային նշանակութեան համեմատ. զոր օրինակ,

Առ սէր Քրիստոսի · — Քրիստոսի սիրոյն համար ։

Ոչ եթէ առ ուտել ուտեմ · — ոչ թէ ուտելու համար կ'ուտեմ ։

Առ չժուժել ծախուցն եղև փախստական · — Ծախքին չդիմանալէն [illegible] ։

Առ խնամատուն ունել զինքն · — Ինքզինքը խնամատարներուն կարգ դնել ։

Առ ոտն հարկանել · — Ոտքի տակ զարնել ։

Որպէս լոյսն առ խաւար · — Ինչպէս լոյսը մութին քով, այսինքն՝ մութին բաղդատելով ։

212 · ԸՆԴ նախդիր է ըսինք վերը (75),

և նախդրիւ տրական հոլով կը շինէ, բայց կերպ կերպ նշանակութեամբ :

Ա. Բանի մը մէջէն անցնիլ նշանակելու համար՝ ընդ ով նախդրիւ տրական հոլով կը գործածուի. ինչպէս,

Մտանել ընդ նեղ դուռն. — Նեղ դռնէն մտնել:
Գնաց ընդ արտորայսն ի շաբաթու. — Շաբաթ օրը արտերուն մէջէն անցաւ:

Այս աշխարհաբառներէն կ'երեւայ որ բացառական հոլովի թարգմանուած են ընդով նախդրիւ տրական ձեւացած բառերը. ուստի պատուհանէն դուրս ելաւը գրաբառ պիտի ըսենք Ելաւ ընդ պատուհանն ի դուրս. մէկը ընդ ով նախդրիւ տրական հոլով դրուած, և միւսը իով նախդրիւ տրական. վասն զի ո՞ւր ելաւ, ի դուրս, նախդրիւ տրական է. ո՞ւսկից դուրս ելաւ, — պատուհանէն, ընդ պատուհանն, ընդ ով նախդրիւ տրական բնութեան խնդիր է Ելաւ բային:

Բ. Տեղւոյ մը բոլոր տարածութեանը վրայ եղած բան մը ցուցնելու համար ալ՝ տեղւոյն անունը ընդով նախդրիւ տրական հոլով կը դրուի. ինչպէս,

Շրջել ընդ քաղաքս և ընդ գիւղս. — Բոլոր քաղաքները և գիւղերը շրջիլ:
Անուն Քրիստոսի փառաւորեսցի ընդ ամենայն տիեզերս. — Քրիստոսի անունը բոլոր աշխարհ փառաւորուի:

Գ. Խնդալ, ուրախանալ, տրտմել, նախանձել, ցանկալ, զարմանալ, աքանչանալ, և

ուրիշ ասոնց նման բայեր, որոնց աշխարհաբառ խնդիրը վրայ բառով կը ձևանայ, գրաբառի մէջ ընդով նախդրիւ տրական խնդիր կ'առնեն. ինչպէս.

Մի նախանձիր ընդ չարս. — Չարերուն վրայ մի նախանձիր:

Մի տրտմիք ընդ մահ սիրելեաց ձերոց. — Ձեր սիրելիներուն մահուանը վրայ մի տրտմիք:

Զարմանային ընդ յամելն նորա. — Անոր ուշանալուն վրայ կը զարմանային:

Ուստի ուրախանալ անոր գալուն վրայ աշխարհաբառը՝ գրաբառ պիտի ըսենք ուրախանալ ընդ գալուստ նորա:

Դ. Եթէ ընդով նախդրիւ տրական երկու հատ դրուին ետևէ ետև, երկու կերպ նշանակութիւն կ'ունենան. մէյմը՝ երկուքին մէջ տեղը կը նշանակեն, ինչպէս,

Մի լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ. — Իմ ու քու մէջ տեղը կռիւ չըլլայ:

Կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր. — Երկնքի ու երկրի մէջ տեղ կախուեցաւ:

Մէյմ'ալ երկուքը մէկտեղ, ամէնը մէկէն կը նշանակեն. ինչպէս,

Ընդ այր և ընդ կին. — Էրիկ մարդ կնիկ մարդ մէկէն:

Ընդ հեծեալ և ընդ հետևակ. — Հեծեալ ու հետևակ մէկէն:

213. ԸՆՏ ալ նախդիր է ըսինք վերը (75), և նախդրիւ տրական հոլովալ կը շինէ, ու կը նշանակէ ամէն մէկ կամ մարդ գլուխ. ինչպէս,

Ընդ տուն } տուն գնալ :
Ընդ երդ

Ընդ մարդ . — մարդ գնալ :

214 . ԸՆԴ ով նախդիրը սրական ձևացած բառերը՝ անցնելու յարմար նշանակութիւնով խօսքի մէջ՝ կը նշանակէն անդին . դուրս . ինչպէս .

Ելին ընդ քաղաքն . — քաղաքէն դուրս ելան :

Անցանել ընդ սահման . — սահմանէն դուրս ելնել :

Ուստի կ՚ուզենք անդին անցնիլ աշխարհաբառը գրաբառ պիտի ըսենք անցանել ընդ կամն :

Բացառական հոլով

215 . Բացառական հոլովը ո՞ւստի կամ ինչէն հարցման կը պատասխանէ . ինչպէս .

Ամբարտաւանութիւն յերկնից ընկեաց զհրեշտակսն . — ամբարտաւանութիւնը երկնքէն ձգեց հրեշտակները :

Ո՞ւստի ընկեաց , — յերկնից . բացառական ընութեան խնդիր է ընկեաց բային :

Ի մէ՞նջ ես թէ ի բնակչաց մերոց . — մե՞զմէ ես թէ մեր բնակիչներէն :

Արիւնն Յիսուսի սրբեսցէ զմեզ յամենայն մեղաց . — Յիսուսի արիւնը զմեզ ամէն մեղքերէ պիտի սրբէ :

Ի պտղոյ անտի ծառն ճանաչի . — ծառը պտուղէն կը ճանչցուի :

216 . Առաջին մասին մէջ նախդիրներուն վրայ խօսած ատեննիս , ըսինք թէ ինչպէս կը

շմուլին պարառական (փոխանակ ըսելու զ նախ-դրով գործիական), պատմական (փոխանակ ըսե-լու զ նախդրով բացառական) և ներգոյական (փոխանակ ըսելու ի կամ յ նախդրով վերջա-հոլով տրական) հոլովները, և թէ ինչ նշա-նակութիւն ունին. հոս բնութեան խնդրոյն մէջ գլխաւոր վեց հոլովներուն վրայ խօսելնես ետքը. անոնց վրայ ալ համառօտ տեղեկու-թիւն մը տանք։

### Պարառական հոլով

217. Պարառական հոլովը մէկուն կամ բանի մը բոլորտիքը կամ վրան կը նշանակէ. ինչ-պէս,

Խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք. — Շատ ժողովուրդ անոր բոլորտիքը լեցուեցան։

Ո՞րն բոլորտիքը խռնեցան, — զնովաւ, պարառական հոլով բնութեան խնդիր է խռնեցան բային։

Անկաւ զպարանոցաւ նորա. — անոր պարանոցին վրայ ինկաւ։

Ո՞րն վրայ անկաւ, — զպարանոցաւ, պարառական բնութեան խնդիր է անկաւ բային։

Պատեաց զնոքօք ահ. — Վախ պատեց անոնց վրայ։

Պատեսցեն զքեւ թշնամիք քո պատնէշ. — Քու թշնամիներդ քու բոլորտիքդ պատնէշ պատեն։

Արկանել զիւրեաւ զգեստն. — զգեստը վրան առ-նուլ, կամ պլլուիլ, հագնիլ։

Ջուր զգլխով արկանել. — գլխուն վրայ ջուր ձգել, կամ ջուրը գլուխն առնել։

218. Պարառականը անորոշ ժամանակ

մը ցուցնելու համար ալ կը դրուի . ինչպէս ,

Զմիջաւուրբ ծագեաց լոյս . — կէս օրուան ատեն-
ները լոյս ծագեց :

Զհասարակ աւուրբ } կէս օրուան ատենները :
Զմիջօրէիւ

Զհասարակ գիշերաւ } կէս գիշերուան ատենները :
Զմէջ գիշերաւ

Զայնու ժամանակաւ . — ան ատենները :

219 . Կան քանի մը բայեր որ պարառական հոլով խնդիր առնելով ուրիշ նշանակութիւն կ'ունենան . ինչպէս ,

Անցանել զպատուիրանաւ . — պատուէրը չպահել :

Անցանել զուխտիւ . — ուխտը չպահել :

Անցանել զաւուրբք . — օրերն անցնել, ծերանալ :

Զանց առնել զխնամատարութեամբ . — խնամատարութեան անհոգ ըլլալ :

## Պատմական հոլով

220 . Պատմական հոլովը մէկուն կամ բանի մը վրայով կը նշանակէ . ինչպէս ,

Եղև զնմանէ ամբաստանութիւն . — անոր վրայով ամբաստանութիւն եղաւ :

Որո՞ւ վրայով եղև ամբաստանութիւն , — զնմանէ , պատմական հոլով ըլլալով խնդիր է եղև բային :

Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ . — քու ընկերիդ վրայ սուտ վկայութիւն մ'ըներ :

Ունել ոխս զումեքէ . — մէկու մը վրայով ոխ ունենալ :

Տրտնջէին զնմանէ . — անոր վրայով կը տրտնջէին :

Ջուր է չարախօսաց զրպարտելն զմէնջ. — Չա-
րախօսներուն մեր վրայ զրպարտելը պարապ է:

221. Պատճառական հոլովը երբ ունել կամ կալնուլ, բռնել, հարկանել, հանել, կախել բայերուն խնդիր ըլլայ, իր նշանակութիւնը աշխարհաբարի մէջ բացառականի կը դառնայ. ինչպէս,

Կալաւ զհետուանէ. — յետևէն բռնեց:

Կախել զփայտէ. — փայտէ կախել:

Բուռն եհար զհանդերձէն. — հանդերձներէն բռնեց:

### Ներգոյական հոլով

222. Ներգոյական հոլովը ո՞ւր[1], տաճկերէն նէ՞րէտէ հարցման կը պատասխանէ, և երբ բայը տեղ մը դադարում կը նշանակէ, (մէջ կամ վրայ նշանակութիւն ունենալով,) տեղւոյն անունը ներգոյական հոլով կը դրուի. ինչպէս,

Կալ ի տան. — տան մէջ կենալ:

Ո՞ւր կալ, — ի տան, ներգոյական հոլով բնութեան խնդիր է կալին:

Նստաւ տապանն ի լերինս Արարատայ. — տա-
պանը Արարատայ լեռներուն վրայ նստաւ:

Գտին զնա ի տաճարին. — տաճարին մէջ գտան զանի:

Վասն այնորիկ ի քաղաքս բնակիմք. — անոր հա-
մար քաղաքներու մէջ կը բնակինք:

Նստել յեկեղեցւոջ. — եկեղեցիի մէջ նստիլ:

Նստել յեկեղեցիս. — եկեղեցիներու մէջ նստիլ:

---

[1] Նախդրիւ տրականն ալ ներգոյականին նման ո՞ւր հարցման կը պատասխանէ. բայց անիկա տաճկերէն նէ՞րէյէ կը նշանակէ, և աս նէ՞րէտէ. առջինը շարժում և ետքինը դադարում նշանակելով:

Հանգչել ի ջաղացի · — ջաղացին մէջ հանգչիլ :

Հանգչել ի ջաղացս · — ջաղացներու մէջ հանգչիլ :

223 · Ներգոյական հոլովը տեղն ալ կը նշանակէ · ինչպէս,

Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան · — Մարգարիտ կը տեղար Սաթինկին հարսնութեան ատենը :

Երբ տեղայր մարգարիտ, — ի հարսնութեան Սաթինկան, ի հարսնութեան ներգոյական բնութեան խնդիր է տեղայր բային :

Յաւուրս Հերովդի արքայի · — Հերովդէս թագաւորին օրերը, կամ օրերուն մէջ :

Ի մանկութեան առաւել անկի խրատ ծնողաց ի միտս մանկանց · — ծնողաց խրատը աւելի մանկութեան ատեն կը գտնուի մանկանց մտացը մէջ :

ՔԱՆԻ ՄԸ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

224 · Կան բայեր որոնց կրաւորականը ներգործականին մտքով հայցական խնդիր կ'առնեն, ներգործութիւնը գործողը իր վրան ըրած ցուցնելով · ինչպէս,

Արկաւ զիւրեւ զսփածանելին · — սփածանելին (ֆէշքիմալ) վրան առաւ :

Զսփածանելին հայցական սեռի խնդիր դրուած է արկաւ կրաւորական բային :

Եդաւ զթագն Ասիացւոց · — Ասիացւոց թագը դրաւ :

Յերեսս իւր օծաւ զվայելչութիւն · — իր երեսին օծեց վայելչութիւնը :

Բաժանեցան զաւարն ի մէջ իւրեանց · — աւարը իրենց մէջ բաժնեցին :

225. Շատ բայեր իրենց արմատը, կամ արմատին մօտ նշանակութիւն ունեցող անունները հայցական հոլովով խնդիր կ'առնուն, որ գործիական կ'իմացուի. ինչպէս,

Զմի սէր սիրեցին զՅիսուս. այսինքն՝ միով սիրով. — Մէկ սիրով սիրեցին Յիսուսը ։

Հոս սիրեցին բային արմատը սէր՝ հայցական դրուած է ։

Մեռանել զչարաչարական մահն. այսինքն՝ չարաչարական մահուամբ. — չարաչարական մահով մեռնիլ ։

Հոս մեռանելին արմատին մօտ նշանակութիւն ունեցող բառը մահ՝ հայցական դրուած է ։

Երկեան երկիւղ մեծ. այսինքն՝ երկիւղիւ մեծաւ. — մեծ վախով վախցան ։

Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ. այսինքն՝ ուրախութեամբ մեծաւ. — մեծ ուրախութիւնով ուրախացան ։

226. Նաեւ բայերու հետ յարաբերական դերանունն ալ հայցական կը դրուի, երբ յարաբերեալը բային արմատն է, կամ արմատին մօտ նշանակութիւն ունեցող բառ է. ինչպէս,

Գիտես զծառայութիւնն զոր ծառայեցի քեզ. այսինքն՝ որով ծառայեցի քեզ. — Գիտես այն ծառայութիւնը, որով քեզի ծառայեցի ։

Հոս զոր յարաբերական դերանունը հայցական դրուեր է փոխանակ գործիականի, վասն զի իր յարաբերեալը ծառայութիւնն՝ ծառայել բային արմատն է ։

Բժշկել ի վիրացն զոր խոցեցին զնա. այսինքն՝ որով խոցեցին զնա. — Բժշկել այն վէրքերէն՝ որոնցմով զայն խոցեցին ։

Հոս զոր յարաբերականը հայցական փոխանակ գործիականի դրը-

ուած է, վասն զի իր յարաբերութիւնը ի Վրայն՝ Խօսքին բայն արմատին մօտ նշանակութիւն ունեցող բառ է։

227. Երբեմն հայցական դրուած բառ մը ուրիշ հոլովի նշանակութիւն կ'ունենայ. ինչպէս,

Հարցից և ես զձեզ բան մի. այսինքն՝ ձեզ բան մի. — Ես ալ ձեզի բան մը հարցընեմ։ Կամ թէ՝ հարցից և ես զձեզ բան մի. փոխանակ բանի՝ մասին ըսելու. — Ես ալ ձեզ բանով մը հարցափորձ ընեմ ի պէս նշանակութիւն առնելով։

Ուսուցանէր զնոսա բազում ինչ. այսինքն՝ նոցա. — անոնց շատ բան կը սորվեցընէր։

Զայս միայն աղաչեսցուք զԱստուած. այսինքն՝ առ այս կամ այսոր. — ասոր համար միայն աղաչենք Աստուծոյ։

228. Նախդրիւ տրական հոլովը շատ բայերու քով գործիականի ոյժ կ'ունենայ. ինչպէս,

Ի ձայն բարձր. — բարձր ձայնիւ։

Խօսել յայլեայլ լեզուս. — խօսել այլեայլ լեզուօք։

Ի քրտան երեսաց ուտել զհաց. — քրտամբ երեսաց ուտել զհաց։

Յերանան անցուցեր զայս ամենայն ընդ մեզ. — Երանամբ անցուցեր զայս ամենայն ընդ մեզ։

Ներհել ի քաղցր ձայն. — Ներհել քաղցր ձայնով։

Կ'ըսուի նաև բարձր ի ձայն, քաղցր ի ձայն. որոնք դարձեալ բարձր ձայնով, քաղցր ձայնով կը նշանակեն. բայց աս տարբերութիւնը կայ որ

ածականը առաջ դրուեր է, և նախդիրն ալ ինք չէ առեր. ականջի ախորժ գալու և տաղաչափութեան համար են այս տեսակ ըսուածքները ։

## ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԿԱՄ ԲԱՅԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ

229. Մինչև ցարդ տեսանք որ խնդրառու էին բայերը և իբրև բայ գործածուած դերբայները. հիմա պիտի խօսինք այն գոյականներուն խնդրառութեանը վրայ, որոնք բայի արմատ կամ բայի արմատէ ածանցեալ անուն են, և Բայանուն կ՚ըսուին ։

230. Ամէն բայի, այսինքն ներգործական կրաւորական և չէզոք բայերուն արմատները, կամ արմատէ ածանցեալ անունները բնութեան խնդիր կ՚առնեն այն հոլովով, ինչ հոլով որ իրենցմէ ելած բայը կը պահանջէ. ուստի հոս հարկ չէ երկարօրէն խօսիլ բայանուններու խնդրառութեանցը վրայ, վասն զի անոնց բայերը ինչ հոլով բնութեան խնդիր կը պահանջեն նէ, այն հոլովն իրենք ալ պիտի պահանջեն. քանի մը օրինակով բացատրենք ։

Ելք ի մարմնոյ. — ելք, ել արմատ է ելանել բային. և որովհետև ելանել բացառական խնդիր կ՚ուզէ, ո՞ւսկից ելնեմ, — ի մարմնոյ. ուստի ելք արմատն ալ բացառական խնդիր կ՚առնու, ելք ի մարմնոյ ։

Մուտ յաշխարհ. — մուտ արմատ է մտանել բային. և որովհետև մտանել նախդրիւ տրական խնդիր կ'ուզէ. ո՞ւր մտանել, — յաշխարհ. ուստի մուտ արմատն ալ նախդրիւ տրական կ'առնու, մուտ յաշխարհ։

Ծնունդ ի կուսէն. — ծնանել բային արմատը ծնէն ածանցեալ՝ ծնունդ եղած է. ո՞ւսկից ծնանիլ, — ի կուսէն, ուստի ծնունդ ի կուսէն պիտի ըսենք։

Հայհոյութիւն զհոգւոյն. — հայհոյել բային արմատէն ածանցեալ անուն է հայհոյութիւն. ո՞րու վրայ հայհոյել, — զհոգւոյն, պատմական հոլով. ուստի հայհոյութիւն զհոգւոյն պիտի ըսենք։

Ասանկ գիտցիր միւս բոլոր բայերուն արմատներուն կամ արմատէ ածանցեալ անուններուն խնդրառութեանը համար։

## ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ

231. Ածական անուններն ալ իրենց նշանակութեանը համեմատ այլևայլ հոլովով խնդիր կ'առնուն. և ասոնց մէջ պակասութիւն կամ չունենալ մը ցուցընող բառերը աւելի բացառական կամ վերջահոլով տրական խնդիր կ'առնուն. ինչպէս,

Արժանի պատժոյ. — պատիժի արժանի։

Պատժոյ վերջահոլով տրական խնդիր է արժանի ածականին։

Հնազանդ ծնողաց. — ծնողքի հնազանդ։

Ծնողաց վերջահոլով տրական խնդիր է հնազանդ ածականին.

Ազատ է բամբասանաց · — բամբասանքէ ազատ ։

Ի բամբասանաց բացառական խնդիր ազատ ածականին ։

Զուրկ յիմաստութենէ · — իմաստութենէ զուրկ ։

Թափուր է շնորհաց · — շնորհքէ պարապ կամ զուրկ ։

Անտես աչաց կամ յաչաց · — աչքի կամ աչքէ անտես ։

Անյայտ տեսողաց կամ ի տեսողաց · — տեսնողներու կամ տեսնողներէ անյայտ ։

Աղքատ մտօք · — մտքով աղքատ ։

232 · Ածականները իրենց խնդրէն ետև ալ կրնան գրուիլ · ինչպէս ,

Պատժոյ արժանի ։

Յիմաստութեան լեցուն ։

Մտօք աղքատ ։

233 · Որոշեալ և անորոշ թուականները սովորաբար բացառական խնդիր կ'առնուն · ինչպէս ,

Մին ի ձէնջ · — ձեզմէ մէկը ։

Որո՞նցմէ մէկը , — ի ձէնջ , հարցումը մին վրայ եղաւ , և ի ձէնջ ալ բացառական խնդիր է մին թուականին ։

Առաքեաց զերկուս յաշակերտացն · — աշակերտներէն երկուքը ղրկեց ։

Որո՞նցմէ երկուքը , — յաշակերտացն , բացառական խնդիր զերկուս թուականին ։

Ումն ի նոցանէ · — անոնցմէ մէկը ։

Որո՞նցմէ մէկը , — ի նոցանէ բացառական խնդիր է ումն անորոշ թուականին ։

Այլք յիմաստնոց · — իմաստուններէն ուրիշները ։

Իւրաքանչիւր ոք ի ձէնջ · — ձեզմէ ամէն մէկը ։

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ.

234. Քերականութեան Ա. մասին Նախդիր գլխոյն մէջ (76) ըսինք թէ կան հոլովառու կամ նախադրութիւն բռնած բառեր, որոնք այլեւայլ հոլովով կը բանին։ Առջի մասին մէջ գործածական նախադրութեանց անունն ու նշանակութիւնը տուինք. հիմա անոնց ինչ հոլով խնդիր պահանջելնին պէտք իմացընենք։

Գիտնալ պէտք է թէ նախադրութիւններէն ոմանք խնդրէն առաջ, ոմանք ետքը, ոմանք ալ առաջ ու ետքը կը դրուին։

235. Առաջ դրուող նախադրութիւնները, ու անոնց պահանջած հոլովով խնդիրները։

— Յետ, կը նշանակէ ետքը, սեռական հոլովով կը բանի. ինչպէս,

Յետ մահու. — Մահուընէ ետքը։

Մահու սեռական հոլով խնդիր է յետին։

Յետ այսորիկ. — Ասկէ ետքը։

— Առանց, կը նշանակէ առանց, (տաճկերէն սըզ մասնիկ), սեռականով կը բանի. ինչպէս,

Առանց իմ. — Առանց ինծի. պէնսիզ։

Առանց մեղաց. — Առանց մեղքի։

— Իբրեւ, որպէս, կը նշանակեն պէս, հայցականով կը բանին. ինչպէս,

Իբրեւ զմարդ. — Մարդու պէս։

Որպէս զգող. — Գողի պէս։

— Բուն, կը նշանակէ աւելի կամ վեր, հայցականով կը բանի. ինչպէս,

գեղեցկագոյն քան զսիրամարգ. — սիրամարգն աւելի գեղեցիկ։

Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր. — աշակերտն իր վարդապետէն աւելի լաւ չէ։

Զվարդապետ հայցական խնդիր առնին. քան զվարդապետ (երկուքը մէկէն) նախադրութեամբ խնդիր է բային։ Ամէն նախադրութեանց համար ասանկ ըսել պէտք է. քովի հոլովը նախադրութեան խնդիր, ու յետոյ թէ նախադրութիւնն ու թէ խնդիրը՝ երկուքը մէկէն որ բային կը վերաբերին նէ, այն բային խնդիր պէտք է տրուի։

Օրինակներէն կը տեսնենք որ քան նախադրութիւնով բաղդատութիւն մը կը ցուցուի. սիրամարգն աւելի գեղեցիկ ըսելը՝ անանկ գեղեցկութիւն մը ըսել է, որ սիրամարգի քով չկայ։ Բայց ներգոյական հոլովով ալ բաղդատութիւն կը ցուցուի. ինչպէս, գեղեցկագոյն ի սիրամարգս՝ ըսելով պիտի իմանանք սիրամարգներուն մէջ էն գեղեցիկը, գեղեցիկ եղող և առաւելութիւն ունեցողը սիրամարգներուն մէջն է, դրսէն չէ։ Նշանակութիւններէն և բացատրութիւններէն կ՚երևայ քան նախադրութեամբ և ներգոյական հոլովով բաղդատական խօսքերու տարբերութիւնը։

Ուրիշ օրինակով մ՚ալ բացատրենք։

Արիստոտէլ իմաստունն ի թագաւորս չըսուիր. բայց Արիստոտէլ իմաստունն քան զթագաւորս կրնանք ըսել. ինչու որ Արիստոտէլ թագաւոր չէր, որ թագաւորներուն մէջ իմաստունն եղած ըլլար. բայց Արիստոտէլ թագաւորներէ աւելի իմաստուն կրնանք ըսել։ Ինչպէս կ՚երևայ ներգոյականը նմաններու մէջ բաղդա-

տութիւն կը ցուցընէ . բայց շատ նախադրու-թիւնք անուններու մէջ բաղդատութիւն . ուստի Սողոմոն իմաստնագոյն է թագաւորաց ըսելու տեղ՝ կրնանք ըսել Սողոմոն իմաստունն է թագաւորաց . վասն զի Սողոմոն թագաւոր էր և թագաւոր-ներուն մէջ ալ իմաստունը ։

Ներգոյական հոլովով բաղդատութեան խնդիրը սեռականով ալ կրնայ դրուիլ . Մեծն է մարգարէս Մովսէս ալ կ'ըսուի , Մեծն մարգարէից Մովսէս ալ կ'ըսուի ։

Բացառական հոլովն ալ ներգոյականի նը-ման բաղդատական խօսքերու մէջ կրնայ գոր-ծածուիլ . ինչպէս ,

Մեծն ի ձէնջ . — ձեզմէ կամ ձեր մէջէն մեծը ։
Կրտսերն ի նոցանէ . — անոնցմէ կամ անոնց մէջէն
պզտիկը ։

— Մինչ . մինչեւ , կը նշանակեն մինչեւ , նախ-դրիւ տրականով կը բանին . ինչպէս ,

Մինչ ի գետին . — մինչեւ գետին ։
Մինչ ի յերկինս . — մինչեւ երկինքը ։
Մինչեւ ցԴաւիթ . — մինչեւ Դաւիթ ։

Եթէ տեղ կամ ժամանակ ցուցընող ա-նունները ցով նախդրիւ տրական ձեւանան , մինչեւ նախադրութեան ոյժ կ'ունենան . ինչպէս ,

Հալածեաց ց.քաղաքն . — մինչեւ քաղաքը հալածեց ։
Կրնանք ըսել նաեւ
Հալածեաց մինչեւ յ.քաղաքն .
Հալածեաց մինչեւ ի.քաղաքն ։
Ննջեաց ցառաւօտ . — մինչեւ առտու քնացաւ ։
Կրնանք ըսել նաեւ

Ննջեաց մինչ յառաւօտ.
Ննջեաց մինչ յառաւօտ:

— Բաց, կը նշանակէ զատ, բացառականով կը բանի. ինչպէս,

Բաց ի քէն. — քեզմէ զատ:
Բաց ի մէնջ. — մեզմէ զատ:

236. Չափը դրութեան նախադրութիւնները և անոնց պահանջած հոլովով խնդիրները:

— Չափ, կը նշանակէ չափ, գործիականով կը բանի. ինչպէս,

Ոգւով չափ. — հոգիով չափ:
Մահու չափ. — մեռնելու չափ:

— Կողմն, կոյս, կը նշանակեն տեղ, տին, նախդրիւ տրականով կը բանին. ինչպէս,

Ի կինն կողմն. — տեղ է կնիկը:
Ի Թիկունս կոյս. — ետեւ տին:

237. Առաջ ու ետեւը դրութեան նախադրութիւնները, և անոնց պահանջած հոլովով խնդիրները:

— Առաջի, կը նշանակէ առջև, սեռականով կը բանի. ինչպէս,

Առաջի իմ. իմ առաջի. — իմ առջևս:

— Յանդիման, հանդէպ կը նշանակեն դիմաց, սեռականով կը բանին. ինչպէս,

Յանդիման դրախտին. դրախտին յանդիման. — դրախտին դիմացը:
Հանդէպ տանն. տանն հանդէպ. — տանը դիմացը:

— Հանդերձ, կը նշանակէ հետ, մէկտեղ, գործիականով կը բանի. ինչպէս,

Հանդերձ մարբն. մարբն հանդերձ. — մօրը հետ մէկտեղ:

— Զկնի, զհետ, կը նշանակեն ետեւէն, սեռականով կը բանին. ինչպէս,

Զկնի չարին . չարին զկնի . կամ զչարին զկնի,
կամ զչարին կնի . — չարին ետեւէն :

Գիտնալ պէտք է որ առաջ ու ետքը դրըուիլ կրցող նախադրութիւնները երբ նախդիր ունենան, իրենց նախդիրը առաջ դրուած խնդրոյն վրայ ալ կրնայ դրուիլ, եւ երբեմն ալ նոյն իսկ նախադրութեան վրայ չդրուելով. ինչպէս վերը տեսանք, զչարին զկնի նախդիրը երկուքին վրայ ալ կրկնուած . զչարին կնի, նախդիրը միայն առաջ դրուող խնդիրն առած :

Նոյնը գիտնալու է յետադաս նախադրութեանց համար ալ, որոնցմէ նախդիր ունեցողներն երբ խնդրէն ետքը դրուին, իրենց նախդիրն անոնց վրայ ալ կրկնել կամ միայն անոնց վրայ դնել հարկ կ՚ըլլայ, ինչպէս պիտի տեսնենք :

— Ի վերայ, կը նշանակէ վրայ, սեռականով կը բանի. ինչպէս,

Ի վերայ երկրի . յերկրի վերայ . — Երկրի վրայ :

— Ընթեր, առ ընթեր, կը նշանակեն քով, սեռականով կը բանին. ինչպէս,

Ընթեր խաչին . խաչին ընթեր . — խաչին քով :
Առ ընթեր գետոյն . առ գետոյն ընթեր . — Գետին քով :

— Վասն, սակս, ի սակս, յաղագս, կը նշանակեն համար, սեռականով կը բանին. ինչպէս,

Վասն մարդոյ . մարդոյ վասն . — Մարդու համար :

Սակս ձեր, ի սակս ձեր, և ձեր սակս. — ձեզի համար :

Յաղագս սիրոյ. և սիրոյ աղագս. — սիրոյ համար.

**238.** Հոս երկու գիտելիք կան. Ա. Արտնայ ըլլալ որ նախադրութեան ու խնդրոյն մէջ տեղ ուրիշ բառեր մտնեն. ինչպէս,

Վասն ի լաւութիւնս զմարդն յորդորելոյ. — փոխանակ ըսելու, վասն յորդորելոյ զմարդն ի լաւութիւնս :

Յետ զաշխարհն ընդ ձեռամբ նուաճելոյ. — փոխանակ ըսելու, յետ նուաճելոյ զաշխարհն ընդ ձեռամբ :

Բ. Նախադրութիւն մը երբ առաջ անգամ մը յիշուած է, կրնայ զեղչուիլ. միայն թէ զեղչուած նախադրութիւնը նախդիր ունենալու ըլլայ նէ, նախդիրը անոր խնդրոյն վրայ կը կրկնուի. ինչպէս,

Շահու վասն խնդրեմ՝ այլ փրկութեան ոչ. — այսինքն՝ այլ փրկութեան վասն ոչ խնդրեմ. — շահու համար կը խնդրեմ, և ոչ թէ փրկութեան համար :

Գթայր ի վերայ նորա, իբրև հայր յորդւոյ. — այսինքն՝ իբրև հայր ի վերայ որդւոյ. — անոր վրայ կը գթար, ինչպէս հայր մը որդիին վրայ կը գթայ :

Ի վերայ նախադրութիւնը մէկմը դրուած է, և ետքի խօսքին մէջ չէ դրուած, այլ անոր նախդիրը խնդրոյն այսինքն որդւոյն վրայ դրուած է, յորդւոյ. յ դրուելուն պատճառը՝ բառը որդի՝ ո ձայնաւորով սկսուած ըլլալն է, փոխանակ ի ի յ գրուած է. ինչպէս ըսած ենք Հոլովմանց կարգին մէջ.

Զկնի նոցա երթան, և զմեր ոչ գան. — այս-

ինքն՝ և զմեր կնի կամ զկնի մեր ոչ գան.— անոնց ետևէն կ'երթան ու մեր ետևէն չեն գար։

239. Առ, ընդ, ըստ նախդիրներուն երեք նախադրութեան գործածութիւնը։

Առ, ընդ, ըստ նախդիրները իբրև նախադրութիւն գործածուելով. այլևայլ հոլովներով այլևայլ նշանակութիւն կ'ունենան. ինչպէս.

Առ. սեռական հոլովով՝ համար կը նշանակէ. ինչպէս,

Առ ամօթոյ. — ամօթի համար։
Առ ահի. — վախի համար։
Առ իմոյ յիշատակի. — իմ յիշատակիս համար։

Առ գործիական հոլովով կը նշանակէ ատենը, երբ ատեն ցուցընող բառի կամ մարդու անունի վրայ դրուի. ինչպէս,

Առ Ջրհեղեղաւ. — Ջրհեղեղին ատենը։
Առ Հայկաւ. — Հայկին ատենը։

Առ գործիական հոլովով քովը, քովն ի վեր. վրայ նշանակութիւններն ալ կուտայ բառին. ինչպէս,

Առ գետովն. — Գետին քով։
Առ ափամբք. — Եզերքն ի վեր։
Առ ճանապարհաւ. — Ճամբուն վրայ։

Առ գործիականով համեմատութիւն մ'ալ կը ցուցընէ. ինչպէս,

Զի՞նչ է յարդ առ ցորենով. — յարդը ցորենին քով ի՞նչ է։

Այս փոքր ինչ է առ նուազ. — անոր քով կամ անոր նայելով անիկա պզտիկ բան է։

Առ տրական հոլովով կը նշանակէ քովը. եզակի բառը վերջահոլով տրականով կը դրուի. իսկ յոգնակի բառերուն նախդիրներուն տեղը անցնելով նախդրիւ տրական հոլով կ'ըլլայ. ինչպէս,

Առ նմա. — անոր քովը։

Առ արքայի. — արքային քով։

Նստէր առ դրանն. — դրանը քովը կամ մօտը կը նստէր։

Կայր առ խաչին. — խաչին քովը կամ մօտը կը կենար։

Սպասէին առ դուրս. — դրանը քովը կ'սպասէին։

Առ նոսա. — անոնց քով։

Առ ձեզ. — ձեր քովը։

Առ բացառականի հետ առանց անոր ի կամ յ նախդրին՝ համար կը նշանակէ. ինչպէս,

Առ առակէ. փոխանակ ըսելու՝ առ յառակէ. — առակի համար։

Առ երկիւղէ. փոխանակ ըսելու՝ առ յերկիւղէ. — վախի համար։

Առ հակառակութենէ. փոխանակ ըսելու՝ առ ի հակառակութենէ. — հակառակութեան համար։

Առ բացառականի հետ կողմն ալ կը նշանակէ. ինչպէս,

Անհնարինքն առ ի մարդկանէ. — մարդոց կողմանէ անկարելիները։

Ոչ տկարասցի առ Աստուծոյ ամենայն բան.

— Աստուծոյ կողմէն բան մը չըտկարանար:

— ԸՆԴ սեռական հոլովով՝ փոխանակ կամ տեղը կը նշանակէ. ինչպէս,

ընդ նորա. — անոր տեղը:

ընդ իմ և ընդ քո. — իմ ու քու տեղը:

Ակն ընդ ական. — աչքի տեղ աչք:

Ընդ գործիականով՝ տակ կը նշանակէ. ինչպէս,

ընդ ծառով. — ծառի տակ:

ընդ նովաւ. — անոր տակը:

ընդ հողովն. — հողին տակը:

Ընդ տրական հոլովով՝ հետ կը նշանակէ. եզակի բառը վերջահոլով տրականով կը դրուի. իսկ յոգնակի բառերուն նախդիրներուն տեղը անցնելով նախդրիւ տրական հոլով կ'ըլլայ. ինչպէս,

ընդ նմա. — անոր հետ:

ընդ նոսա. — անոնց հետ:

ընդ վարդապետի. — վարդապետի հետ:

ընդ վարդապետս. — վարդապետներու հետ:

— ԸՍՏ տրական հոլովով պէս, չափ (կէօրէ) կը նշանակէ. եզակի բառը վերջահոլով տրականով կը դրուի. իսկ յոգնակի բառերուն նախդիրներուն տեղ անցնելով նախդրիւ տրական հոլով կ'ըլլայ. ինչպէս,

Ըստ պատկերի մերում. — մեր պատկերին պէս:

Ըստ բանի քում. — քու խօսքիդ պէս:

Ըստ գործս. — գործերուն չափ (կէօրէ):

Իսկ՝ անորոշ դերբայի սեռականով և ուղղականովն ալ ետք կամ համեմատ կը նշանակէ. ինչպէս,

Ըստ պակասելոյ ամսոյն. — ամիսներուն պակսելուն ետք։

Ըստ աճելոյ լուսնոյ աճէ, և ըստ պակասելն պակասէ. փոխանակ ըսելու՝ ըստ աճելոյ լուսնոյ աճէ, և ըստ պակասելոյն պակասէ. — լուսնոյ աճելուն համեմատ (կէօրէ) կ՚աճի և անոր պակսելուն համեմատ կը պակսի։

Իսկ առանց ի կամ՝ յի բացառականով՝ յաջորդութեան նշանակութիւն ունի. ինչպէս,

Զթագաւորսն որ ըստ նմանէ էին. փոխանակ ըսելու՝ զթագաւորսն որ ըստ ի նմանէ էին. — անոր յաջորդող կամ անկէ ետքը եկող թագաւորները։

## ԳԼՈՒԽ Գ.

# ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՑԵԱԼ

240. Յատկացուցիչ կ՚ըսուի այն սեռական անունը, որ մէկ ուրիշ անուան որո՛ն ըլլալը կամ անոր պատշաճիլը կը յայտնէ. ուստի միւս բառն ալ կ՚ըսուի յատկացեալ. ինչպէս

Թէ որ ըսենք տուն Պետրոսի. լոյս աշխարհի. գահոյք արքայից. Պետրոսի, աշխարհի, արքայից յատկացուցիչ կ'ըլլան տուն, լոյս, գահոյք բառերուն, որ յատկացեալ կ'ըսուին։ Վասն զի որո՞ն տունը, — Պետրոսի, յատկացուցիչ է տուն բառին. որո՞ն լոյսը, — աշխարհի, յատկացուցիչ է լոյս բառին. որո՞ն գահերը, — արքայից, յատկացուցիչ է գահոյք բառին։

241. Կը տեսնուի օրինակներէն թէ յատկացուցիչը որո՞ն, ինչի՞ն հարցման պատասխան է, և յատկացեալէն ետքը դրուած, որ աշխարհաբառին ու տաճկերէնին ներհական է. վասն զի գրաբառ տուն Պետրոսի, աշխարհաբառ Պետրոսին տունը, տաճկերէն Պետրոսըն էվի պիտի ըսենք։ Ուստի կանոն ունինք թէ յատկացուցիչը սեռական հոլովով կը դրուի, յատկացեալէն ետքը. և որո՞ն, ինչի՞ն հարցման պատասխան. ինչպէս,

Անզգամին անգոսնէ զխրատ հօր. — անզգամը հօրը խրատը կ'անգոսնէ։

Որո՞ն խրատը կ'անգոսնէ անզգամը, — հօր, յատկացուցիչ է զխրատ յատկացեալին։

Օրհնութիւն հօր հաստատէ զտուն որդւոյ. — հօր օրհնութիւնը զաւկին տունը կը հաստատէ։

Որո՞ն օրհնութիւնը, — հօր, յատկացուցիչ օրհնութիւն բառին. որո՞ն տունը, — որդւոյ, յատկացուցիչ զտուն բառին։

Որ զբեռն ընկերին բառնայ, կատարէ զօրէնսն Քրիստոսի. — ան որ ընկերին բեռը կը վերցնէ, Քրիստոսի օրէնքը կը կատարէ։

Խոնարհութիւնն աղբիւր խաղաղութեան է, և

վտակք շինութեան եղանեն ի նմանէ. — Խոնարհութիւնը խաղաղութեան աղբիւրն է, և շինութեան վտակներ կ'ելլեն անկէ։

Ուստի Աստուծոյ կամքը հարցանել աշխարհաբառը գրաբառի Թարգմանելու ատեն պէտք ըսենք հարցանել զկամս Աստուծոյ. որո՞ն կամքը, — Աստուծոյ, յատկացուցիչ է զկամս յատկացեալին. անոր համար սեռական հոլովով և զկամս յատկացեալէն ետքը դրուեցաւ։

242. Յատկացուցիչը յատկացեալէն առաջ ալ կրնայ դրուիլ. ինչպէս,

Կրտսեր որդւոյն Յազկերտի դայեակն. փոխանակ ըսելու՝ դայեակն կրտսեր որդւոյն Յազկերտի. — Յազկերտի պզտիկ որդւոյն դայեակը։

Որո՞ն դայեակը, — կրտսեր որդւոյն, յատկացուցիչ է դայեկին, որո՞ն կրտսեր որդւոյն դայեակը, — Յազկերտի, յատկացուցիչ որդւոյն է։

Յովհաննու եղբայրն որ սպանաւ սրով. փոխանակ ըսելու՝ եղբայրն Յովհաննու։

243. Յատկացուցիչը յատկացեալէն առաջ դրուած ատեն, եթէ յատկացեալը նախդիր ունենայ՝ նախդիրը ինք կ'առնէ, կամ նախդիրը երկուքին վրայ ալ կը կրկնուի. ինչպէս,

Փրկեցաւ յառիւծուցն բերանոյ. փոխանակ ըսելու՝ փրկեցաւ ի բերանոյ առիւծուցն. — առիւծներուն բերնէն ազատուեցաւ։

Առիւծուցն յատկացուցիչը է բերանոյ յատկացեալէն առաջ դրուած, և անոր է նախդիրը (ին չի փոխելով) վրան առած է, յառիւծուցն բերանոյ։

Յովսէփ մեկնեաց զփարաւոնի զերազն․ փոխանակ ըսելու՝ զերազն փարաւոնի․ — Յովսէփ Փարաւոնին երազը մեկնեց ։

Փարաւոնի յատկացուցիչը երազին յատկացեալէն առաջ դրուած, և ատոր զ նախդիրը վրան առած է, միանգամայն յատկացեալին վրայ զ նախդիրը կրկնուած. զփարաւոնի զերազն ։

Մեք զայս յառաքելոցն վարդապետութենէ ուսաք․ փոխանակ ըսելու՝ ի վարդապետութենէ առաքելոցն․ — Մենք այս բանը առաքեալներուն վարդապետութենէն սորվեցանք ։

Սողոս զքարկոծողացն զհանդերձս առեալ պահէր․ փոխանակ ըսելու՝ զհանդերձս քարկոծողացն․ — Սողոս քարկոծողներուն հանդերձները կ'առնէր կը պահէր ։

244․ Յատկացուցիչը ըստ սովորութեան իր յատկացեալէն ետքը դրուած ատեն, կըրնայ իր յատկացելոյն նախդիրն իր վրայ ալ առնել, մանաւանդ երբ երկուքին մէջ ուրիշ բառ մտնէ․ ինչպէս,

Սողնոց զխօշխն միայն զմարդոյն առեալ․ փոխանակ ըսելու՝ սողնոց զխօշխն մարդոյ միայն առեալ․ — սողուններէ միայն մարդուն խըղըրպոյն առնելով ։

Զմիտս կամեցաւ հաճել զամբոխին․ փոխանակ ըսելու՝ կամեցաւ հաճել զմիտս ամբոխին․ — Ամբոխին միտքը հաճեցընել ուզեց ։

Մի խառնեցես զիրաւունս զեկին և զորբոյ և զայրւոյ․ փոխանակ ըսելու՝ մի խառնեցես զիրաւունս եկին և որբոյ և այրւոյ․ — Եկըւորին, որբին և այրիին իրաւունքը չխանգարես ։

245. Երբ միևնոյն յատկացեալին [illegible] քանի մը յատկացուցիչներ կան, յատկացեալն ամէն մէկ յատկացուցչին քով չկրկնուիր. և ան ատեն եթէ յատկացեալը նախդիր ունենայ՝ նախդիրը մօտին վրայ չկրկնուիր ալ նէ՝ հեռաւորին վրայ կրնայ կրկնուիլ. ինչպէս,

Աստուծոյ բարբառ է և ոչ մարդոյ. այսինքն՝ և ոչ մարդոյ բարբառ. — Մարդու բարբառ չէ Աստուծոյ բարբառ է։

Բարբառ յատկացեալը երկու անգամ չգրուելու համար, մարդոյ յատկացուցչին քով զանց առնուեր է, խօսքին անուշութեանը համար։

Ժանիք նորա՝ կորեան առիւծու. այսինքն՝ ժանիք նորա (էին) ժանիք կորեան առիւծու. — Անոր ակռաները առիւծի ձագի ակռաներ (ակռաներու պէս) էին։

Յիշեսցես զօր մահուն և զդատաստանին. այսինքն՝ և զօր դատաստանին. — Մահուան օրն ու դատաստանի օրը յիշէ։

Զօր յատկացեալը չէ կրկնուեր, բայց դատաստանին յատկացուցչին անոր նախդիրն առած է։

Զարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն նորա և ընդ ամենայն որդւոյն Իսրայելի. այսինքն՝ և ընդ գեղեցկութիւն ամենայն որդւոյն Իսրայելի. — Շատ կը զարմանային անոր գեղեցկութեանը և Իսրայելի բոլոր զաւկաց գեղեցկութեանը վրայ։

Հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, Վրաց, Աղուանից. — Հրովարտակ հասաւ Հայոց, Վրաց, Աղուանից աշխարհը։

Պէտք էր ըսել — ի Վրաց և Աղուանեաց . — ի մը պակասութիւնը կրնայ իմաստը փոխել :

246 . Յատկացուցիչը հայցական սեռի խնդրի նշանակութիւն կրնայ ունենալ ներգործական բայանուններու քով . ինչպէս ,

Ծննդեամբ Կայենի . — այսինքն՝ ծնանելով զԿայէն :

Ճաշակմամբ պտղոյն . — այսինքն՝ ճաշակելով զպտուղն :

Կայէնի , պտղոյն սեռական հոլով դրուած են , և յատկացուցիչ են , բայց նշանակութիւնով հայցական սեռի խնդիր են . ըստ որում՝ յատկացեալները ծննդեամբ , ճաշակմամբ բայանուն են , և դերբայի դարձնելով պէտք ըսենք ծնանելով զԿայէն . ճաշակելով զպտուղն :

Կրաւորական բայանուններու քով ալ գրուած յատկացուցիչը բացառական հոլովի ոյժ կ՚ունենայ . ինչպէս ,

Եկիր ի փրկութիւն մարդկան ծննդեամբ կուսին . փոխանակ ըսելու՝ եկիր ի փրկել զմարդիկ ծնանելով ի կուսէն . — Եկար մարդիկ փրկելու համար՝ կուսէն ծնելով :

Այս օրինակին մէջ մարդկան սեռ . յատկացուցիչ դրուած է ի փրկութիւն ներգործական բայանունին , փոխանակ ըսելու՝ ի փրկել զմարդիկ . և կուսին սեռ . յատկացուցիչ դրուած է ծննդեամբ կրաւորական բայանունին , փոխանակ ըսելու՝ ծնանելով ի կուսէն :

247 . Յատկացուցչի պէս շատ անգամ գոյական անուն մը կը դրուի սեռական հոլով՝ ածականի տեղ . ինչպէս ,

Անօթ ընտրութեան . այսինքն՝ անօթ ընտիր :

Բանս դառնութեան . այսինքն՝ դառն բանս :

Սպասք ոսկւոյ և արծաթոյ . այսինքն՝ ոսկեղէն և արծաթեղէն սպասք :

## ԳԼՈՒԽ Գ.

# ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

248. Անուն մը կամ դերանուն մը ինչ կամ ով ըլլալը, կամ ինչ մտօք առնուած ըլլալը յայտնել ուզենք, քովը ուրիշ անուն մը կամ դերանուն մը կը դնենք, որ բացայայտիչ կ'ըսուի. և միւսն ալ բացայայտեալ։ Ինչպէս երբ ըսենք Աշոտ, չենք հասկնար թէ որ Աշոտն է ըսածնիս. իսկ երբ ըսենք Աշոտ սպարապետ, կ'իմացընենք թէ Աշոտ ըսածնիս սպարապետ Աշոտն է։ Նոյնպէս Աշոտ Թագաւոր ըսելու ըլլանք, կ'իմացընենք թէ Աշոտ ըսածնիս Թագաւոր Աշոտն է, և ոչ թէ սպարապետ Աշոտ։ Ուստի սպարապետ և Թագաւոր բառերը բացայայտիչ եղան և Աշոտ բառն ալ բացայայտեալ։

Ընդհակառակը, երբ ըսենք սպարապետ, չենք իմացըներ թէ որ սպարապետն է. իսկ երբ ըսենք սպարապետն Աշոտ, կ'իմացընենք թէ սպարապետ ըսածնիս Աշոտն է և ոչ ուրիշը. ուստի հոս Աշոտ բացայայտիչ եղաւ, և սպարապետ բացայայտեալ։ Նոյնպէս Թագաւորն Աշոտ ըսելով կ'իմացընենք թէ Թագաւոր ըսածնիս Աշոտն է և ոչ ուրիշը. ուստի Աշոտ բացայայտիչ եղաւ, և Թագաւոր բացայայտեալ։

Այս բացայայտութենէն կ'երևայ թէ բա-

ցայայտիչը միշտ իր բացայայտեալէն ետքը կը դրուի . այսպէս , Աշոտ սպարապետ . — սպարապետ բացայայտիչ է Աշոտին : Սպարապետն Աշոտ . — Աշոտ բացայայտիչ է սպարապետին :

249 . Բացայայտիչը թուով ու հոլովով կը համաձայնի բացայայտեալին հետ . ինչպէս ,

Անանիա հանդերձ կնաւ իւրով Սափիրայիւ վաճառեաց ագարակ . — Անանիա իր Սափիրա կնոջ հետ ագարակ ծախեց :

Սափիրայիւ բացայայտիչ է կնաւ բացայայտեալին . և եզակի գործիական հոլով դրուած են երկուքն ալ , իրարու համաձայն :

Փախուստն Անակայ , հօր սրբոյն Գրիգորի . — Սուրբ Գրիգորի հօր Անակին փախուստը :

Ո՛վ է եղեր Անակ . — սուրբ Գրիգորի հայրը . ուրեմն հօր բացայայտիչ է Անակայ բացայայտեալին :

Մեօք քարոզեցաւ , յինէ և Սիղուանոսէ և Տիմոթէէ . — Մեզմով քարոզուեցաւ , ինձմով , Սիղուանոսով և Տիմոթէոսով :

Յինէ , Սիղուանոսէ , Տիմոթէէ երեքն ալ բացայայտիչ են Մեօքին . վասն զի Մեօք ըսուածներն անոնք են . բացայայտիչներուն երեքն ալ թէպէտ եզակի են , բայց երեք հատ ըլլալնուն համար Մեօք բացայայտեալը յոգնակի դրուած է :

250 . Երբ բացայայտեալը նախդիր ունենայ , նախդիրը բացայայտիչին վրայ սովորաբար չկրկնուիր . ինչպէս ,

Վաճառեցին զՅովսէփ եղբայր իւրեանց . — Իրենց եղբայրը Յովսէփը ծախեցին :

Եղբայր բացայայտիչ դրուած է Յովսէփին . և անոր զ նախդիրն իր վրայ ալ չէ առած :

զԱռաւօտ խաղաղութեան Քրիստոս լոյս ի մեզ ընկալցուք . — Խաղաղութեան առաւօտը Քրիստոս սիրով մեր մէջ ընդունինք :

Եկին առ Յակոբ հայրն իւրեանց. — Իրենց հօրը Յակոբին եկան ։

251. Շատ անգամ ալ բացայայտեալին նախդիրը բացայայտիչին վրայ կը կրկնուի, և մանաւանդ երբ երկուքին մէջ ուրիշ բառ մտնէ, և զ, ի կամ յ նախդիրները ունենան. ինչպէս,

Թողեալ ի բաց զփառսն հայրենի՝ զքահանայութիւն. — Մէկդի թողլով հայրենի փառքը՝ քահանայութիւնը ։

Զգլուխ ամենայն առաքինութեանց զսէրն բովանդակեալ ունի ողորմութիւնն. — Ողորմութիւնն իր մէջ կը պարունակէ բոլոր առաքինութեանց գլուխը սէրը ։

Կոչեաց զորդի իւր զկրտսեր զՅակոբ. — Իր կրտսեր որդին Յակոբը կանչեց ։

Կոչեաց զԵսաւ զորդի իւր երէց. — Իր երէց որդին Եսաւը կանչեց ։

Անց նա ընդ գետն մեծ ընդ Եփրատ. — Եփրատ մեծ գետէն անցաւ ան ։

252. Բացայայտիչը իր բացայայտեալին վրայ այսինքն, այս է, ասեմ, անուն բառերովալ կը դրուի. ինչպէս,

Ի նա հաւատասցեն, այսինքն ի Յիսուս Քս ։

Սաղարթօք վարսից, այս է արտաքին դիմօք բարեշուք կերպից ։

Հրաշալի պատուով յարգեալ, բանիւ ասեմ և մտօք ։

Այր մի Մատթէոս անուն ։ Ի քաղաքն անուն Նային ։

Պէտք է գիտնալ թէ այս բառերը, այսինքն, այս է, ասեմ, անուն և այլն ամէն բացայայտիչներու քով կ'իմացուին զօրութեամբ։

253. Ըսինք թէ բացայայտիչը միշտ յետադաս է. մինչև անգամ մարդու և տեղւոյ յատուկ անուններն ալ (ինչպէս վերի օրինակներուն մէջ ալ տեսանք) շատ անգամ իրենցմէ ետքը հասարակ անուն մը իբրև բացայայտիչ կ'ունենան. ինչպէս,

Դաւիթ արքայ։ Այրարատ գաւառ։

Ասոնց վրայ սա հետևեալ դիտելիքները կան։

Ա. Մարդու յատուկ անունը երբ իր իբրև բացայայտիչ դրուած հասարակ անունէն նախադաս ըլլայ, անոր հետ կը համաձայնի. ինչպէս,

Ի Տրայիանոսէ արքայէ։ Եսայեայ մարգարէի։
Կղէոպատրա դստերբն հանդերձ. — Կղէոպատրա աղջկնով մէկտեղ։

Բ. Երբեմն ալ մարդու յատուկ անունը նախադաս ըլլալով՝ անհամաձայն կը մնայ. ինչպէս,

Եւ հրաման յՕգոստոս կայսերէ. — Հրաման ելաւ Օգոստոս կայսրէն։
Աշխէն տիկնաւ։ Յուլիոս կայսեր։

Գ. Իսկ երբ մարդու յատուկ անունը իբրև բացայայտիչ յետադաս ըլլայ իր հասարակ անունէն, միշտ կը համաձայնի. ինչպէս,

Մարգարէին Եսայեայ։
Յարքայէն Սողոմոնէ։

Դ. Տեղւոյ յատուկ անունը իրեն բացայայտիչ դրուած հասարակ անունէն նախադաս ըլլայ նէ, անհամաձայն կը մնայ. ինչպէս,

Ի Սիօն լեռնէ: Առ Եփրատ գետով: ՅԱյրարատ գաւառի:

Ե. Իսկ երբ տեղւոյ յատուկ անունը յետադաս ըլլայ, առաւելաբար երկու յատկացուցիչ սեռական հոլովով կը դրուի. ինչպէս,

Ի լեռնէ Սիօնի: Ի ժողովրդենէ քումմէ Իսրայէլի:

Ի գաւառին Այրարատայ: Զգետովն Երասխայ:

Զ. Ամսոց անունները տեղւոյ յատուկ անուանց պէս նախադաս անհամաձայն կը մնան. ինչպէս,

Մարտ ամսոյ: Ի Քաղոց ամսեան:

Իսկ յետադաս՝ երկու յատկացուցիչ սեռական կը դրուին. ինչպէս,

Յամսեանն Մարտի: Յամսեանն Յունիսայ, այսինքն՝ Յունիսի:

Հայոց ամիսները հոլովելու սովորութիւն չկայ, ուստի անոնք յետադաս ալ ըլլան, անհամաձայն կը մնան. ինչպէս,

Ամսոյն Մարերի: Յամսեանն Քաղոց:

# ԳԼՈՒԽ Ե.

# ԱԾԱԿԱՆ ԵՒ ԳՈՅԱԿԱՆ

254. Բանի մը էութիւն ըլլալը ցուցընող բառին Գոյական ըսինք վերը (5), և էութեան մը կամ որպիսութեան ըլլալը ցուցընողին Ածական։

Գոյական անունն ինքնին նշանակութիւն մ'ունի, և իր մը կը ցուցընէ, ու խօսքի մէջ մինակ կ'իմացուի. քար ըսելով կ'իմանանք այն մարմինը, որուն փայտ, հող կամ ուրիշ անուն մը չտրուիր. Նմանապէս տուն ըսելով կ'իմանանք այնպիսի շէնք մը, որ բնակութեան համար պատրաստուած է, և անոր ուրիշ անուն մը, եկեղեցի, դպրոց և այլն չենք կրնար ըսել. վասն զի եկեղեցին թէպէտ տան պէս շէնք մ'է, բայց կրօնական արարողութեանց նուիրուած շէնքն է. և դպրոց ըսուածը թէպէտ շէնք մ'է, բայց տղայոց դաստիարակութեան յատկացած շէնքն է։

Ածականն ինքնին նշանակութիւն մ'ունի, բայց իր մը չցուցըներ, և ոչ ալ խօսքի մէջ մինակ կրնայ իմացուիլ. այլ իրի մը յատկութիւնը կը ցուցընէ և գոյականի հետ կը գործածուի, ուստի միշտ գոյականի մը պէտք ունի։ Ինչպէս կարմիր բառն իր նշանակութիւնն ունի, տեսակ մը գոյն է, որուն սպիտակ, սեւ, կանաչ և այլն անուն չենք կրնար տալ, վասն զի անոնք ալ տեսակ տեսակ գոյներ են.

բայց կարմիր ըսելով՝ չենք հասկնար թէ ինչ բան կարմիր է. կարմրութիւն ունենալու յատուկ մարմին մը ցուցընել հարկ է, օրինակի համար, խնձոր, որ տեսակ մը պտուղի անուն է, կարմիր խնձոր ըսելով կ'իմանանք թէ կարմիր ըսածնիս խնձորին համար է։ Իսկ թէ որ ըսենք կարմիր թուղթ, հոս ալ կարմրութիւնը թուղթին յատկացաւ։ Նոյնպէս թէ որ ըսենք կարմիր կտաւ, հոս ալ կարմրութիւնը կտաւին յատկացաւ։ Օրինակներէն կը տեսնենք որ կարմրութիւնը ինչ է նէ այն մնաց, բայց կարմրութեան ենթակայ եղող մարմինները խնձոր, թուղթ, կտաւ իրարմէ տարբերեցան[1]։

255. Ըսել է որ ածականը խօսքի մէջ մինակ[2] չգործածուիր, այլ հետը գոյական անուն մը կ'ուզէ։ Արդ պէտք աւանդենք թէ ածականն իր գոյականին հետ ինչպէս կը համաձայնի։

256. Գրաբար լեզուի մէջ ածականը գոյականէն առաջ ալ կը դրուի, ետքն ալ։

257. Եթէ ածականը գոյականէն առաջ

---

[1] Թէ որ բառը ածական ու որ բառը գոյական ըլլալը ճանչնալու համար միջոց մը կայ, որ տղայոց աւելի դիւրահասկնալի է։ Ածական է այն անունը որ իր քովը բան (շէյ) բառը առնելով, անոր հետ կրնայ ըսուիլ. ինչպէս կարմիր բան, մեծ բան, քաղցր բան կ'ըսուի, ուրեմն կարմիր, մեծ, քաղցր ածական են. իսկ ջուր բան, քար բան, հող բան, տուն բան չըսուիր, անոր համար ջուր, քար, հող, տուն գոյական են։ Այս կերպով դիւրաւ կ'որոշուին ածական ու գոյական բառերը։

[2] Ածական անունը երբեմն խօսքի մէջ մինակ կը գործածուի և այն ատեն գոյականաբար առնուած կ'ըսուի։

դրուի, սովորաբար չհամաձայնիր, մինակ գոյականը կը հոլովի, բայց նախդիրը ածականին վրայ կը դրուի։ Օրինակ,

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | խաւարին բանտ. | խաւարին բանտք. |
| Ս. | խաւարին բանտի. | խաւարին բանտից. |
| Գ. | խաւարին բանտիւ. | խաւարին բանտիւք. |
| Հ. | զխաւարին բանտ. | զխաւարին բանտս. |
| Տ. | խաւարին բանտի, | խաւարին բանտից, |
| | ի խաւարին բանտ. | ի խաւարին բանտս. |
| Բ. | ի խաւարին բանտէ. | ի խաւարին բանտից։ |

Այսպէս պէտք է հոլովել

Վայրենի ծառ, վայրենի ծառոյ, եւայլն։
Մտերիմ բարեկամ, մտերիմ բարեկամի, եւն։
Իմաստուն որդի, իմաստուն որդւոյ, եւայլն։
Յորդառատ աղբիւր. յորդառատ աղբեր, եւն։

258. Բայց երբեմն, մանաւանդ միավանկ եւ երկավանկ ածականները առաջ դրուած ատեննին կը համաձայնին իրենց գոյականին հետ. ինչպէս,

Մեծաւ ուրախութեամբ։ Քաջի առն։ Բարեաց գործոց։ Յետնոյ ամբարշտութեան։ Անեղծին Աստուծոյ։

— Նախադաս բազմավանկ ածականն ալ կը համաձայնի երբ իր ու գոյականին մէջ ուրիշ մասն բանի ունենայ. ինչպէս,

Երկնաւորին վերակոչեաց հրաման արքային. այս ինքն՝ վերակոչեաց հրաման երկնաւոր արքային. — Երկնաւոր Թագաւորին հրամանը վեր կոչէց։

Հրաշափառագունի պարտ էր անցանել բանին. այսինքն՝ պարտ էր անցանել հրաշափառագոյն բանին:

Բազում, բազմաբերս և գինեբերս ինձ տնկեաց հովիտս. այսինքն՝ տնկեաց ինձ բազում, բազմաբեր և գինեբեր հովիտս:

259. Իսկ եթէ ածականը գոյականէն ետքը դրուի, անոր հետ մէկտեղ կը հոլովի, բայց նախդիրը սովորաբար մինակ գոյականին վրայ կը դրուի: Օրինակ.

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Այր | իմաստուն. | Արք | իմաստունք. |
| Ս. | Առն | իմաստնոյ. | Արանց | իմաստնոց. |
| Գ. | Արամբ | իմաստնով. | Արամբք | իմաստնովք. |
| Հ. | զԱյր | իմաստուն. | զԱրս | իմաստունս. |
| Տ. | Առն | իմաստնոյ, | Արանց | իմաստնոց, |
| | յԱյր | իմաստուն. | յԱրս | իմաստունս. |
| Բ. | յԱռնէ | իմաստնոյ. | յԱրանց | իմաստնոց: |

260. Երբեմն անհամաձայն ալ կրնան դրուիլ յետադաս կարգ մը ածականներ, մանաւանդ անցեալ դերբայը. ինչպէս,

Աջովն հայրական փոխանակ ըսելու՝ Աջովն հայրականաւ:
Զօրէնս արքունի. " Զօրէնս արքունիս:
Հրամանաւ արքունի. " Հրամանաւ արքունեաւ:
Տանն Արծրունի. " Տանն Արծրունեաց:

Ոսկեհուռն հանդերձից ընդելուզեալ մարգարտով. փոխանակ ըսելու՝ Ոսկեհուռն հանդերձից ընդելուզելոց մարգարտով. — Մարգարտով ընդելուզուած ոսկեհուռն հանդերձներուն:

Ի վերայ աշխարհիս Վասպուրական նստեցեալ. փոխանակ ըսելու՝ Ի վերայ աշխարհիս Վասպուրական նստեցելոյ. — Վասպուրական նըստած աշխարհին վրայ:

261. Երբ տեսանք որ ածականը գոյականէն առաջ ու ետքը դրուած ատենը՝ միանգամայն նախդիրը առաջ դրուողը կ'առնէր. երբեմն նախդիրը երկուքին վրայ ալ կը կրկնուի. ինչպէս,

Ա. Նախդիրը յետադաս գոյականին վրայ ալ կրկնուած.

Յամենայն ի կեանս քո: Առ նա զաձիւնախաւրն զկրակն:

Բ. Նախդիրը յետադաս ածականին վրայ ալ կրկնուած.

Ամ յարմն յյարուցեալս ի վերայ նորա. — անոր վրայ ելնող մարդոց կ'ըսէ:

Ընդ ամենայն անապատն ընդ մեծ և ընդ ահագին. — Բոլոր մեծ ու ահագին անապատը:

Նախդրի կրկնութիւնն աւելի ան ատեն կը գործածուի, երբ ածականին ու գոյականին մէջ ուրիշ մասն բանի մտնէ. ինչպէս,

Շինեաց զդուռն տանն Տեառն զբարձր. փոխանակ ըսելու՝ զբարձր դուռն. — Տէրոջը տանը բարձր դուռը շինեց:

Ի բարձրաւանդակութիւն կուռ կալով է տեղւոյ. փոխանակ ըսելու՝ է բարձրաւանդակ տեղւոյ կուռ կալով. — Խիստ բարձր տեղ մը ամուր կենալով:

## ՈՐՈՇԵԱԼ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

262. Մի թուականը եզակի ըլլալուն, եզակի գոյական կ'ուզէ, և թէ՛ նախադաս [1] ու թէ յետադաս կը համաձայնի. ինչպէս,

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Մի | այր. | Այր | մի. |
| Ս. | Միոյ | առն. | Առն | միոջ. |
| Գ. | Միով | արամբ. | Արամբ | միով. |
| Հ. | զՄի | այր. | զԱյր | մի. |
| Տ. | Միում | առն, | Առն | միում, |
| | ի Մի | այր. | յԱյր | մի. |
| Բ. | ի Միոջէ | առնէ. | յԱռնէ | միոջէ: |

263. Երկու, երեք, չորք՝ անեզական ըլլալով, յոգնակի գոյական կ'ուզեն, և թէ նախադաս ու թէ յետադաս կը համաձայնին. ինչպէս,

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Երկու | աւուրք. | Աւուրք | երկու. |
| Ս. | Երկուց | աւուրց. | Աւուրց | երկուց. |
| Գ. | Երկու | աւուրբք. | Աւուրբք | երկու. |

[1] Մի երբ գոյականէն առաջ գրուի, որոշեալ թուական միութիւն կամ մէկ հատ կը ցուցընէ. իսկ երբ յետադաս ըլլայ, ոմն, մը անորոշ թուականի նշանակութիւն կ'ունենայ: Այս երկուքին մէջ քիչ տարբերութիւն կայ, և աս է որ մի՛ ոմն՛ մը նշանակելու ըլլայ, թէպէտ իր գոյականը մէկ հատ մ'ըլլալ կ'իմացընէ, բայց անոր նման շատերու մէջէ զատուած մէկ հատը կը նշանակէ. օրինակով մը բացատրենք.

Մի այր, մէկ մարդ, պիր ատամ:
Այր մի, մարդ մը, ատամըն պիրիսի:

Ուստի մի Աստուած, մէկ Աստուած կրնանք ըսել, և Աստուած մի, Աստուած մը ըսել չենք կրնար, վասն զի Աստուծոյ պէս ուրիշներ ալ չկան. որ անոնցմէ զատուած և անոնցմէ մէկը ըլլալ ցուցընէ:

Հ. զերկուս աւուրս. զաւուրս երկուս.
Տ. երկուց աւուրց, աւուրց երկուց,
յերկուս աւուրս. յաւուրս երկուս.
Բ. յերկուց աւուրց. յաւուրց երկուց:

Նոյնպէս կը հոլովին,

Երեք վկայք, երից վկայից, երեւք վկայիւք, զերիս վկայս, յերիս վկայս, յերից վկայից:

Վկայք երեք, վկայից երից, վկայիւք երեւք ևն:

Չորք քաղաքք, չորից քաղաքաց, ևայլն. Քաղաքք չորք, քաղաքաց չորից, ևայլն:

264. Իսկ հինգէն անդին միացած թուականները՝ թէ եզակի և թէ յոգնակի գոյական կրնան ունենալ. թէ որ նախադաս ըլլան, և գոյականն ալ եզակի ըլլայ, սովորաբար չեն համաձայնիր. Ինչպէս,

Ո. Հինգ օր.
Ս. Հինգ աւուր.
Գ. Հինգ աւուրբ.
Հ. զհինգ օր.
Տ. Հինգ աւուր, ի հինգ օր.
Բ. ի հինգ օրէ:

Նոյնպէս կը հոլովին,

Վեց կանգուն, վեց կանգնոյ, վեց կանգնով, զվեց կանգուն. ևայլն:

Տասն կին, տասն կնոջ, տասն կանամբ. ևայլն:

Հազար եկեղեցի, հազար եկեղեցւոյ. ևայլն:

265. Իսկ եթէ գոյականը յոգնակի է, հինգէն սկսեալ բոլոր թուականները առաջ դրուած ատեն կրնան թէ համաձայնիլ և թէ չհամաձայնիլ. Ինչպէս,

Ո. Հինգ աւուրք. կամ Հինգ աւուրք.
Ս. Հինգ աւուրց. Հնգից աւուրց.
Գ. Հինգ աւուրբք. Հնգօք աւուրբք.
Հ. զհինգ աւուրս. զհինգ աւուրս.
Տ. Հինգ աւուրց, Հնգից աւուրց,
ի հինգ աւուրս. ի հինգ աւուրս.
Բ. ի հինգ աւուրց: ի հնգից աւուրց:

Այսպէս կը հոլովին,

Վեց կանգունք, վեց կանգնոց կամ վեցից կանգնոց. եւայլն:

Տասն կանայք, տասն կանանց կամ տասանց կանանց. եւայլն:

Հազար եկեղեցիք, հազար եկեղեցեաց կամ հազարաց եկեղեցեաց. եւայլն:

266. Իսկ երբ հինգէն սկսեալ բոլոր Թըւականները գոյականէն յետադաս ըլլան, միշտ յոգնակի գոյական կ'ուզեն, եւ անոր հետ մէկտեղ կը հոլովին. ինչպէս,

Ո. Աւուրք հինգ.
Ս. Աւուրց հնգից.
Գ. Աւուրբք հնգօք.
Հ. զԱւուրս հինգ.
Տ. Աւուրց հնգից, յԱւուրս հինգ.
Բ. յԱւուրց հնգից:

Այս օրինակին մէջ Ո-ղ. Աւուրք հինգ ըսուեցաւ, եւ ոչ թէ Աւուրք հինգք. Հայց. զԱւուրս հինգ ըսուեցաւ, եւ ոչ թէ զԱւուրս հինգս. Նախդրիւ-տր. յԱւուրս հինգ ըսուեցաւ, եւ ոչ թէ յԱւուրս հինգս: Գիտնալ պէտք է որ հինգէն սկսեալ բոլոր Թուականները յետադաս եղած ատեննին, գոյականին հետ մէկտեղ կը հոլովին, բայց յոգնակին ք եւ ս գրերը չեն առներ, ինչպէս վերի օրինակին մէջ յայտնի կ'երեւայ:

Այսպէս կը հոլովին,

Կանգունք վեց (չըլլար վեցք), կանգնոց վեցից, զկանգունս վեց (չըլլար վեցս). եւայլն:

Կանայք տասն (չըլլար տասունք), կանանց տասանց, զկանայս տասն (չըլլար տասունս). եւն:

Եկեղեցիք հազար (չըլլար հազարք), եկեղեցեաց հազարաց, զեկեղեցիս հազար (չըլլար հազարս) եւայլն:

Արք երկոտասան (չըլլար երկոտասանք), արանց երկոտասանից, զարս երկոտասան (չըլլար երկոտասանս). եւայլն:

## ԱՆՈՐՈՇ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

267. Ոմն, ոք անորոշ թուականները միայն մարդու համար կը գործածուին, եւ սովորաբար գոյականէն առջը կը դրուին եւ անոր հետ կը համաձայնին. ինչպէս,

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ոմն | ոք. | Ոմք | ոմանք. |
| Ս. | Ուրումն | ուրուք. | Ոմանց | ոմանց. |
| Գ. | Ոմամբ | ոմամբ. | Ոմամբք | ոմամբք. |
| Հ. | զՈմն | ոք. | զՈմս | ոմանս. |
| Տ. | Ումեմն | ումեք, | Ոմանց | ոմանց, |
| | յՈմն | ոք. | յՈմս | ոմանս. |
| Բ. | յՈւմեմնէ | ումեքէ. | յՈմանց | ոմանց: |

Ոմն ոք, ուրումն ուրուք, ոմամբ ոմամբ, զոմն ոք, ումեմն ումեք, յոմն ոք, յումեմնէ ումեքէ:

Ոք միայն եզակի ունի, անոր համար եզակի գոյականի հետ կը գործածուի, յոգնակին դարձեալ ոմն ին յոգնակիով կը շինուի, Ոմք ոմանք, ոմանց ոմանց եւայլն բառերով:

268. Իմն, ինչ անորոշ թուականները միայն հոգի չունեցող բաներուն և իրաց համար կը զրուցուին. իմն սովորաբար գոյականէն ետքը դրուելով՝ անոր հետ կը համաձայնի, յոգնակի գոյականի հետ ալ եզակի հոլովելով. ինչպէս,

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ու. | գործ | իմն. | գործք | իմն. |
| Ս. | գործոյ | իրիք. | գործոց | իրիք. |
| Գ. | գործով | իւիք. | գործովք | իւիք. |
| Հ. | զգործ | իմն. | զգործս | իմն. |
| Տ. | գործոյ | իմիք, | գործոց | իմիք, |
| | ի գործ | իմն. | ի գործս | իմն. |
| Բ. | ի գործոյ | իմեքէ. | ի գործոց | իմեքէ: |

Ինչ անորոշ թուականն ալ ամէն հոլովի տեղ կը դրուի, այսինքն՝ անփոփոխ է. ինչպէս, գործ ինչ, գործոյ ինչ, զգործ ինչ. գործք ինչ, գործոց ինչ, զգործս ինչ, ի գործոց ինչ. ևն:

269. Իմն, ինչ զարդի տեղ կը դրուին երբեմն. ինչպէս,

Միթէ դու մեծ ինչ ո՞ք իցես քան զհայր մեր Աբրահամ. փոխանակ ըսելու՝ մեծ ո՞ք իցես. — Մի՛թէ դուն մեր հայր Աբրահամէն մեծ մը՞ն ես:

270. Այլ թէ որ նախադաս ըլլայ իր գոյականէն, սովորաբար կը համաձայնի. ինչպէս,

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ու. | Այլ | քաղաք. | Այլ | քաղաքք. |
| Ս. | Այլոյ | քաղաքի. | Այլոց | քաղաքաց. |

Գ. Այնու քաղաքաւ. Այնոքիւք քաղաքօք.
Հ. զԱյն քաղաք. զԱյնս քաղաքս.
Տ. Այնմ քաղաքի, Այնոց քաղաքաց,
յԱյն քաղաք. յԱյնս քաղաքս.
Բ. յԱյնմանէ քաղաքէ. յԱյնոց քաղաքաց։

Ինչպէս կը տեսնուի օրինակէս, որ այնը յոգնակիին մէջ ք և ս գիրը չէ առած, Այն քաղաքք բռնելու է, և ոչ թէ այնք քաղաքք, զայն քաղաքս՝ և ոչ թէ զայնս քաղաքս, յայն քաղաքս՝ և ոչ թէ յայնս քաղաքս։

Այս նախադաս եղած ատեն կրնայ անհամաձայն ալ գրուիլ։

271. Իսկ թէ որ յետադաս ըլլայ իր գոյականէն, սովորաբար կը համաձայնի. ինչպէս,

Ու. Քաղաք այն. Քաղաքք այնք.
Ս. Քաղաքի այնմ. Քաղաքաց այնոց.
Գ. Քաղաքաւ այնու. Քաղաքօք այնոքիւք.
Հ. զՔաղաք զայն. զՔաղաքս զայնս.
Տ. Քաղաքի այնմ, Քաղաքաց այնոց,
ի Քաղաք յայն. ի Քաղաքս յայնս.
Բ. ի Քաղաքէ յայնմանէ. ի Քաղաքաց յայնոց։

Ինչպէս կը տեսնուի օրինակէս, որ այն յետադաս ըլլալով թէ եզակի և թէ յոգնակի հոլովուած է, ք և ս գրերն ալ յոգնակիին մէջ առած, և նախդիրներն ալ զ. յ իր վրայ կրկնուած։

272. Միւս անորոշ թուականը եզակի գոյական կ՚ուզէ, ու նախադաս ըլլալով՝ անոր հետ կը համաձայնի. ինչպէս,

Միւս օր, միւսոյ աւուր, միւսով աւուրբ, ընդ միւս օր, միւսում աւուր, ի միւս օր, ի միւսմէ օրէ։

273. Ամենայն թէ որ գոյականէն նախադաս ըլլայ. սովորաբար անոր հետ չհամաձայնիր. ինչպէս,

Ամենայն այր, ամենայն առն. ամենայն արք, ամենայն արանց. եւայլն։

Ամենայն թէ որ գոյականէն յետադաս ըլլայ, առհասարակ եզակին կը համաձայնի, իսկ յոգնակին թուով չհամաձայնիր. ինչպէս,

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Այր | ամենայն. | Արք | ամենայն. |
| Ս. | Առն | ամենայնի. | Արանց | ամենայնի. |
| Գ. | Արամբ | ամենայնիւ. | Արամբք | ամենայնիւ. |
| Հ. | զԱյր | ամենայն. | զԱրս | ամենայն. |
| Տ. | Առն | ամենայնի, | Արանց | ամենայնի, |
| | յԱյր | ամենայն. | յԱրս | ամենայն. |
| Բ. | յԱռնէ | ամենայնէ. | յԱրանց | ամենայնէ։ |

## ԱԾԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

274. Այս, Այդ, Այն ցուցական դերանունները ածական են (տես 63), և գոյականէն թէ նախադաս և թէ յետադաս կրնան ըլլալ։

275. Այս, Այդ, Այն ցուցական դերանուններուն հոլովը տեսանք Ա. մասին մէջ (տես 65), որ զոյգ էին, մէկը կարճ և միւսը երկայն։ Արդ երբ այս ցուցական դերանունները գոյականէ նախադաս են, կարճ հոլովներով անոր հետ կը համաձայնին. ինչպէս,

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Այն | տուն. | Այն | տունք. |
| Ս. | Այնր | տան. | Այնց | տանց. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գ. | Այնու | տամբ. | Այնու | տամբք. |
| Հ. | զԱյն | տուն. | զԱյն | տունս. |
| Տ. | Այնմ | տան, | Այնց | տանց. |
| | յԱյն | տուն. | յԱյն | տունս. |
| Բ. | յԱյնմ | տանէ. | յԱյնց | տանց։ |

Ինչպէս կ'երեւայ օրինակիս մէջ, այն ցուցականին կարճ հոլով-ները գործածուեր են. բայց դիտելով կը տեսնենք նաեւ որ յոգ-նականն ք և ս գրերն ալ չեն դրուեր, Այն տունք ըսուեր է և ոչ թէ Այնք տունք, զԱյն տունս՝ և ոչ թէ զԱյնս տունս, յԱյն տունս՝ և ոչ թէ յԱյնս տունս։ Նոյնպէս կը տեսնենք որ եզակի բացառական կարճ հոլով չըլլալուն, վերջանալով տրակա-նը գործածուեր է, յԱյնմ տանէ, և ոչ թէ յԱյնմանէ տանէ. յոգնակի գործիական կարճ հոլով ալ չըլլալուն եզակի գործ. կարճ հոլովը դրուեր է, այնու տամբք՝ և ոչ թէ այնոքիւք տամբք։

276. Իսկ երբ այս, այդ, այն ցուցական-ները գոյականէ յետադաս են, երկայն հոլովնե-րով անոր հետ կը համաձայնին. ինչպէս,

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Տունն | այն. | Տունքն | այնոքիկ. |
| Ս. | Տանն | այնորիկ. | Տանցն | այնոցիկ. |
| Գ. | Տամբն | այնուիկ. | Տամբքն | այնոքիւք. |
| Հ. | զՏունն | զայն. | զՏունսն | զայնոսիկ. |
| Տ. | Տանն | այնմիկ, | Տանցն | այնոցիկ, |
| | ի Տունն | յայն. | ի Տունսն | յայնոսիկ. |
| Բ. | իՏանէն | յայնմանէ. | իՏանցն | յայնցանէ։ |

Օրինակիս մէջ կ'երեւայ որ այն ցուցականին երկայն հոլովնե-րը գործածուեր են։ Նմանապէս կը տեսնուի որ գոյականին ծայրը ն դիմորոշ յօդը դրուած է, Տունն այն. Թէ որ այս ցուցականին ըլլար ս պիտի դրուէր, այդին ըլլար դ պիտի դր-ուէր, Տունս այս, Տունդ այդ։ Միայն աս գիտնալ պէտք է թէ այս ցուցականը երբ գոյականէ յետադաս ըլլայ, յոգնակի հայցական և նախդրիւ տրական հոլովներուն մէջ կամ ս դիմո-րոշը չառներ, կամ ք ալ կ'ըլլայ. ինչպէս, չըլլար զտունս

շպարունէն, հապա պէտք ըսուի կամ զատուա շպարունէն, կամ ըղտունքս շպարունէն: Ուրիշ դիտողութեան արժանի կէտ մ'ալ կայ, այն է՝ թէ նախադաս գոյականին և թէ յետադաս ցուցականին վրայ նախդիրներուն կրկնուելը. զտունն զայն, ի տանցն յայնցանէ, եւայլն:

277. Այն, Դոյն, Նոյն ցուցական դերանուններն ալ ածական են բնիկ վեր (63), ասոնք միշտ գոյականով կը վարուին, և նախադաս դրուելով՝ անոր հետ կը համաձայնին. ինչպէս,

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Նոյն մարմին. | Նոյն մարմինք. |
| Ս. | Նորին մարմնոյ. | Նոցին մարմնոց. |
| Գ. | Նովին մարմնով. | Նոքին մարմնովք. |
| Հ. | զՆոյն մարմին. | զՆոյն մարմինս. |
| Տ. | Նմին մարմնոյ, | Նոցին մարմնոց, |
| | ի Նոյն մարմին. | ի Նոյն մարմինս. |
| Բ. | ի Նմին մարմնոյ. | ի Նոցին մարմնոց: |

Նոյն եզակի բացառական չունի, անոր համար եզակի վերջաւորով տրականը գործածուեր է բացառականի տեղ, ի Նմին մարմնոյ: Յոգնակիին մէջ ալ ուղղականը Նոյն մարմինք ըսուեր է, և ոչ թէ Նոքին մարմինք. հայցական ու նախդրիւ տրականն ալ զՆոյն մարմինս, ի Նոյն մարմինս, և ոչ թէ զՆոսին մարմինս, ի Նոսին մարմինս: Յոգնակի գործիականին մէջ ալ Նոքին մարմնովք ըսուած է, և ոչ թէ Նոքիմբք մարմնովք, բացառականն ալ ի Նոցին մարմնոց ըսուեր է, և ոչ թէ ի Նոցունց մարմնոց:

278. Իմ, Քո, Մեր, Ձեր, Իւր ստացական դերանունները սովորաբար գոյականէն յետադաս կ'ըլլան, ու անոր հետ կը համաձայնին. ինչպէս,

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Եղբայր իմ. | Եղբարք իմ. |

Ս· եղբօր իմոյ · եղբարց իմոց ·
Գ· եղբարբ իմով · եղբարբք իմովք ·
Հ· զեղբայր իմ · զեղբարս իմ ·
Տ· եղբօր իմում, եղբարց իմոց ·
յեղբայր իմ · յեղբարս իմ ·
Բ· յեղբօրէ իմմէ · յեղբարց իմոց ։

Գոյականէն նախադաս ըլլան, կը համաձայնին սոյնպէս · զոր օրինակ,

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո· | իմ | եղբայր · | իմ | եղբարք · |
| Ս· | իմոյ | եղբօր · | իմոց | եղբարց · |
| Գ· | իմով | եղբարբ · | իմովք | եղբարբք · |
| Հ· | զիմ | եղբայր · | զիմ | եղբարս · |
| Տ· | իմում | եղբօր, | իմոց | եղբարց, |
| | յիմ | եղբայր · | յիմ | եղբարս · |
| Բ· | յիմմէ | եղբօրէ · | յիմոց | եղբարց ։ |

Այս երկու օրինակին մէջ, իմ ստացականը թէ յետադաս և թէ նախադաս համաձայնած է, սակայն յոգնակի ուղղականին մէջ + գիրը և հայցական ու նախդրիւ տրական հոլովներուն մէջ ալ « գիրը ընդունելու . եղբարք իմ ըսուեր է փոխանակ եղբարք իմ+ ըսուելու . իմ եղբարք՝ փոխանակ իմ+ եղբարք ըսուելու . նոյնպէս զեղբարս իմ՝ փոխանակ զեղբարս իմ« ըսուելու, ևայլն ։

Սակայն գիտնալ պէտք է որ այս ստացական դերանուններն երբ գոյականաբար գործածուին, ան ատեն յոգնակի + և « գիրը կ՚ընդունին · ինչպէս,

իմ+, զիմ« · քոյ+, զքոյ« · իւր+ · զիւր« · ևն ։

Ճանաչեմ զիմս · — կը ճանչնամ իմիններս ։

Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան · — իւրիններուն եկաւ ու իւրինները զինքը չընդունեցին ։

Քո, Մեր, Ձեր, Իւր ստացականներն ալ էն նման կը համաձայնին իրենց գոյականներուն հետ թէ՛ նախադաս և թէ՛ յետադաս. ինչպէս,

Հայր քո, հօր քո, հարբ քով. հարք քո, հարց քոց. և այլն։

Տուն մեր, տան մերոյ, տամբ մերով. տունք մեր, տանց մերոց. և այլն։

Զօրութիւն ձեր, զօրութեան ձերոյ, զօրութեամբ ձերով. զօրութիւնք ձեր, զօրութեանց ձերոց. և այլն։

Բան իւր, բանի իւրոյ, բանիւ իւրով. բանք իւր, բանից իւրոց. և այլն։

Մեր տուն, մերոյ տան. և այլն։ Իւր բան, իւրոյ բանի, և այլն։ Ձեր զօրութիւն, ձերոյ զօրութեան. և այլն։

## ԳԼՈՒԽ Օ.

# ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱԲԵՐԵԱԼ,

279. Յարաբերական դերանունին համար խօսեցանք Քերականութեան Ա. մասին մէջ (68). թէ ինք դէմք չունի, բայց ամէն դէմքի անուն կամ դերանուն մէջ կը բերէ. ինչպէս,

Ես որ խօսիմ. դու որ խօսիս. նա որ խօսի։

Առաջինին մէջ որ յարաբերականը կը յարաբերէ ծառը, երկրորդին մէջ դուռն, երրորդին մէջ նաւն։

Յարաբերականին ցուցըցած անունը կամ դերանունը յարաբերեալ կ'ըսուի. վերի օրինակներուն մէջ ծառ, դուռ, նաւ բառերը յարաբերեալ եղան։

280. Յարաբերականը իր յարաբերեալէն ետքը կը դրուի, թուով իր յարաբերեալին հետ կը համաձայնի, իսկ հոլովով իր բային հետ. բային ինչ հոլով որ պահանջէ, այն հոլովով կը դրուի. ինչպէս,

Ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն և ոչ առնիցէ, արբցէ գան բազում. — Այն ծառան որ տիրոջը կամքը գիտնայ ու չընէ, շատ ծեծ պիտի ուտէ։

Հոս որ յարաբերականը կը յարաբերէ ծառայ յարաբերեալը. ծառայ եզակի ըլլալուն՝ որ եզակի դրուեր է. հոլովով ալ համաձայն են անոր համար, որ ծառային իր բային, այսինքն արբցէին տէր բային է, ուղ. դրուեր է. որ ալ իր բայերուն այսինքն՝ գիտիցէ, առնիցէ բայերուն տէր բայի ըլլալուն, ուղ. դրուեր է։

Բանն զոր խօսեցայ ձեզ, հոգի է և կեանք. — Այն խօսքը՝ որ ձեզի խօսեցայ, հոգի ու կեանք է։

Բանն և զոր երկուքն ալ թուով համաձայն են, բայց հոլովով անհամաձայն. վասն զի բանն տէր բայի պաշտօն ունի իր բային, այսինքն՝ է ին քով, և զոր սեռի խնդրի պաշտօն ունի իր բային, այսինքն՝ խօսեցային քով։

281. Այս օրինակներուն վրայ կ'աւելցընենք հետևեալ երկու դիտողութիւնները։

Ա. Յարաբերականն իրեն վերաբերեալ բայն և ուրիշ բառերն ունի, և յարաբերեալն ալ իրեն բայն և ուրիշ բառերը. յարաբերականն իր բառերովը միջանկեալ խօսք կ'ըսուի, յարաբերեալն ալ իր բառերով՝ գլխաւոր խօսք. ինչպէս,

Ծառայն որ գիտիցէ ըզկամս Տեառն և ոչ առնիցէ՝ արբցէ գան բազում :

Բանն՝ զոր խօսեցայ ձեզ, հոգի է և կեանք :

Այս օրինակներուն մէջ նոտր գրով նշանակուածները միջանկեալ խօսք են, և միւսները գլխաւոր խօսք : Ինչպէս կը տեսնուի միջանկեալ խօսքերը՝ գլխաւոր խօսքերուն մէջ մտած են. ըսել է որ յարաբերականներն իրենց բառերովը՝ յարաբերեալներուն անմիջապէս ետև դրուած են, և յարաբերեալներուն վերաբերեալ մնացած խօսքերը միջանկեալ խօսքէն ետքը : Թէպէտ այս կարգը լեզուին քաղցրութիւնը պահող բնական կարգն է, բայց կրնանք ըսել նաև՝

Գան բազում արբցէ ծառայն՝ որ գիտիցէ ըզկամս Տեառն և ոչ առնիցէ :

Հոգի և կեանք է բանն՝ զոր խօսեցայ ձեզ :

Այս օրինակներուն մէջ ալ կ'երևայ որ յարաբերականներն իրենց յարաբերեալներուն քովէն չեն բաժնուեր, բայց յարաբերեալներն իրենց վերաբերեալ բառերէն ալ չեն զատուած :

Բ. Վերի օրինակներուն աշխարհաբառները կրնանք նաև թարգմանել այսպէս,

Տէրոջը կամքը գիտցող ու չընող ծառան շատ ծեծ պիտի ուտէ :
Ձեզի խօսած խօսքս հոգի ու կեանք է :

Ասոնցմէ կը տեսնուի թէ յարաբերականն ու իր բայը, որ գիտիցէ և ոչ առնիցէ, ող վերջաւորած բայածականի վերածուեր են, գիտցող ու չընող. նոյնպէս զոր խօսեցայ, անցեալ դերբայի վերածուեր է, խօսած :

Գրաբառին մէջ յարաբերականով ու գլխաւոր բայով ըսուածները գրեթէ առ հասարակ աշխարհաբառին մէջ ող վերջաւորած բայածականով կամ անցեալ դերբայով կը բացատրուին իբրև ածական յարաբերեալին :

Գրաբառ լեզուի մէջ ող բայածականով և անցեալ դերբայով բացատրութիւնը խորթ է, մանաւանդ երբ անոնք իրենց հետ սեռի [1] կամ բնութեան խնդիր ունենան. ինչպէս վերի

---

[1] Ող կամ իչ կամ ելի վերջաւորած բայածականները միայն իրենց քով սեռի խնդիր կ'ունենան, փոխանակ հայցականի յատկացուցչի պէս սեռական հոլովով կ'առնեն. ինչպէս, գործող կամ գործիչ այնպիսեաց, առնելիք օրինաց. փոխանակ ըսելու, գործող կամ գործիչ զայնպիսիս, առնելի զօրէնս կամ՝ Այս բացատրութիւնը տես Թուահամար (246) :

օրինակներէն և ոչ մէկը իրենց աշխարհաբառներուն նման՝ գրաբառի չեն վերածուիր. բայց կարդացողը թող հասկընայ աշխարհաբառը՝ գրաբառ կրնայ ըլլալ, որ ընթեռնուն ի միտ առցէ. կամ ընթերցողն ի միտ առցէ։ Նոյնպէս մեր լեզուն կը պատմէ ձեզի. գրաբառ կրնանք ըսել մեր լեզուն պատմեսցէ ձեզ. կամ լեզուն մեր պատմեսցէ ձեզ։

Այս օրինակներուն մէջ եղած յարաբերականներուն յարաբերեալները զօրութեամբ կ՚իմացուին. որոնք դերանուն են. այսինքն՝ նա որ ընթեռնու ի միտ առցէ. այն՝ զոր լեզուն պատմեսցէ ձեզ։ Աշխարհաբառներէն կ՚երևայ որ կարդացողը և մեր լեզուն բառածներն իրենց հետ խնդիր չունենալով, գրաբառ ըսուեր են որ ընթեռնուն կամ ընթերցողն, մեր լեզուն կամ լեզուն մեր։ Բայց տէրոջը կամքը գիտցող ու չընող ծառան չենք կրնար գրաբառ ըսել, ծառայ գիտացող զկամս տեառն և չառնող. հապա պէտք ըսենք, ծառայ՝ որ գիտէր զկամս տեառն և ոչ առնէր։ Ուստի վայելուչ և ընդհանուր գործածական կերպն է դիմաւոր բայով և յարաբերականով եղած բացատրութիւնը։ Թէ ող բայածականը և թէ անցեալ դերբայը եթէ ներկայի նշանակութեամբ ըլլան աշխարհաբառի մէջ, գրաբառի մէջ դիմաւոր բայը ներկայ կը դրուի. ինչպէս,

Կարդացողը (ան՝ որ հիմա կը կարդայ) թող հասկընայ. — Որ ընթեռնուն ի միտ առցէ։

Ունեցածս (այն՝ որ հիմա ունիմ) տամ. — Զոր ունիմն տաց։

Եթէ անկատարի նշանակութեամբ ըլլան, դիմաւոր բայը անկատար կը դրուի. ինչպէս,

Կարդացողը (ան՝ որ կը կարդար) չէր հասկընար. — Որ ընթեռնոյրն ոչ առնոյր ի միտ։

Ունեցածնին (այն՝ որ ունէին) տուին. — Զոր ունէին ետուն։

Եթէ կատարեալ նշանակութեամբ ըլլան, դիմաւոր բայը կատարեալ կը դրուի. ինչպէս,

Տեսնողը (ան՝ որ տեսաւ) կը վկայէ. — Որ ետեսն վկայէ։

Լսածնիս (այն՝ որ լսեցինք) պատմեցինք. — Զոր լուաքն պատմեցաք։

Եթէ ապառնիի նշանակութեամբ ըլլան, դիմաւոր բայը ապառնի կը դրուի. ինչպէս,

Աս ընողը (ան՝ որ պիտի ընէ աս) պիտի ապրի. — Որ արասցէ զայս կեցցէ։

Ընելիքդ (այն՝ զոր պիտի ընես) շուտով ըրէ. — Զոր առնելոցն ես արա վաղվաղակի։

Եթէ ստորադասականի նշանակութեամբ ըլլան, դիմաւոր բայը ստորադասական կը դրուի. ինչպէս,

Արտը եղողը (ան՝ որ արտն ըլլայ) ետ չդառնայ. — Որ իցէ յանդի մի դարձցի յետս։

Չունեցողէն ունեցածն ալ (ան՝ որ ունենայ) պիտի առնուի. — Յորմէ ոչ ունիցի՝ և զոր ունիցին բարձցի։

Հարցական խօսքերու մէջ՝ ներկային տեղ ստորադասական ալ կը գործածուի. ինչպէս,

Կարդացածդ (զան՝ որ հիմա կը կարդաս) գիտե՞ս. — Գիտիցե՞ս զոր ընթեռնուցուս։

282. Վերն ըսինք թէ յարաբերականը յարաբերեալէն ետքը կը դրուի. բայց շատ անգամ առաջ ալ կրնայ դրուիլ. ինչպէս,

Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. փոխանակ ըսելու՝ Ո՞ւր է արքայն Հրէից որ ծնաւ, — Ո՞ւր է Հրէից թագաւորը որ ծնաւ. կամ Հրէից նոր ծնած թագաւորն ո՞ւր է։

Որ ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն հաստատուն եղև. փոխանակ ըսելու՝ Բանն՝ որ ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ հաստատուն եղև. — Այն խօսքը՝ որ հրեշտակներուն միջոցով ըսուեցաւ հաստատուն եղաւ. կամ հրեշտակներուն միջոցով ըսուած խօսքը հաստատուն եղաւ։

Վասն զի սուրբ է որ եմուտ անդր տապանակն տեառն. փոխանակ ըսելու՝ Վասն զի սուրբ է տապանակն տեառն որ եմուտ անդր. — Ինչու որ սուրբ է տիրոջը տապանակը որ հոն մտաւ. կամ ինչու որ տիրոջը հոն մտած տապանակը սուրբ է։

283. Վերն ըսինք դարձեալ թէ յարաբերականը յարաբերեալին հետ թուով կը համաձայնի. բայց եզակի յարաբերականը յոգնակի բառ կրնայ յարաբերել, մանաւանդ ե.

զակի ուղղական և հայցական հոլովներուն մէջ. ինչպէս,

Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք. փոխանակ ըսելու՝ որք սուրբ են սրտիւք. — Երանի անոնց որոնք սրտով սուրբ են. կամ՝ սրտով սուրբ եղողներուն երանի:

Զգործն զոր ես գործեմ. փոխանակ՝ զորս ես գործեմ. — Այն գործերը, որոնք ես կը գործեմ, կամ՝ իմ գործած գործերս:

Որ բարուոք վերակացու լինին երիցունք կրկին պատուոյ արժանի եղիցին. փոխանակ՝ Երիցունք որք բարուոք վերակացու լինին՝ կրկին պատուոյ արժանի եղիցին. — Այն երէցները՝ որ աղէկ վերակացու կ'ըլլան կրկին պատուի արժանի պէտք ըլլան. կամ աղէկ վերակացութեան ընող երէցները կրկին պատուի արժանի պէտք ըլլան:

284. Եթէ յարաբերեալը դերանուն է, շատ անգամ զօրութեամբ կը դրուի. ինչպէս,

Որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս. փոխանակ՝ Մի դարձուցաներ զերեսս յայնմանէ որ կամի փոխ առնուլ ի քէն. — Երեսդ մի դարձըներ անկէ, որ քեզմէ փոխ առնուլ կ'ուզէ. կամ՝ քեզմէ փոխ առնուլ ուզողէն երեսդ մի դարձըներ:

Մատեայ առ մի ումն որ անդ կային. փոխանակ՝ Մատեայ առ մի ումն յայնցանէ որք անդ կային. — Մօտեցայ անոնցմէ մէկուն որ հոն կային. կամ հոն եղողներէն մէկուն մօտեցայ:

285. Երբ դերանուն յարաբերեալը զօ-

բութեանք մեր, յարաբերականը անոր հոլո-վով կը դրուի. ինչպէս,

Որում խնդրէ ի քէն՝ տուր. փոխանակ ըսելու՝ Տուր այն որ խնդրէ ի քէն. — տուր անոր՝ որ քեզմէ կ'ուզէ. կամ քեզմէ ուզողին տուր:

Դու ոչ մտանես, և զոր մտանեն՝ ընդդէմ կայեալ արգելուս. փոխանակ ըսելու՝ Դու ոչ մտանես, և զայնոսիկ որք մտանեն ընդդէմ կայեալ արգելուս. — դուն չես մտներ, և ա-նոնք որ կը մտնեն՝ դէմ կենալով կ'արգիլես. կամ դուն չես մտներ և մտնողները դէմ կենալով կ'արգիլես:

Դուք երկիրպագանէք որում ոչն գիտէք, մեք երկիրպագանեմք որում գիտեմքն. փոխա-նակ ըսելու՝ Դուք երկիրպագանէք այն, զոր ոչ գիտէք, մեք երկիրպագանեմք այն զոր գիտեմք. — դուք երկրպագութիւն կ'ընէք անոր՝ որ չգիտէք, մենք երկրպագութիւն կ'ընենք անոր որ գիտենք. կամ դուք ձեր չգիտցածին եր-կրպագութիւն կ'ընէք, մենք մեր գիտցածին երկր-պագութիւն կ'ընենք:

286. Յարաբերականը յարաբերեալին հոլովով դրուած կայ հեղինակաց գրուածոց մէջ, և անոնք դիւրաւ հասկնալու հա-մար արժան կը համարինք թէ այս ձևը և թէ ուրիշ քանի մը ձևեր հոս դնել. Օրինակ,

Հաւատացէ զաւանդն, զոր աւանդեցաւ նմա. փոխանակ ը-սելու՝ որ աւանդեցաւ նմա:

Ամենեցուն որոց էք ի Հռոմ՝ ողջոյն. փոխանակ ըսելու՝ ողջոյն ամենեցուն որք էք ի Հռոմ:

Ջնջեա ի դպրութենէն յորմէ գրեցեր. փոխանակ ըսելու՝ յո-րում գրեցեր:

287. Ընդհակառակն. յարաբերեալը յարաբերականին հո-լովով դրուած կայ հեղինակաց գրուածոց մէջ. ինչպէս,

Զբանն զոր խօսեցար, հաստատեալ լիցի. փոխանակ ըսելու՝ բանն զոր խօսեցար :

Յերկիրն յոր հասեր քեզ լիցի ի ժառանգութիւն. փոխանակ ըսելու՝ երկիրն յոր հասեր :

Ամենայն մարդիկ որ ըմպեն զնա՝ յիմարեցուցանէ զմիտս. փոխանակ ըսելու՝ զմիտս ամենայն մարդկան որ ըմպեն :

288. Յարաբերական ու յարաբերեալ իրարու հոլովը՝ փոխանակի հոլով առած գործածուած կայ հեղինակաց գրուածոց մէջ. ինչպէս,

Ապստամբութիւն ուսուցանես ի Մովսէսէ որոց ի հեթանոսս ամենայն հրէայք են. փոխանակ՝ ամենայն հրէից որ ի հեթանոսս են :

Զորս վասն Կռոնոսի և Արամազդայ պատմութիւնք լսին, ամաչեմ ասել. փոխանակ՝ զպատմութիւնսն որք վասն և այլն :

Մարգարէանայ զոր առ յապա անցք ընդ Սաւուղ անցանելոց էին. փոխանակ՝ զանցս որք առ յապա ընդ Սաւուղ և այլն :

289. Յարաբերականը հոլովելու տեղ կընայ իր ձևովը մնալ, ու ետքը իր դրուելիք հոլովով դերանուն մը կամ ուրիշ յարմար բառ մը ընդունել. ինչպէս,

Որ ոչն ունիցի, և զոր ունիցին բարձցի ի նմանէ. փոխանակ ըսելու՝ յորմէ ոչն ունիցի և զոր ունիցին բարձցի :

Գթացաւ ի նոսա այն՝ որ ոչ երբէք պակասեցաւ գութ նորա. փոխանակ ըսելու՝ որոյ գութն ոչ երբէք պակասեցաւ :

(Որ յարաբերականը իր այն յարաբերեալին համաձայնած է հոս, բայց գիտնելու է որ ուղղական հոլովի մէջ պատահած է այդ համաձայնութիւնը, ուրիշ հոլովով համաձայն դրուած ատեն իմէ ետքը դարձեալ իր հոլովով դերանուն աւելցնել չըլլար :)

Այն որ Մովսէս և Եղիա իբրև զծառայս եկեալ կային առ նմա. փոխանակ ըսելու՝ առ որում Մովսէս և այլն կային :

290. Յարաբերեալին հոլովով ուրիշ դերանուն խօսքի մէջ կընայ կրկնուիլ. ինչպէս,

Այրն՝ զոր տեսեր, նա արարցէ զայդ, — այն մարդը՝ որ տեսար, ան պիտի ընէ այդ բանը. կամ տեսած մարդդ է որ պիտի ընէ այդ բանը :

(Այրն յարաբերեալ է զոր յարաբերականին, և տէր բայի արտաքէ բային, ուստի նա դերանունը այրնին հոլովով աւելորդ դրուած է, կրկնուած է :)

Զյետոյ զոր դուք սպանէք, զնա յարոյց Աստուած. — այն

Յիսուսը՝ որն որ գնաց աշակերտին, ընծիկ Աստուած յարդ․
կամ՝ չէր աղանդաւ Յիսուսն է՝ որուն Աստուած յարութիւն տուաւ։
ի բարեկամէ մեծի պր զօրէր, ի նմանէ դգայլ լինիլ․ — այն
բարեկամեքն՝ որն որ կը գովէր, ա՛նկէ ըգոյր եղեր․ կամ գոված
բարեկամդ է որմէ ըգո՛յր ըրած էս։

291․ Յարաբերականին հոլովով ուրիշ դերանուն ալ դըր-
ուած կայ․ ինչպէս,

Յորոց խմաստունքն ուղղի տուեալ փախչին ի նոցանէ․ — փոխա-
նակ ըսելու՝ յորոց խմաստունքն ուղղի տուեալ փախչին․ ի նո-
ցանէ աւելորդ դրուած է։

292․ Յարաբերական դերանունը յատ-
կացուցիչ եղած ատեն՝ իր յատկացեալէն ա-
ռաջ կը դրուի․ և այն ատեն եթէ յատկացեա-
լը նախդիր ունի, նախդիրը երբեմն միայն
յարաբերականին վրայ կը դրուի, և երբեմն
ալ երկուքին վրայ կը կրկնուի․ ինչպէս,

Կինն՝ որոյ անուանն պատմի ընդ ամենայն աշ-
խարհ։

Որոյ յատկացուցիչ է և անուան յատկացեալ։

Դաւիթ ընդ որոյ իմաստութիւնն զարմանա-
յին Յոյնք։

Ընդ նախդիրը իմաստութեան բառին է, բայց անոր յատկացու-
ցիչը որոյ ինքն առեր է։

Դարեհ զորոյ զմայրն կալաւ Աղեքսանդր։

Զ նախդիրը որոյ յատկացուցչին և մօրն յատկացեալին վրայ ալ
կրկնուած։

293․ Որ, անորոշ անձական պաշտօն ալ
կը վարէ, և անձանց ու իրաց վրայ կ՚ըսուի,
բայց այն ատեն յարաբերական դերանուն չէ,
և ո՞վ, ո՞րը նշանակութիւնը կ՚ունենայ․ գո-
յականէն ալ նախադաս է՝ կը համաձայնի անոր
հետ․ ինչպէս,

Ո՞ր քաղաք, որո՞յ քաղաքի, որո՞վ քաղաքաւ, զո՞ր

քաղաք, յո՞րմէ քաղաքէ. ո՞ր քաղաքք, ո՞րոց քաղաքաց, ո՞րովք քաղաքօք, զո՞ր քաղաքս, յո՞րոց քաղաքաց ։

Որ. հարցական չեղող խօսքերու մէջ ալ կը գործածուի. ինչպէս,

Յոր տուն մտանիցէք. — որ տուն որ մտնէք ։

Ոք, միանգամ բառերուն հետ ալ գործածուելով, ով որ կը նշանակէ. ինչպէս,

Որ ոք լուծցէ. — ով որ լուծէ ։

Որք միանգամ փափաքին. — որոնք որ կը փափաքին ։

Որ ածականը ինչ բառին հետ ալ կը գործածուի, և կը նշանակէ ինչ որ, և կը հոլովի այսպէս,

Որ ինչ, որոյ իրիք, որով իւիք, զոր ինչ, որում իմիք, յորմէ իմեքէ ։

## ԳԼՈՒԽ Ի.

# ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴ

294. Ս. Դ. Ն երեք գիրերուն դիմորոշ յօդ կ'ըսուի ։

295. Դիմորոշ յօդերը որ բառի վրայ որ դրուին, այն բառին որոշեալ ըլլալը, այսինքն որոշ բան մը կամ որոշ բաներ ցուցընելը կ'իմացընեն. ինչպէս,

Մանուկ ծնաւ, անորոշ է.

Մանուկն ծնաւ, որոշեալ է, վասն զի այս մանուկը ծնաւ ըսել է ։

Եմուտ ի պարտէզ, անորոշ է ․

Եմուտ ի պարտէզդ, որոշեալ է, վասն զի այդ պարտէզը մտաւ ըսել է ։

Գայր յագարակէ, անորոշ է ․

Գայր յագարակէն, որոշեալ է, վասն զի այն ագարակէն կուգար ըսել է ։

296 ․ Եական դերանուններուն վրայ դրըւած թէ գոյական և թէ ածական անունները դիմորոշ յօդ կ՚առնեն ․ ինչպէս,

Ես տէրս ։ Ես խոնարհս ։

Քեզ արարչիդ ։ Ի քէն ի մարդասիրէդ ։

Ինքն փրկիչն ։

Առաջին դէմք Եական դերանուանի հետ եղող անունը ս, երկրորդ դէմքի հետ եղողն դ, երրորդ դէմքի հետ եղողն ն առած են ։

297 ․ Յարաբերականին յարաբերեալ դերանունը զօրութեամբ դրուելու ըլլայ, յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառը դիմորոշ յօդ կ՚առնէ ․ ս կ՚առնէ, երբ զօրութեամբ դրուած յարաբերեալը ես, մեք, այս դերանուններն են, դ կ՚առնէ, եթէ դու, դուք, այդ դերանուններն ըլլան, ն կ՚առնէ, եթէ նա, այն դերանուններն են զօրութեամբ յարաբերեալ ․ ինչպէս,

Որ այժմս կեամ ․ այսինքն՝ ես որ այժմ կեամ ․ կ՚ըսուի նաև Որ կեամս այժմ ։

Զոր ասեմս ․ այսինքն՝ զայս զոր ասեմ ։

Որ եսդ տէր ․ այսինքն՝ Դու որ տէր ես ․ կ՚ըսուի նաև Որ տէրդ ես ։

Գիտիցե՞ս զոր ընթեռնուցուսդ. այսինքն՝ զայդ զոր ընթեռնուս :

Որ բազմեալն էին ընդ նմա. այսինքն՝ Նոքա որ բազմեալ էին ընդ նմա. կ'ըսուի նաև Որ էինն բազմեալ ընդ նմա, կամ Որ ընդ նմայն բազմեալ էին :

Յարաբերականէն անմիջապէս ետքը դրուած բառը կ'առնէ դիմորոշը. ընդ նմա բառը դիմորոշ ն առնելու համար , գեր մ'ալ առաւ , ըլլալու ընդ նմայն :

Մի՞թէ ոչ կարեմք զոր տեսաքն և լուաք չխօսել. այսինքն՝ զայն զոր տեսաք :

298. Նաև յարաբերական դերանունի եղած խօսքերու մէջ ալ շատ անգամ ս, դ, ն դիմորոշ յօդերը, այս, այդ, այն ցուցական դերանուններու տեղ կը դրուին, և երբեմն ալ իմ, քո, մեր, ձեր, իւր ստացական դերանուններու տեղ. ինչպէս,

Չարիքս որ լինին ուստի՞ իցեն. այսինքն՝ չարիքս այսոքիկ :

Ի մանկութենէ կարողէք զոլորն ճանաչել. այսինքն՝ ի մանկութենէ յայդմանէ :

Թող տուք մանկտւոյդ գալ առ իս. այսինքն՝ մանկտւոյդ այդմիկ :

Ցածկեա զգլուխդ. այսինքն՝ զգլուխ քո :

Ի գարնանային եղանակս ամենայն զգայութեամբքս զուարճանամք. այսինքն՝ ամենայն զգայութեամբք մերովք :

299. Ս, Դ, Ն յօդերը ուր, ուստի, մինչ, մինչդեռ, յորժամ բառերէն ետքը եկող բառերուն վրայ դրուելով, ուրդ, ուրն, ուստին, յորժմ,

յորժամ մակբայները կամ անոնց իմաստը ունեցող բառերը ույժ կ'ունենան. ինչպէս,

Ուր եմ երթամ դուք ոչ կարէք գալ, այսինքըն՝ անդր՝ ուր ես երթամ. — Ես գացած տեղը դուք չէք կրնար գալ:

Ուր եմ իցեմ. այսինքն՝ անդ ուր ես իցեմ:

Ուստի գամ՝ ն գիտիցէք. այսինքն՝ գիտիցէք տեղէն ուստի գամ. — Եկած տեղս պիտի գիտնաք:

Մինչ մանուկն էիր. այսինքն՝ յորժամ կամ է ժամանակին մինչ մանուկ էիր. — Պզտիկ եղած ատենդ:

Մինչ առ ձեզ եմ. այսինքն՝ այժմ մինչ առ ձեզ եմ. — Ձեզի հետ եղած ատենս, կամ հիմա որ ձեր քովն եմ:

300. Ի՛մորոշ յօդ կը դրուի որպէս շաղկապէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ, և ան ատեն նախընթաց բայը լռելեայն կ'իմացուի, փոխանակ կրկնուելու. ինչպէս,

Պաշարեցից զքեզ որպէս և Դաւիթն. այսինքն՝ որպէս և Դաւիթ պաշարեցաւ:

Ելից և արարից որպէս միշտն. այսինքն՝ ելից և արարից որպէս միշտ առնէի:

301. Ի՛մորոշ յօդ կը դրուի յատկացուցչին վրայ, երբ յատկացեալը զօրութեամբ է. ինչպէս,

Այս առակ և դատաւորին. այսինքն՝ և դատաւորի առակն:

Է բարկութիւն որ զօրէն է ի գրոց. որպէս Մովսէսին. այսինքն՝ որպէս Մովսէսի բարկութիւնն:

302 . Յարաբերականը յատկացուցիչ եղած ատեն անոր յատկացեալը դիմորոշ յօդ կ՚առնէ . ինչպէս ,

Հարիւրապետ մի , որոյ որդին հիւանդ կայր :

303 . Դիմորոշ յօդ կը դրուի ածականին վրայ , երբ անոր գոյականը զօրութեամբ է . ինչպէս ,

Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն ընդ չորն զինչ լինիցի . այսինքն՝ ընդ չոր փայտն :

304 . Դիմորոշ յօդ չդրուիր ցուցական ածականներու հետ եղող գոյականներու վրայ , երբ ցուցականը գոյականէն նախադաս է ( տես 275 ) . ինչպէս ,

Այս այր . Զայն տեղի . Յայնմ տան : Չըսուիր Այս այրս . Զայն տեղին . Յայդմ տանըդ :

305 . Դիմորոշ յօդ կը դրուի ցուցական ածականներու հետ եղող գոյականներու վրայ , երբ ցուցականը գոյականէն յետադաս է ( տես 276 ) . ինչպէս ,

Այրս այս . Զտեղին զայն . ի տանէդ յայդմանէ :

306 . Դիմորոշ յօդ չդրուիր անորոշ թըւականներու հետ եղող գոյականներու վրայ . ինչպէս ,

Այր ոմն . Արք ոմանք . Զայլ տուն . ի միւսում տան . Զամենայն այր . Ո՞ր տուն . և այլն : Չըսուիր Այրն ոմն . Արքն ոմանք . Զայլ տունն . ի միւսում տանն . Զամենայն այրն . Ո՞ր տունն . և այլն :

**307**. Ստացական դերանունները խօսքի մէջ առանց գոյականի ըլլան, դիմորոշ յօդով կը բանին. ինչպէս,

Իմս, զիմս. Քոյումդ, ի քոյոցդ. Ձերդ, ձերոցդ. Մերովս, ի մերմէն. Նայն:

**308**. Երբ յօդ առնելու բառեր և, կամ շաղկապներով կապուած են, յօդը կամ առջինը և կամ վերջինը կ'առնէ. ինչպէս.

Կարկառն և անձրև: Զքաղցրութիւն և ըզսաստկութիւնն իւր:

Աղքատն և տնանկ: Արծաթեղէնօք և ոսկեղէնօքն:

Զխուլն և զհամր: Վասն հարց և մարցն:

Քահանայապետքն և դպիրք և փարիսեցիք:

**309**. Նշանի մը յօդը իմէ նախադաս ածականին վրայ կը դրուի. ինչպէս,

Կորուսեալս հոգւոյ. փոխն՝ Կորուսեալ հոգւոյս:
Միածինն որդի. „ Միածին որդին:
Ի ծայրածաւալն ծովէ „ Ի ծայրածաւալ ծովէն:
Երկուցն եղբարց. „ Երկուց եղբարցն:

**310**. Ածականը յետադաս եղած ատենն ալ կրնայ յօդ առնել վրան, երբ զատելով մը կ'առնուի. ինչպէս,

Օր Տեառն մեծն և երևելին. — Տէրոջը այն օրը՝ որ մեծ է ու երևելի:

Անկաւ Բաբելոն մեծն:

Ուր էր Ղազար մեռեալն:

Օրհնեցէք զԱստուած բարերարն:

Յետադաս ածականները աւելի յատկութիւն մը կուտան իրենց գոյականներուն, իրենց վրայ դիմորոշ յօդ առնելով:

Բայց թուական և ստացական ածականնե-
րուն համար այս չըլլար. չըսուիր, եղբարց երկուցն, բանից իմոցս. և այլն. հապա ըսելու է, եղբարցն երկուց, բանիցս իմոց, են:

311. Յատուկ անուններուն նախադաս ածականին վրայ յօդ կը դրուի սովորաբար. ինչպէս,

Մեծն Պաւղոս: Անսուտն Աստուած:
Արին Վաղարշակ: Ի մարդասիրէն Աստուծոյ:
Քաջին Հայկայ: Մերոյն Հայկայ:

312. Յատուկ անունները երբ իրենց հասարակ գոյականը իբրև բացայայտիչ իրենցմէ ետքն ունենան, յօդը իրենք կ'առնեն. ինչպէս,

Դկլաթն գետոյ:
Ի Սինն անապատէ:
Զկուաշն աւան:

313. Խնդիր կամ մակբայ ունեցող դերբայներուն կամ ուրիշ անուններուն յօդն ալ իրենցմէ առաջ եղող խնդրին կամ մակբային վրայ կը դրուի. ինչպէս,

Խնդրէն վրայ յօդ

Զի՞նչ իցէ ի մեռելոցն յառնել. այսինքն՝ յառնելն ի մեռելոց:
Չարն ի չարն գործելոյ առնու զանուն. այսինքն՝ ի չար գործելոյն:
Յաղագս առ մեզն գթութեան. այսինքն՝ յաղագս գթութեանն առ մեզ կամ որ առ մեզ:

Միւսանգամն գալստեան դատաստան. այսինքն՝ միւսանգամ գալստեանն ։

Վազն առնելով. ցանգն հայելով. այսինքն՝ վազ առնելովն. ցանգ հայելովն ։

314. Յատկացուցիչն ալ նախադաս ըլլալով յատկացեալին յօդը կ'առնէ. ինչպէս,

Զօրութեանն օրէնս. այսինքն՝ զօրութեան օրէնսն ։

Զինչ օգտեցուցանէ ոմանցն լուսաւորութիւն զհասարակացն անտեսութիւն.— այսինքն՝ ոմանց լուսաւորութիւնն զհասարակաց անտեսութիւնն ։

## ԳԼՈՒԽ Ը.

# ԴԵՐԲԱՅ

315. Քերականութեանս առաջին մասին մէջ (139) խօսեցանք դերբայներուն վրայ, թէ երբեմն անուն և երբեմն բայ ինչպէս կը գործածուին ։

316. Մինչև ցարդ համաձայնութեան կարգին մէջ ալ տեսանք որ դերբայները երբեմն անուն դիմաւոր բայի խնդիր կ'ըլլան. բայց բայի պէս ալ սեռի խնդիր և բնութեան խնդիր կ'առնեն. ուր բայի ալ կ'առնեն սեռական հոլով (տես 170) ։

BELEDIYE KÜTÜPHANESİ

317. Հոս քանի մը գլխաւոր դիտելիքներ պիտի աւանդենք դերբայներուն վրայ։

318. Անորոշ դերբային գործիականը դիմաւոր բայի տեղ կը դրուի, որպէս զի երկու և աւելի դիմաւոր բայեր քովէ քով շարուելով խօսքը անշնորհք չըլլեն. ինչպէս,

Գնալով խօսէին ընդ միմեանս. — Երթալով կը խօսէին մէկմէկու հետ։

Հոս գնալը՝ որ գնալ անորոշ դերբային գործիականն է, քովի բային եղանակին, ժամանակին, դէմքին ու թիւին համեմատ դարձընենք դիմաւորի, և շաղկապով ալ իրարու հետ կապենք. կ'ունենանք, Գնային և խօսէին ընդ միմեանս, որ ճիշդ առջի նշանակութիւնն ունի։

Բայց երբ ըսենք. Գեղեցիկ է փութանելով. հոս փութանելով բայի տեղ գործածուած չէ, այլ անունի տեղ է, Գեղեցիկ է փութալն ըսելու տեղ է, և նշանակութիւնն է փութով (կէսօրներուն իրէ) աղէկ է. ուստի է բային նայելով փութանելուն ալ սահմ. ներկ. եզ. Գ. դէմք ըսենք նէ, նոյն նշանակութիւնը չտար. Գեղեցիկ է և փութայ ըսել. Գեղեցիկ է փութանելովին նշանակութիւնը չտար։

319. Բայց երբ դիմաւոր բայ մը իր անորոշ դերբային գործիականն իր քովը ունենայ, ան ատեն խօսքին հաստատութիւն և ստուգութիւն կու տայ. ինչպէս,

Օրհնելով օրհնեցից զքեզ. — Շատ պիտի օրհնեմ քեզ։

Աճելով աճէին և բազմանալով բազմանային. — Ետեւէ ետեւ կամ երթալով կ'աճէին ու կը շատնային։

320. Անորոշ դերբային ուղղականն ու հայցականն ալ իրենց դիմաւոր բայերուն վրայ կրկնուելով՝ հաստատութիւն կու տան խօսքին. ինչպէս,

Ունել ունէր. — արդարը ունէր:

Զսիրելն սիրեն. — արդարը կը սիրեն:

321. Ինչպէս վերը տեսանք անորոշ դերբային գործիականը դիմաւոր բայի տեղ կը դրուի, ատանկ ալ անորոշ դերբային ուղղականը դիմաւոր բայի տեղ կը դրուի. բայց իր քովը դիմաւոր բային եղանակովը, ժամանակովը, դէմքովը ու թուովը դիմաւորի չդառնար, հապա խօսքին համեմատ դէմք և թիւ առնելով ստորադասական եղանակի կամ ապառնի ժամանակի կը դառնայ զի շաղկապով. ինչպէս,

Կամին սպանանել զքեզ. — կ'ուզեն քեզ սպաննել:

Թէ որ այս խօսքը վերի կանոնով դիմաւորի դարձնել ուզենք, պիտի ըսենք կամին և սպանանեն զքեզ. որ կ'ուզեն և կը սպաննեն քեզ ըսել կ'ըլլայ, և ոչ թէ կ'ուզեն քեզ սպաննել: Ինչպէս յայտնի է, այս կերպ դիմաւորի դարձնելը սխալ է, ուստի զի շաղկապով պիտի ըսենք, կամին զի սպանցեն զքեզ, ըսել է կ'ուզեն որ քեզ սպաննեն, որուն հետ նոյն է կ'ուզեն քեզ սպաննելը: Օրինակէն կ'երևայ թէ ապառնի ժամանակի յոգ. գ. դէմք եղեր է սպանանել դերբայը:

Պատուիրեաց նմա մի ումեք ասել. փոխանակ ըսելու՝ Պատուիրեաց նմա զի մի ումեք ասիցէ. — պատուիրեց անոր որ մէկու մը չըսէ:

Ասել անորոշ դերբայը ստորադասական եղ. գ. դէմքի դարձաւ:

Ակնարկէին ընկերացն՝ գալ օգնել նոցա. փոխանակ ըսելու՝ Ակնարկէին ընկերացն զի եկեսցեն և օգնեսցեն նոցա. — աչք կ'ընէին իրենց ընկերներուն որ գան օգնեն իրենց:

322. Այս օրինակներուն վրայ նայելով կը հետևցրնենք նախ թէ, ինչպէս և շաղկապով դրուած ու միևնոյն ժամանակը դէմքը

ու Թիւը ունեցող երկու դիմաւոր բայերու առաջինը անորոշ դերբայի գործիականով կրնայ դրուիլ, ասանկ ալ դիմաւոր բայի մը ետքը չը շաղկապով դրուած ստորադասական կամ ապառնի դիմաւորը անորոշ դերբայի ուղղականով կրնայ դրուիլ։

Կը հետեւցընենք նաեւ թէ · չը շաղկապով ստորադասական կամ ապառնի դիմաւոր բայի տեղ դրուած անորոշ դերբայները նախդրիւ տրականի մօտ նշանակութիւն կուտան խօսքին, ինչպէս աչք կ՚ընեն իրենց ընկերներուն որ գան օգնեն իրենց աշխարհաբառը կրնանք ըսել նաեւ աչք կ՚ընէին իրենց ընկերներուն՝ գալու օգնելու իրենց · և վերլուծութեան մէջ սովորութիւն եղած է այս անորոշները աննախդիր տրական բընութեան խնդիր ընելու ։

Երբեմն ալ այս անորոշ դերբայներուն վըրայ նախդիրը յայտնի կը դրուի · ինչպէս,

Եկն ի փրկել զարարածս · փոխանակ՝ Եկն փրկել զարարածս, կամ Եկն զի փրկեսցէ զարարածս · — Եկաւ արարածները փրկելու, կամ եկաւ որ արարածները փրկէ ։

Ի լսել կամ առ ի լսել եկեալ եմ ես · փոխանակ՝ Եկեալ եմ ես զի լուիցեմ, կամ զի լուայց · — լսելու համար եկած եմ ես, կամ եկած եմ որ լսեմ ·

323 · Իբրեւ, մինչ, յորժամ մակբայներով դիմաւոր բայի տեղ՝ ի, ընդ նախդիրներով անորոշ դերբայ կրնայ դրուիլ · ինչպէս,

Ի տեսանելն զքեզ բերկրեսցի · փոխանակ բե-

լու՝ Յորժամ տեսցէ զմեզ բերկրեսցի . — Մեզ տեսնելու ատենը պէտք ուրախանայ . կամ երբ ըզ-մեզ տեսնէ պէտք ուրախանայ ։

Ի տեսանելն նախդրիւ տրական խնդիր դրուած է բերկրեսցի դի-մաւոր բային . երբ ինք ալ յորժամ մակբայով կրնայ դիմաւոր դրուիլ՝ յորժամ տեսցէ , ևայլն ։

Ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհեմ՝ եկին մոգք յարևելից . փոխանակ ըսելու՝ Իբրև ծնաւ Յիսուս ի Բեթղեհեմ, եկին մոգք յարևե-լից ։

Ընդ երթալն նորա նեղէին զնա ժողովուրդք . փոխանակ ըսելու՝ Մինչ երթայր նա նեղէին զնա ժողովուրդք ։

324 . Անորոշ դերբայը, մանաւանդ էա-կան բայի անորոշ դերբայը գրաբառ լեզուի մէջ շատ անգամ դիմաւոր բայով կը դրուի ա-ւելի վայելչաբար . ինչպէս,

Եւ չէ բարեաց կամեցող է Աստուած, ու-սուցանէ մեզ Տէր մեր . փոխանակ ըսելու՝ Զլինելն Աստուծոյ կամեցող բարեաց՝ ուսու-ցանէ մեզ Տէր մեր . — Մեր տէրը մեզի կը սորվե-ցընէ Աստուծոյ կամեցող բարեաց ըլլալը ։

Եւ չէ այս այսպէս է ամենեցուն յայտնի է որ կամին ուսանել . փոխանակ ըսելու՝ Այսմ այսպէս լինելն ամենեցուն յայտնի է որ կամին ուսանել . — Անոր այսպէս ըլլալը՝ սոր-վիլ ուզողներուն ամենուն յայտնի է ։

Այլ չէ դև զդև ոչ հանէ, զայն իսկ յայտ ա-րար . փոխանակ ըսելու՝ Զոչ հանելն դևի զդև յայտ արար . — Դևին դև չհանելն ալ իմա-ցուց ։

325. Անցեալ դերբայը երբեւ ածական ա-
նուն կը հոլովի ըսինք Ա. մասին մէջ (141)։
Երբեւ ածական սովորաբար իր գոյականէն
յետադաս կ'ըլլայ, և համաձայն. ինչպէս,

Գանձի ծածկելոյ յագարակի. — ագարակի մէջ
ծածկուած գանձի։

Ուռկանի արկելոյ ի ծով. — ծովը ձգուած ուռկանի։

Անհամաձայն ալ կ'ըլլայ տես 260։

326. Առաջին մասին մէջ ըսինք թէ անց-
եալ դերբայով կը շինուին յարակատար, գե-
րակատար և ստորադասական անցեալ ժամա-
նակները։ Այս ժամանակներուն մէջ, այսին-
քըն էական բայի ու անցեալ դերբայի մէջ
ուրիշ բառեր կրնան մտնել և երկուքն իրար-
մէ հեռացընել. ինչպէս,

Ես ծնեալ իսկ ի դմին եմ. փոխանակ ըսելու՝
Ես ծնեալ եմ իսկ ի դմին։

Չև իցէ հասու խօսեալ. փոխանակ ըսելու՝
Չև իցէ խօսեալ հասու։

Վերլուծութեան ժամանակ ալ անցեալ
դերբայները ուղղական հոլով խնդիր կը տըր-
ուին էական բայերուն, փոխանակ յարակա-
տար, գերակատար եւայլն ժամանակ ըսելու։

327. Ինչպէս անորոշ դերբային համար
ըսինք (318), նոյնպէս անցեալ դերբայը՝ ա-
նորոշ դերբայի գործիականի նշանակութեամբ
երբեւ բայ կը գործածուի. ինչպէս,

Մտեալ ի տուն բազմեցաւ. փոխանակ ըսելու՝
Եմուտ ի տուն և բազմեցաւ. — տուն մտնելով

Թողեցայ, կամ՝ թող տուի ու թողեցայ ։

Աս ալ ճիշդ անոր պէս դերբային նման՝ և շաղկապով կապուած երկու դիմաւոր բային մէկուն տեղ դրուեր է ․ և երբ դիմաւորի դարձընել հարկ եղաւ, քովի բայը ինչ ժամանակ, թիւ, դէմք որ ունի, նոյնպէս վերածուեցաւ ինքն ալ ։

Տեսեալ արդարոց ծիծաղեսցին ․ փոխանակ ըսելու՝ տեսցեն արդարք և ծիծաղեսցին ․ — արդարները տեսնելով ծիծաղեցան ․ կամ՝ արդարները տեսան ու ծիծաղեցան ։

Արդարոց՝ սեռական հոլով տէր բայի դրուեր է տեսեալին համար, երբ միանգամայն ծիծաղեսցինին ալ տէր բայն է, ինչպէս դիմաւորի դարձընելով տեսանք ։

Տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա ասէ ․ փոխանակ ըսելու՝ Տեսանէ Յիսուս զհաւատս նոցա և ասէ ․ — Յիսուս տեսնելով անոնց հաւատքը կ'ըսէ, կամ՝ Յիսուս անոնց հաւատքը կը տեսնէ ու կ'ըսէ ։

328 ․ Չէզոք բայերուն անցեալ դերբայը գոյականաբար կրնայ գործածուիլ գրաբառի մէջ, և աշխարհաբառի մէջ ող բայածականի[1] նշանակութիւն կ'ունենայ ․ ինչպէս,

Ո՞վ է մեծ, բազմեա՞լն եթէ սպասաւորն ․ — ո՞վ մեծ է, նստո՞ղը թէ սպասաւորը ։

Եւ ասէ ցնկեալսն ի վերայ նորա ․ — ու իր վրայ ինկողներուն կ'ըսէ ։

329 ․ Անորոշ և անցեալ դերբայները իբ-

[1] Բայի արմատ կամ բայի արմատէ ածանցեալ գոյական անուններուն բայանուն ըսել սովորութիւն եղած է (տես 229)․ ասանկ ալ բայի արմատ կամ բայի արմատէ ածանցեալ ածական անուններուն բայածական ըսել սովորութիւն եղած է ․ ասոնք ող, իչ, ելի վերջաւորութեամբ կը գործածուին, և իրենց նշանակութեանը համեմատ ինչեր կ'առնեն ։

րև բայանուն կը հոլովին և խնդիր կ՚ըլլան բայի․ և իրենք ալ ըստ պատշաճի խնդիր կ՚առնեն ։ Խնդիրը եթէ առաջ անցնի և այս դերբայներն ալ նախդիր ունենան, նախդիրը սովորաբար խնդրոյն վրայ կը դրուի․ ինչպէս,

Զգուշանալ ի կռոց զոհելոյ․ փոխանակ ըսելու՝ Զգուշանալ ի զոհելոյ կռոց ։

Կռոց վերջ․ տրական խնդիր ըլլալով զոհելոյ անորոշ դերբային (որ բացառական հոլովով դրուած է), անոր ի նախդիրն ինք առած է, ի կռոց զոհելոյ ։

Զհրով կիզեալն և զհողմով հոսեալն և զժանեօք գազանաց ծախեալն յարուցանես․ փոխանակ ըսելու՝ Զկիզեալն հրով և զհոսեալն հողմով և զծախեալն ժանեօք գազանաց յարուցանես ։

Այս օրինակին մէջ ալ հրովը կիզեալին, հողմովը հոսեալին, ժանեօք գազանացը (գազանաց յատկ․ է ժանեօքին) ծախեալին գործիական հոլովներով խնդիր են, անոր համար ամէնքն ալ իրենց խնդրառուներուն զ նախդիրները իրենց վրայ առած են ։

Յառաքինի գործոյն խոստացելոց վարձուց․ փոխանակ ըսելու՝ Ի վարձուցն խոստացելոց առաքինի գործոյ ։

Առաքինի գործոյ (առաքինի ածական է գործոյին) վերջ․ տրա․ խնդիր է խոստացելոց անցեալ դերբային, որ ածական ըլլալով նախադաս դրուեր է իր գոյականէն և եղեր է ի խոստացելոց վարձուց․ կը տեսնուի որ խոստացելոցը թէպէտ ածական է, բայց իրեն խնդիր ունենալով, իր գոյականին նախդիրը՝ որ նախադաս դրուելովը իր վրան առած է, ինք ալ տուեր է իր խնդրոյն՝ որ առաջ դրուեր է իրմէ, և եղեր է յառաքինի գործոյն խոստացելոց վարձուց ։ Թէ որ ուզենք խնդրոյն վրայէն նախդիրն առնել, պիտի ըսենք ի խոստացելոց վարձուց առաքինի գործոյ․ բայց այս խօսքը աղէկ չկազմուեցաւ, վասն զի գործոյը վերջ․ տր․ խնդիր է խոստացելոցին, և հիմա անկէ հեռու դրուեր է վարձուցին քով իբրև յատկացուցիչ․ ուստի խնդի-

րն իր խնդրառութեան քովը բերելու համար պիտի ըսենք ի վեր-ջոյ խոստացելոց ստացինի գործոյ · հիմա մօքի սխալ չկայ · վա-սըն զի խնդրառու ածականն իր խնդրոյն քովն ըլլալու համար իր գոյականէն հեռու գրուեցաւ, և անոր համաձայն : Այս դի-տողութիւնը ուրիշ բառերու և ամէն խնդրառուներու հա-մար ընել պէտք է · Նայելու է որ իմաստի երկդիմութիւն չը-պատահի :

330 · Երբ պատահի որ թէ խնդրառու դերբայը և թէ խնդիրը միևնոյն նախդիրն ու-նենան, նախադաս խնդրոյն վրայ նախդիրը կր-ճատ, և ան կը բաւէ յետադաս խնդրառուին ալ · ինչպէս,

ի քուն լինել մարդկան եկն թշնամի · փո-խանակ ըսելու՝ ի ի քուն լինել մարդկան · այսինքն՝ ի լինել մարդկան ի քուն :

Ի լինել, ի քուն, երկուքն ալ ի նախդիր ունին · ի քուն խնդիր ըլլալով ի լինելին, առաջ դրուեր է, և ի լինելին ին զեղչուե-լով ըսուեր է ի քուն լինել, փոխանակ ըսելու՝ ի քուն ի լինել, որ աղէկ չէ :

ի ճանապարհ անկանել նորա · փոխանակ ը-սելու՝ ի ի ճանապարհ անկանել նորա · այս-ինքն՝ յանկանել նորա ի ճանապարհ :

Յարի և այս ի Բաբելոնէ դարձեալն · փո-խանակ ըսելու՝ ի ի Բաբելոնէ դարձեալն · այսինքն՝ ի դարձեալն ի Բաբելոնէ :

ի Քրիստոսէ պարգևեալ փառն վայելեսցուք · փոխանակ ըսելու՝ ի ի Քրիստոսէ պար-գևեալ փառն · այսինքն՝ ի փառն պար-գևեալ ի Քրիստոսէ :

Ի Քրիստոսէ բացառական խնդիր պարգևելային, պարգևեալ ա-ծական փառնին, անոր համար չըսուեցաւ ի պարգևեալ փառն ի Քրիստոսէ :

331 · Ապառնի դերբայը եմ էական բային

հետ բուն ապառնիի նշանակութիւն կ'ունենայ ըսինք Ա. մասին մէջ (149)։

332. Ապառնի դերբային տեղ. հեղինակները նոյն նշանակութիւնով ուրիշ բայեր կը գործածեն. ինչպէս,

Համարս ունիմ տալ. փոխանակ ըսելու՝ Համարս տալոց եմք։

Հանդերձեալ ես մեռանել. փոխանակ ըսելու՝ մեռանելոց ես։

Ունիմ և հանդերձեալ եմ (էմ էական բային հետ իբրև յարակատար, գերակատար և ստորադասական անցեալ ժամանակներով գործածուած) ապառնի դերբային տեղ միշտ կը գործածուին, անոր ցուցըրած ժամանակը, դէմքն ու թիւն ալ ցուցընելով։

Բայց կան նաև երեք բայեր, հասանէ, մնայ, կայ, որոնք միշտ եզակի երրորդ դէմք կը մնան, և իրենց քով ունեցած վերջ. տրական խնդիրէն դէմքն ու թիւը կ'որոշուին. ինչպէս,

Հասանէ քեզ մարգարեանալ. այսինքն՝ մարգարեանալոց ես։

Կայ մնայ մարդոյ միանգամ մեռանել. այսինքն՝ մարդ միանգամ մեռանելոց է։

Մնայ քեզ տանջել. այսինքն՝ տանջելոց ես։

Հանդերձեալէմն ալ եզակի երրորդ դէմքով կը գործածուի, և քովի վերջ. տրական խնդիրէն իր դէմքն ու թիւը կը ճանչցուի. ինչպէս, հանդերձեալէ ինձ գալ. ըսել է գալոց եմ, ևայլն։

# ԳԼՈՒԽ Թ.

# ՄԱԿԲԱՅ

**333.** Մակբայներուն համար առաջին մասին մէջ (153) ըսինք որ բայերուն վրայ դրուելով, անոնց գործողութեան պարագաները, այսինքն՝ կերպը, տեղը, ատենը եւայլն կը ցուցընեն ։

**334.** Մինակ բայերուն վրայ չդրուիր մակբայը, այլ բայի նշանակութիւն ունեցող ամէն բառերու վրայ, այսինքն դերբայներու եւ բայի արմատներու կամ բայի արմատէ ածանցեալ բառերու վրայ ։

Մակբայները ածականի մը եւ ուրիշ մակբայի մը որպիսութիւնն ալ կը ցուցընեն. ինչպէս,

Յոյժ բարի. նուրբ չար. յոյժ բարւոք. նուրբ չարաչար ։

Յոյժ, նուրբ մակբայները բարի, չար ածականներուն, եւ բարւոք, չարաչար մակբայներուն որպիսութիւնը ցուցըած են ։

**335.** Դերբայները եւ բայի արմատները կամ արմատէ ածանցեալ անունները երբ նախդիր ունենան, նախդիրը նախադաս մակբային վրայ կը դրուի. եւ երբեմն ալ երկուքին վրայ. ինչպէս,

Ընդդէմ դառնալ նոցա ։

Յառաջագոյն առաքեալ պատգամս ։

Ի միանգամ ի գալստեանն ։

Յառաջագոյն ընթերցեալն ։

336. Շատ գործածական մակբայները իրենց նշանակութեամբը առաջին մասին մէջ աւանդեցինք. հոս անոնցմէ մէկ քանիին վրայ քանի մը կարեւոր դիտողութիւններ պիտի աւանդենք։

337. Այսր, այդր, անդր, աստ, անդ, աստի, այտի, անտի մակբայները ս, դ, ն դիմորոշ յօդերուն, և երբեմն ալ այս, այդ, այն ցուցական դերանուններուն տեղ կը գործածուին։

Այսր, այդր, անդր մակբայները նախդրական հոլովի ոյժ ունենալով, նախդրականի հետ կը բանին. ինչպէս,

Ի քաղաք այսր. փոխանակ՝ ի քաղաքս, կամ ի քաղաքս յայս։

Ի քաղաք այդր. փոխանակ՝ ի քաղաքդ, կամ ի քաղաքդ յայդ։

Ի քաղաք անդր. փոխանակ՝ ի քաղաքն, կամ ի քաղաքն յայն։

Աստի, այտի, անտի մակբայները բացառական հոլովի ոյժ ունենալով, բացառական հոլովի հետ կը բանին. ինչպէս,

Ի քաղաքէ աստի. փոխանակ՝ ի քաղաքէս կամ ի քաղաքէս յայսմանէ. կ՚ըսուի նաեւ ի քաղաքէ աստի յայսմանէ։

Ի քաղաքէ այտի. փոխանակ՝ ի քաղաքէդ կամ ի քաղաքէդ յայդմանէ. կ՚ըսուի նաեւ ի քաղաքէդ այտի յայդմանէ։

Ի քաղաքէ անտի. փոխանակ՝ ի քաղաքէն, կամ ի քաղաքէն յայնմանէ. կ՚ըսուի նաեւ ի քաղաքէ անտի յայնմանէ։

Այս, անդ մակբայները ներգոյական հոլովի դէմ ունենալով, ներգոյական հոլովի հետ կը բանին. ինչպէս,

Ի քաղաքի աստ. փոխանակ ի քաղաքիս, կամ ի քաղաքիս յայսմիկ. կ'ըսուի նաև ի քաղաքի աստ յայսմիկ:

Ի քաղաքի անդ. փոխանակ ի քաղաքին, կամ ի քաղաքին յայնմիկ. կ'ըսուի նաև ի քաղաքի անդ յայնմիկ:

Ի քաղաքի այդր[1]. փոխանակ ի քաղաքիդ, կամ ի քաղաքիդ յայդմիկ:

338. Ոչ կամ չ մակբայները խօսքը կը բացասեն. ինչպէս,

Ոչէ բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց. — տղաքներուն հացն առնել և շուներուն առջևը ձգելը աղէկ բան չէ:

Չերկնչիս յԱստուծոյ զի ի նմին պատժի կաս. — չէ՞ս վախնար Աստուծմէ, քանի որ նոյն պատժին մէջն ես:

Ոչ մակբայը հարցական խօսքերու մէջ ո՞չ ատենն, չէ՞ մի կը նշանակէ. ինչպէս,

Ո՞չ երկոտասան ժամք են աւուր. — օրը տասներկու ժամ չէ՞ մի:

339. Ոչ, մի մակբայները սովորաբար բայէն առաջ կը դրուին միշտ. բայց երբեմն կրնան վերջն ալ դրուիլ, խօսքին վայելչութեանը համեմատ. ինչպէս,

Գրեցաւ խակ ոչ. փոխանակ ոչ գրեցաւ խակ:

[1] Այդր՝ դ դիմորոշը կամ՝ այդ դերանունը ցուցնելու համար թէ նախդրիւ տրականի և թէ ներգոյականի հետ կը բանի:

Որ ոչն գործիցէ, և կերիցէ Դ. փոխանակ՝ Որ ոչն գործիցէ մի կերիցէ։

340. Ու, Դ մակբայներէն ետքը՝ միևնոյն բայը իր բառերովը մէկտեղ սովորաբար չը կրկնուիր, այլ զօրութեամբ կ'իմացուի. ինչպէս,

Թէպէտ և ամենեքին գայթակղեսցին, այլ ես ոչ. — այսինքն՝ այլ ես ոչ գայթակղեցայց։

Գովեսցէ զքեզ ընկերն և մի քո բերան, օտարն և մի քո շրթունք. — այսինքն՝ Գովեսցէ զքեզ ընկերն և մի գովեսցէ զքեզ քո բերան. Գովեսցէ զքեզ օտարն և մի գովեսցեն զքեզ քո շրթունք։

341. Ուր, տեղ ցուցընող մակբայ է, և յարաբերական դերանուններն ներգոյական հոլովին, այսինքն՝ յորում ի նշանակութիւն կ'ունենայ. ինչպէս,

Ի տեղւոջ. ուր անուն տեառն զօրութեանց կոչեցաւ. այսինքն՝ յորում կոչեցաւ։

342. Ուստի, մակբայն ալ յարաբերական դերանուններն բացառական հոլովին, այսինքն՝ յորմէ ի նշանակութիւն կ'ունենայ. ինչպէս,

Ի դրախտէն՝ ուստի ելանեն գետք քառավտակք. — այսինքն՝ յորմէ ելանեն։

# ԳԼՈՒԽ Ժ.

# ՇԱՂԿԱՊ

343. Առաջին մասին մէջ (155) ըսինք թէ Շաղկապ կ՚ըսուին այն բառերը, որ բառ բառի և խօսք խօսքի հետ կը կապեն, և գլխաւոր շաղկապները նշանակեր էինք միայն։ Հիմա այն շաղկապներուն մէկ քանիին վրայ մէկ քանի կարևոր դիտելիքներ պիտի աւանդենք։

344. Թէ, Եթէ շաղկապները քանի մը կերպ նշանակութեամբ կը գործածուին.

Ա. Թէ, Եթէ կը նշանակեն հէմ, կապելու բառերուն երկուքին ալ վրայ կը դրուին զատ զատ. ինչպէս,

Եթէ կենօք և եթէ մահու. — հէմ կէնդանի ճու-
ըլ հէմ մեռնէլըլ։

Բ. Թէ, Եթէ կը նշանակեն որ, քի. ինչպէս,

Գրեալ է թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ.
— Գրուած է որ միայն հացով չապրիր մարդ։

Գրաբարը առանց թէ շաղկապին ալ կ՚ըսուի, թէին տեղ մէջակէտ մը դնելով. Գրեալ է. ոչ հացիւ միայն կեցցէ մարդ։

Գ. Թէ, Եթէ, կը նշանակեն թէ որ, էյէր. ինչպէս,

Վայ է ինձ, եթէ ոչ աւետարանեցից. — Վայ է
ինծի թէ որ չաւետարանեմ։

Դ. Եթէ, կը նշանակէ չէ՛ նէ, եօխսա, հարցական խօսքերու մէջ կը գործածուի. ինչպէս,

Գաւազանա՞ւ եկից առ ձեզ եթէ սիրով. —Գաւազանո՞վ մը գամ ձեզի՞ չէ նէ սիրով:

Կամ շաղկապը անանկ երկու բառեր կը կապէ, որ երկուքէն մէկը միայն կը ցուցընէ. ինչպէս, Եղբայր կամ քոյր իցէ քո:

Իցէ բայը եզակի դրուեր է, վասն զի կամ եղբայրը տէր բայի է, կամ քոյրը, երկուքին մէկը:

Այս օրինակը հարցական դարձնել ուզենք, կամ շաղկապը չենք կրնար գործածել, պէտք է եթէ գործածենք անոր տեղ. ինչպէս, Եղբա՞յր իցէ քո եթէ քոյր:

Անոր ընդհակառակը. Գաւազանա՞ւ եկից առ ձեզ եթէ սիրով խօսքին հարցական ձեւը փոխել ուզենք, պիտի ըսենք. կամ գաւազանաւ եկից առ ձեզ, կամ սիրով:

345. Զի շաղկապն ալ քանի մը կերպ նշանակութեամբ կը գործածուի.

Ա. Զի կը նշանակէ քանզի, ինչու որ. և իրմէ ետքը եկած խօսքը իրմէ առաջ եղածին պատճառ ըլլալը կը ցուցընէ. ինչպէս,

Դուք յոյժ մոլորեալ էք, զի ոչ գիտէք զԳիրս և զզօրութիւնն Աստուծոյ. — Դուք խիստ մոլորած էք, ինչու որ Գիրքերն ու Աստուծոյ զօրութիւնը չէք գիտեր:

Ուրեմն երբ բանի մը համար ինչո՞ւ համար հարցումն ըլլայ, պատասխանն այս զի շաղկապով սկսելու է: Եթէ պատասխանը մէկ բառով պիտի ըլլայ, կամ պատճառական հոլով կը դրուի այն բառը, կամ վասն նախադրութիւնով սեռական հոլով:

Իսկ երբ մէկ բառով չլինար պատասխանը, այն ատեն ան խօսքը թէ շաղկապով կ'ըսկսի:

Ասկէ կը հետեւցնենք թէ թէ շաղկապն ալ յարաբերականի նման պաշտօն մ'ունի: Երբ բանի մը ինչպէս ըլլալը իմացնել ուզես, ու մէկ ածական բառով չկրնաս իմացնել, յարաբերական դերանունով՝ իր բայովը և խնդրովը ամբողջ խօսք մը կը շինես, որ ամէնը մէկէն ածականի մը ոյժ կ'ունենան. ինչպէս որ վերը յարաբերականին կանոններուն մէջ տեսնուեցաւ. այսպէս ալ երբ բայի մը խնդիրը՝ ինչ՞-համար հարցման մը պատասխանն ըլլայ, և այն պատասխանը չկրնաս բառով մը լմնցնել, ու քանի մը բառ դնել պէտք ըլլայ, թէ շաղկապով ամբողջ խօսք կը շարադրես:

Վերի օրինակը գրաբար կրնանք ըսել նաեւ այսպէս,

Դուք յոյժ մոլորեալ էք, վասն ոչ գիտելոյ ձեր ըզ-գիրս և զզօրութիւն Աստուծոյ:

Ինչպէս կը տեսնուի, վասն ոչ գիտելոյ ձեր բառերը է փոխանակ թէ ոչ գիտէք ըսելու: Բայց այս կերպը լաւ չէ, թէ շաղկապով բացատրութիւնն աւելի գործածական է:

Զայս ասաց ոչ թէ զաղքատաց ինչ փոյթ էր նմա, այլ թէ գող էր. — ասիկա ըսաւ չէ թէ աղքատներուն վրայ հոգ ընելուն համար, այլ գող ըլլալուն համար:

Այս մտքին համեմատ, գրաբար վասն նախդրութեամբ բառածները՝ կրնանք թէ շաղկապով դիմաւոր բայի դարձնել. ինչպէս,

Վասն ահին Հրէից. կրնանք ըսել նաև զի երկնչէին ի Հրէից:

Բ. Զի շաղկապը կը նշանակէ նաև որպէս զի. որ. և իրմէ ետքը եկող բայը ապառնի կամ ստորադասական կ'ուզէ. ինչպէս,

Ասա զի քարինքս այսոքիկ հաց լինիցին. — Ըսէ որ աս քարերը հաց ըլլան:

Վերը անորոշ դերբային (321) մէջ խօսեցանք թէ անորոշ դերբայը զի շաղկապով դիմաւոր բայի կը դառնայ. ահա զի շաղկապը այս երկրորդ նշանակութեամբ առնուածն է. ինչպէս վերի օրինակը կ'ըսուի նաև,

Ասա քարանցս այսոցիկ լինել հաց. փոխանակ՝ Ասա զի քարինքս այսոքիկ հաց լինիցին:

346. Զի շաղկապը, նոյնպէս քանզի շաղկապը իրենցմէ առաջ բառ չեն ընդունիր. և շաղկապն անգամ առանցմէ առաջ չկրնար դրուիլ, եթէ ոչ՝ նշանակութիւնը կը փոխէ:

Ե.– զի, և քանզի, որովհետև, այս երեք շաղկապներն ալ մէկ նշանակութիւն ունին, ինչու որ. թէպէտ պատճառ կը ցուցընեն, բայց իրենցմէ առաջ գտնուող խօսքին պատճառը չէ ցուցըցածնին, իրենցմէ ետքը եղած խօսքինն է. ինչպէս,

Որովհետև ի սակաւուն հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. — Ինչու որ քիչին մէջ հաւատարիմ ես, շատին վրայ դնեմ քեզ:

Որովհետևներն տեղը կրնանք և քանզի, կամ՝ և զի շաղկապները դնել, ամենևին խօսքին նշանակութիւնը չփոխուիր:

Ինչպէս օրինակէն կ'երևայ. քիչին մէջ հաւատարիմ ըլլալը (որ առաջ դրուած խօսքն է) շատի վրայ դրուելուն պատճառ կ'ըլլայ (որ ետև դրուած խօսքն է):

Եթէ ուզենք այս խօսքը չէ շաղկապով ըսել, պիտի ըսենք

Ի վերայ բազմաց կացուցից զքեզ, չէ ի սակաւուն հաւատարիմ ես ։

Պատճառը տեղ փոխածին պէս, պատճառ ցուցընող շաղկապն ալ կը փոխուի ։

Հեղինակաց գրուածոց մէջ չէ, քանզի շաղկապները և, քանզի, և չէ, որովհետեւ շաղկապներու տեղ գործածուած կայ ։

347 . Այս չէ, և քանզի, որովհետեւ շաղկապներէն ետքը գալու խօսքին սկիզբը վասն նախադրութիւնով ցուցական դերանունի մը սեռականը կը դրուի, կամ թէ ուստի բառը, որ սանկ տեղ գործածուինէ շաղկապ է . ինչպէս վերի օրինակը,

Որովհետեւ ի սակաւուն հաւատարիմ ես, վասն այնորիկ կամ ուստի ի վերայ բազմաց կացուցից զքեզ ։

Կրնայ ըլլալ որ վասն այնորիկ, ուստի բառերը ըսելեայն իմացուին ։

348 . Թէեւ, Թէպէտ և շաղկապները կը նշանակեն ֆարագա, իրենցմէ ետքը ուրիշ խօսք կ'ուզեն, այլ, Բայց, սակայն շաղկապներով. և մէյ մ'ալ գէթ, գոնեա շաղկապներով. ուր տեղ որ Թէեւ, Թէպէտ և շաղկապներէն ետքը եկած խօսքին բայը ապառնի չէ, այն խօսքին վրայ այլ, սակայն, Բայց շաղկապներէն մէկը կը դրուի, իսկ երբ ապառնի ըլլայ բայը, գէթ, գոնեա շաղկապները կը դրուին ան առեն. ինչպէս,

Թէեւ ոչ յիւրում եսեղ, գէթ ի կարգ ընկեցեալ լիցէ ։

Թէև ոչ յիւրում եւեգ, սակայն ի կարգ ըն-կեցեալ եղև:

Թէև յԱստուծոյ ոչ երկնչիմ, և ի մարդկանէ ոչ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն արարից նմա դատ:

Թէև յԱստուծոյ ոչ երկնչիմ, և ի մարդկանէ ոչ ամաչեմ, սակայն վասն աշխատ առնե-լոյ զիս այրւոյն առնեմ նմա դատ:

Գէթ, գոնէ, գոնեա դրուած են ապառնի բայերու քով, իսկ բայը ուրիշ եղանակի կամ ժամանակի փոխուելուն պէս՝ այլ, սակայն, բայց դրուեր են:

Թէև, թէպէտ և շաղկապներէն ետքը եկող խօսքին ապառնի բային վրայ ու մակբայ դրուելու ըլլայ, ան ատեն այլ, սակայն, բայց շաղ-կապները կը դրուին, և չէ թէ գէթ, գոնէ, գոնեա շաղկապները. ինչպէս,

Թէ և մեռանել հասանիցէ ընդ քեզ. այլ ըզ-քեզ ոչ ուրացայց:

349. Արդ շաղկապը հիմա կը նշանակէ.

Արդ ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. — Հիմա ես այս ազգը որո՞ւն նմանցնեմ:

Արդ մակբայ ալ է, և դարձեալ հիմա կը նշանակէ. ինչպէս,

Արդ յարեայց, ասէ տէր, արդ փառաւորե-ցայց. — Հիմա կ'ելլամ, կ'ըսէ Տէրը, հիմա կը փառաւորուիմ:

Արդը թէ շաղկապ և թէ մակբայ հիմա կը նշանակէ. սա տար-բերութեամբ որ, մակբայ եղած ատենը ժամանակ կը ցուցը-նէ. արդ յարեայց, արդը ելլելու ժամանակը կ'իմացընէ, որպէս թէ ժամանակ մխալ չանցնիր, բայց ատենը մխալ ելլայ: Շաղ-կապ եղած ատենը միայն խօսքին կարգը կը ցուցընէ, բան մը

պատմելու առեն խօսքը կը կտրէ, և նորէն խօսքին կարգը շարունակէ նէ՝ հիմա ըսելով կ՚սկսի. արդ ո՞ւր մնացեր էինք. հոս ժամանակի վրայ չէ խօսքը, հապա ընդմիջուած խօսք մը նորէն ձեռք կ՚առնու ։

350. Ապա շաղկապ է, և կը նշանակէ ուրեմն. ինչպէս,

Եթէ որդիք, ապա և ժառանգք. — Որ որդին են նէ, ուրեմն ժառանգներն են ։

Ապա, մակբայ է, և կը նշանակէ ետքը. ինչպէս,

Ապա եկն ի կողմանս Ասորւոց. — Ետքը Ասորւոց կողմերը եկաւ ։

Ապա շաղկապը ուրեմն, երբ շաղկապներով ալ կ՚ըսուի. ապա երբ, ապա ուրեմն ։

351. Իսկ շաղկապ է, և կը նշանակէ բայց, ալ. ինչպէս,

Իսկ Պետրոս ուրացաւ և ասէ. — Բայց Պետրոս, կամ Պետրոս ալ ուրացաւ և ըսաւ ։

Իսկ, դերանուններու հետ կը գործածուի և կը նշանակէ նոյն ինքն, ալ. ինչպէս,

Ի մեզ իսկ. — Նոյն ինքն մեզի, կամ մեզի ալ ։

Զքեզ իսկ. — Նոյն ինքն քեզ, կամ քեզ ալ ։

Նոքին իսկ. — Նոյն ինքն անոնք, կամ անոնք ալ ։

Իսկ, անուանի, բայի, մակբայի վրայ կը գործածուի բուն նշանակութեամբ. ինչպէս,

Ի մարդոյ իսկ օրինակ առ. — Բուն մարդէն օրինակ առ, կամ մարդէն ալ ։

Այն իսկ մեծ և զարմանալի է. — Ան ալ մեծ ու զարմանալի է ։

Գիտէր իսկ թէ պարտաւորեն զնա օրէնքն. — Գիտէր ալ որ օրէնքը զայն պարտաւոր կ՚ընեն ։

Արդարև խօլ ։

Բնաւ խօլ ։

352 · Մինչ նախադրութիւն է · և կը նշանակէ ինչուան · ինչպէս ,

Երթիցուք մինչ ցԲեթղեհէմ · — մինչ Բեթղեհէմ երթանք ։

Մինչ , շաղկապ է , և կը նշանակէ այնպէս , ան ատեն որ , և իրմէ ետքը գրեթէ միշտ աներևոյթ կ՚ուզէ · ինչպէս ,

Եւ գայ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն , մինչ հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա · — ժողովուրդը դարձեալ անոնց հետ կուգայ , այնպէս որ հաց անգամ չէին կրնար ուտել ։

353 · Եւ , շաղկապ է երբ ու կը նշանակէ · մակբայ է , երբ ալ կը նշանակէ · ինչպէս ,

Արա և զիս իբրև զմի ի վարձկանաց քոց · — զիս ալ քու վարձկաններէդ մէկն ըրէ ։

Ստոյգ և սա ընդ նմա էր · — ստոյգ աս ալ անոր հետ էր ։

354 · Իբրև , որպէս նախադրութիւն են · երբ իրենցմէ ետքը քովերնին հայցական հոլով խնդիր ունենան · ինչպէս ,

Իբրև զաղաւնի · — աղաւնիի պէս ։

Որպէս զշուշան · — շուշանի պէս ։

Իբրև , որպէս , շաղկապ են , երբ հայցական հոլով խնդիր չունենալով , ուրիշ հոլովով անուն ունենան քովերնին , և այն հոլովեալ անունին նման ուրիշ հոլովեալ անուն մ՚ալ գտնուի նոյն խօսքին մէջ · ինչպէս ,

Փախչիլ ի չարութենէ իբրև ի կատաղի գազանէ։
Չարութիւնը կատաղի գազանի կը նմանցընէ. ինչպէս որ կատաղի գազանէն փախչիլ պէտք է, անանկ ալ չարութենէն պէտք է փախչիլ։

Երկնչել ի կեղծաւորութենէ որպէս յանհաւատութենէ. — անհաւատութենէ վախնալու պէս կեղծաւորութենէ վախնալ։

355. Բան, նախադրութիւն է, երբ իրմէ ետքը հայցական հոլով խնդիր ունենայ քովը. ինչպէս,

Գեղեցիկ քան զքեզ. — քեզմէ գեղեցիկ։

Բան, շաղկապ է, երբ քովը հայցական հոլով խնդիր չունենալով, ուրիշ հոլովով անուն ունենայ, և այն հոլովեալ անուններն նման ուրիշ անուն մ'ալ գտնուի նոյն խօսքին մէջ. և ան ատեն կը նշանակէ քան թէ. ինչպէս,

Զգազանս սիրով քան բռնութեամբ սովոր են մարդիկ վարժել. — Մարդիկ սովոր են գազաններն աւելի սիրով վարժելու քան թէ բռնութեամբ։
Բռնութեամբ բառը քան շաղկապէն ետքը և անոր քովը դրուած ըլլալով քիչ կը ցուցընէ. սիրով բառն ալ որ շաղկապէն առաջ է, շատ ըլլալ կ'իմացնէ։

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ


## ՄԱՍՆ Ա. ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ 1

ԳԼՈՒԽ Ա. ԱՆՈՒՆ . . . . . . . . . . . . . . 1
Հոլովմունք անուանց . . . . . . . . . . 3
Արտուղի հոլովում ունեցող անունները . . 12
Գիտելիք հոլովմանց վրայ . . . . . . . 17
Որոշեալ Թուականներուն հոլովմունքը . . . 22
Անորոշ Թուականներուն հոլովմունքը . . . 26
ԳԼՈՒԽ Բ. ԴԵՐԱՆՈՒՆ . . . . . . . . . . . . 28
ԳԼՈՒԽ Գ. ՆԱԽԴԻՐ . . . . . . . . . . . . . 36
ԳԼՈՒԽ Դ. ԲԱՅ . . . . . . . . . . . . . . 40
Խոնարհմունք բայից . . . . . . . . . 41
Կրաւորական բայ . . . . . . . . . . . 60
Գիտելիք խոնարհմանց վրայ . . . . . . 67
Արտուղի խոնարհում ունեցող բայեր . . 72
ԳԼՈՒԽ Ե. ԴԵՐԲԱՅ . . . . . . . . . . . . . 99
ԳԼՈՒԽ Զ. ՄԱԿԲԱՅ . . . . . . . . . . . . . 107
ԳԼՈՒԽ Է. ՇԱՂԿԱՊ . . . . . . . . . . . . . 109
ԳԼՈՒԽ Ը. ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ . . . . . . . . . 109

## ՄԱՍՆ Բ. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ 110

ԳԼՈՒԽ Ա. ՏԷՐ ԲԱՅԻ ԵՒ ԲԱՅ . . . . . . . 111
ԳԼՈՒԽ Բ. ԽՆԴԻՐ ԵՒ ԽՆԴՐԱՌՈՒ . . . . . 118
Սեռի խնդիր . . . . . . . . . . . 119
Բնութեան խնդիր . . . . . . . . . 122
Խնդրի վրայ քանի մը գիտելիքներ . . . 143
Գոյական անուններու կամ բայանուններու խնդրառութիւնը . . . . . . . . 146
Ածական անուններու խնդրառութիւնը . . 147
Նախադրութիւններուն խնդրառութիւնը . 149
ԳԼՈՒԽ Գ. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՑԵԱԼ . 158

ԳԼՈՒԽ Դ․ ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ 164

ԳԼՈՒԽ Ե․ ԱԾԱԿԱՆ ԵՒ ԳՈՅԱԿԱՆ . . . . . 169

Որոշեալ թուականներուն համաձայնութիւնը 174

Անորոշ թուականներուն համաձայնութիւնը 177

Ածական գերանուններուն համաձայնութիւնը 180

ԳԼՈՒԽ Զ․ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱԲԵՐԵԱԼ 184

ԳԼՈՒԽ Է․ ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴ . . . . . . . . . 193

ԳԼՈՒԽ Ը․ ԴԵՐԲԱՅ . . . . . . . . . . . . 200

ԳԼՈՒԽ Թ․ ՄԱԿԲԱՅ . . . . . . . . . . . . 210

ԳԼՈՒԽ Ժ․ ՇԱՂԿԱՊ . . . . . . . . . . . . 214


BELEDIYE

1866 Eylül, 25

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi
*ERM1085*
255.07.02.01.06.00/

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ Ի. Տագաճրուլեանց ի լոյս ընծայած, կը ծախուի Հայ գրավաճառներուն քով գին 10 ղրուշ։

---

Նմանապէս Հայ գրավաճառներուն քով 10 ղրուշի կը ծախուին

ԴԱՍԱԳԻՐՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ՝ Ի. Տէպաճրուլեան, որ Ազգային Պատմութիւնը մինչև 1860 մայիս 24 Ազգային Սահմանադրական վաւերութեան հաստատութեան օրը կը հասնի. և ազգային վերջին անցքերն ալ կը պատմէ։ Վարժարանաց մէջ Ազգային Պատմութեան դասագիրք մ՚ըլլալու և հասարակ ընթերցանութեան համար ալ գործածուելու յարմարութիւն ունի։

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՋՃԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՁՆՈՒԳԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐԻ։ Հայոց Ազգին այս մեծ բարերարին կեանքը, մեծագործութիւնները և բազմաթիւ երախտիքները ու թէ՛ Տէրութեան և թէ՛ Ազգին մատուցած ծառայութիւնները, և ժամանակագրական կարգին մէջ ազգային գլխաւոր անցքերը կը պատմէ։